

ՊԵՏԱԿԱՆ ՍԱհԱՐԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Թ 111-112

Թ 111 115

ԵՐԱԿԱՆ

# ՈԹԵԼԼՈ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԱՎՐԸ

ՎԼՈՒՅԻԳՈՒՅՅՈՒՆ ՀԽՆԴ ՄԱՐՎԱՇՈՒՆ

~~82 A 3155~~  
~~E-55~~ ~~25 Aug 58~~  
~~Op 58~~  
~~19.3.6. 10.~~  
~~2/12~~

№ 111—118

№ 111—118

82  
3 - 53

ԵՎԱԿԻՐ

Ապրիլի 1 1986 թ.

# Ո Թ Ե Լ Լ Ո

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԱՎՐԸ

ՎՈՐԵՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԽՆԴ ՄՐԳՎԱՅՐԸ

Քաղաքացիության գովազնես ՄԱՍՆԱՅԱՆ

Բնագրի նամեմատությամբ խմբագրելու

A 3155



ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԴՐԱԳԱՄՐԱԿ  
ՏՐԱՎԵՐՏԱՆ

1986

Համեմատական խմբադրությունը կատարվում է Collins-ի Clear—  
Type Press-ի, London and Glasgow, հրատարակած Շեքսպիրի  
ամբողջական գործի վրա:



Տեխ. խմբ. Տ. Խաչվանեան  
Մրագրիչ Ա. Նահապեան



Գետմասի տպարան  
Դրամիլիս 8582. Գառվեր 942.  
Հռու. 3015. Տիման 10.000.

— ۳۹۸۷۰۴۹۶ —

۰ ۷ ۱ ۹ ۰

۴۶۱۶۸۹۱۴۹ ۸۰۴۰۰



Դ Ա Ր Ա Պ Ա Ն Զ Ե Ր

ՎԵՆԵՏԻԿԻ ԴԱՒԹՈԸ

ԲՐԱՅԱՆՑԻՈ, ԱՀԱԿԱԿՈՒԹ,

ԼՈՒՐԴՎԱՆՈ, ԲՐԱՅԱՆՑԽՈՅԻ յԵՂՔԱՅՐԸ.

ԼՈՒՐԴՎԱՆՈ, ԲՐԱՅԱՆՑԽՈՅԻ աղկականը.

ՈՒՆԱՆՈ, մի աղնվական մազր, Վենետիկի պետության ժառայության մեջ.

ԿԱՍՍԻՈ, նրա աեղակալը.

ՏԱԳՈ, նրա դըռչակիւը.

ՈՌՈԴԻՉՈ, մի վենետիկցի աղնվական.

ՄՈՒՏԱՆՈ, Ոթելոյի նախորդը Կիոնցունի կառավարության մեջ. ԽԵՂԿԱՏԱԿ, Ոթելոյի հոգան.

ԴԵՋԵՆՄՈՆՈ, ԲՐԱՅԱՆՑԽՈՅԻ դուռաշը և Ոթելոյի կինը.

ԽՄԻԼԻԱ, Յազոյի կինը.

ԲԻԱՆԴԱ, կառավարունին.

Սպաներ, աղնվականներ, պատղամաբերներ, յերաժիշտներ, սուր- հանդակի, նավասահի, սոլաստվորներ, և այլն:

Առաջին արարվոծը Վենետիկում, խողի մյուս արարվութնեցը Հիա- րոսի մի նավահանգստում՝ Պատմական ժամանակ. մայիս, 1870:



ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՎԱԽԱԿԱԲԻԿ, մի փողոց

Մանեւմ են Ռոդրիգոն յեկ Ցագոն

Ո-ՌԵՎԵՇ-Շ

Ինձ ել մի ասի, խիստ վշտացած եմ,  
Վոր հենց դժւ, Յազո, վոր իմ քսակը միշտ գործ ես  
ածել

Վորպես թելերը քոնը լինելին,  
Գետք և գիտնայիր այս բանի մասին:

ՅԱԴՈ

Դժնիսք, չես լսում,  
Յեթե յերբեք յես այդպիսի մի բան յերազած լինեմ  
Դարշիր ինձանից:

Ո-ՌԵՎԵՇ-Շ

Ինձ միշտ ասել ես՝ ատում ես նըան:

ՅԱԴՈ

Աքհամարհիր ինձ, յեթե չեմ ատում,  
Այս քաղաքացի լերեք մեծ մարդիկ անձամբ դիմում են,  
Յեվ գլխարկ հանած՝ խնդրում են, վոր նա իրըն տեղակալ  
Ինձ նշանակի. և յես յերդմում եմ գիտեմ իմ գինը.  
Յես արժանի եմ վոչ ալակաս տեղի:  
Ցայց նա, սիրելով իր դռուղությունն ու դիառամները,

Մի փքված ճառով, սաստիկ խճողված ռազմի վոճերով  
Փախուսա և տալիս և վերջի վերջո

Ուղիղ մերժում և բարեխոսներիս  
Շիրավ», ասում եւ, ընտրել իմ արդեն իմ տեղակալը,  
Յեվ ի՞նչ մարդ և դա:

Այս, ճշմարիտ, մի մեծ թվաբան,

Միքայել կանոնի անունով մեկը, իմ ֆլորենտացի,  
Վոր քիչ և մնացել հոգին ել ծախս մի ոիրուն կնոջ,  
Վոր յերբեք մի վաշտ չի տարել դաշտը,

Յեվ պատերազմի բաժանումներից այնքան բան գիտե,  
Վորքան մի մանող. թե վոչ գրքերից ուսած թեորիա,  
Մի բան, վորի վրա պատմումանավոր հյուպատոսները  
Նույնչափ հմտությամբ կարող են ճառել

Դատարկ խոսք միայն, գործնական վոչինչ,—

Ահա իր բոլոր սազմի արդեստը:

Յեվ, սակայն, պարձն, նաև նշանակվեց.

Այն ինչ լիս, վորի ապացույցները տեսել և աչքով  
Թե Հռոդոսում և թե Կիպրոսում,

Թե այլ աեղերում՝ հեթանոսական և քրիստոնյա՝

Գետք և տեղի տամ,

Գետք և յետ քաշվեմայդ «պարտ ու պահանջ» դրողի  
առաջ,

Մի վորեիցե համբիչ ձգողի,

Նա առոք իւառոք տեղակալ դառնա,

Այնինչ յես — Աստված չար աչքից պահե —

Մնամ զբոշակիր նորին Մավրության:

#### Ո-ՌԵՐԱԿՈ

Յերկինքը վկա, յես կդառնայի նրա դահիճը:

## ԱԱԴՅ

Ուրիշ ճար չկա, և դա անեծքն ե սպասարկության,  
Առաջ քաշումը միշտ ձեռք ե բերվում նամակով, սիրով,  
Վհչ թե հին կարգով,  
Յերբ ամեն յերկրորդ ժառանգ ե կանգնում ամեն  
առաջնիւ  
Այժմ ինքը դատիր, տեղիք ունիմ յես Մավրին սիրելու:

## Օ-ՌԵՐԵԴՈ

Ուրիմն լիս նրան չեյի հետեիւ

## ԱԱԴՅ

Ո՛, միամիտ կաց,  
Յես հետեւում իմ, վոր նրա գլխին իմ խաղս խաղամ.  
Ամենքս ել տեսեր չենք կարող լինել  
Վհչ ել ամեն տեր պարկեշտ ծառաներ միայն կունենա.  
Շատ պարագանաչ ծունկ ծռող ծառա տեսած կը լինես,  
Վոր սիրահարված ինքն իր փաղաքուշ ստրկությանը՝  
Որը մաշում ե, հենց իր տիրոջ ավանակի պես,  
Լոկ կերի համար, և յերբ ծերանում, դուրս ե վռնդվումէ  
Մարակել պետք ե այդ տեսակ պարկեշտ ծառայողներին ու  
Բայց կան ուրիշներ, վորոնք պաճուճված  
Հայտարարության տեսք ու ձեերով՝  
Մրտով իրենց են միայն նվիրված.  
Յեզ ծառայության ցույցեր անելով տերերի առաջ՝  
Նրանց մոտ աճում և ուռճանում են.  
Վերաբկուն իրենց աստառելուց յետ՝  
Իրենք իրենց են հարկատու դառնում:  
Այս մարդիկն ունեն մի վորոշ հոգի.  
Յես ել դրանցից հոմարում եմ ինձ:

Վորովինետե, ս' ըլլ,

Խնչղես վոր ճիշտ և Ռողբիգոն ես դու,

Նույնպես ել ճիշտ ե, վոր յեթե ինքըս Մավրը լինելի,

Չեյի հոժարի Յազո լինելու

Մառայելով նրան՝ ինձ եմ ծառայում:

Յերկինքը լինի իմ դատավորը,

Վհչ սիրուց, վհչ ել պարտազգացումից,

Այլ միայն դրսից այդպես թվալով՝ լոկ շահիս համար,

Յեթե արտաքին վարք ու արարքս, դրսի ձևերըս,

Իմ սրտի ընիկ ունակությունը և դեմքը ցույց տան:

Ուրեմն սպասիր, վոր շուտով սիրտս ափիս վրա պահեմ,

Վոր ճայերն ուտեն: Յես չեմ, ինչ վոր եմ:

#### Ո-ՈՒՐԵԴՈ

Խնչ բախտ կունենա այդ հաստաշուրթը, յեթե հաջողի:

#### ՅԱԿՈ

Կանչիք աղջկա հորը, զարթեցրու,

Ընկիր յետեից սևամորթ Մավրին,

Յեվ թունավորիք նրա վայելքը.

Խայտառակ արա փողոցների մեջ,

Դրգուիր աղջկա աղջականներին,

Թեե արգավանդ մի կլիմայի մեջ ապրում ե այժմ՝

Զարչարիք նրան լպիրշ ճանճերով,

Թեե հրճվանք ե նրա հրճվանքը,

Այնքան նեղացրու մորմոքումներով, վոր գույնը փոխի:

#### Ո-ՈՒՐԵԴՈ

Ահա հոր տունը, կանչեմ բարձրաձալն:

## ՅԱԴՐ

Կանչիք, այնպիսի սարսափի շեշտով և ահաղոչով,  
Ինչպես ճշում են դիշեր ժամանակ, անփույթ  
գիճակում,

Հրդեհ են տեսնում մած քաղաքներում:

## Ո-ՈՒՐԵԴՈ

Հո, հո, Բըաբանցիո, սինիոր Բըաբանցիմ:

## ՅԱԴՐ

Չարթիք, Բըաբանցիո,  
Հմ, հմ, գողեր, գողեր, գողեր,  
Մարիկ տուը տանը, և աղջկանը, և քսակներիդ,  
Դողեր, գողեր, գողեր:

Քրաբանցիոն յերեխում և վերեխում, պատմանի առաջ

## Ո-ՈՒՐԵԴՈ

Այդ լուչ սոսկալի գոռում գոչում ե. լուչ և պատմելւ

## Ո-ՈՒՐԵԴՈ

Սինինը, քո բոլոր անեցիք ներսն են:

## ՅԱԴՐ

Փակ են արդյոք քո դրսերը բոլոր:

## Ո-ՈՒՐԵԴՈ

Ինչմեւ եք հաբցնում:

## ՅԱԴՐ

Կողոպաված ես, սըր,  
Եհյ, հեյ, վեր կաց, շորերդ հագիք,  
Կոտրված ե սիրտդ, կորցբել իս արդեն կեսը քո հոգու,

Հիմա, հենց հիմա, հենց այս ըովելիս մի սեռուկ ծեր խոյ  
Զուգավորվում և ճերմակ զառիղ հետ, Վեր կաց, վեր  
կաց, վեր,  
իսկույն խռոացող քաղքցիներին զարթեցըու զանգով,  
թե վոչ Սատանան քեզ պապ կը դարձնի,  
վեր կաց, ասում եմ

## ՈՐԱՌԱՆՅԻՇ

Դժվիթ եք, լուչ եւ

## Ո-ՈՒՐԻԴԱ

Հարդելի սինիոր, ճանաչմամ ես ձայնըս:

## ՈՐԱՌԱՆՅԻՇ

Վաչ, մի ես դու

## Ո-ՈՒՐԻԴԱ

Մոդրիգոն եմ յես:

## ՈՐԱՌԱՆՅԻՇ

Չըլինես բարով:

Թեղ չեմ պատվիրել, վոր չղեգերես իմ զռան շուրջը.  
Չեմ ասել քեզ պարդ և պարկեցարեն,  
թե իմ աղջիկը քեզի համար չե. իսկ զու, կատաղած,  
Յեղ կերուխումից ու թունդ խմիչքից խելքդ կորցրած,  
Անզգամությամբ յեկել ես, վոր ինձ անհանգիստ անես:

## Ո-ՈՒՐԻԴԱ

Սինիոր, սինիոր, սինիոր...

## ՈՐԱՌԱՆՅԻՇ

Բայց լակ իմացիր,

Վոգիս ու դիրքս այնքան ուժ ունին, վոր այս ըուլուը  
Դառնացնեն քեզ:

Ո-ՌԵ-ՐԵ-Ջ-Ա

Բայց համբերություն, բարեսիրտ սինիոր:

ԱՐԱՐԱԿԻՆ

Ի՞նչ ես դուքս տալիս զողության մասին.

Սա վենետիկն է, տունս ամբար չեւ:

Ո-ՌԵ-ՐԵ-Դ-Ա

Հարգելիք Բըաբանցիո,

Պարզ, մաքուք հոգով յեկել եմ քեզ մոտ:

ԱԱ-Չ-Ա

Ո՞հ, դուք այն մարդկանցից եք, վոր աստծուն չեն պաշտում, յեթե սատանան այդ հրամայի նրանց, Վորովինետն մենք յեկել ենք ծառայություն մատուցելու ձեղ և դուք մեզ սրիկաներ եք կարծում, թույլ եք տալիս, վոր մի բարբարիկ ձի զուգավորվի ձեր զատեր հետ. ձեր սերունդը կը խրխնջա ձեղ դեմ, նժույդներ և մատակներ եք ուղում իրրե թոռն ու ծոռն:

ԱՐԱՐԱԿԻՆ

Ի՞նչ լիրք անզգամն ես դու:

ԱԱ-Գ-Ա

Եսս մի մարդ եմ, պարոն, վոր յեկել եմ քեզ ասելու թե ալս ըստեյիս Մադրը և ձեր դուստրը կազմում են մի գաղան յերկու մեջքով:

ԱՐԱՐԱԿԻՆ

Դու սրիկա եսն:

Իսկ դուք—սենատոր,

## ԹՐԱՎԱՅՐԱՅ

Դու սըա համար պատասխան կտաս,  
Ճանաչում եմ քեզ, Ռողը իդու:

## Ո-ՌԵՔԵՐ

Շատ լավ, պատրաստ եմ պատասխան տալու.  
Բայց աղաջում եմ, նախ ինձ այն ասեք,  
Արդյոք ձեր կամքմայլ և ձեր իմաստուն հավանու-  
թյամբն և  
—Խսչպես մասամբ ել այդպես և թվում—վոր ձեր աղ-  
ջիկը  
Գիշերվա կիսին, այս մեռելային անպատճի ժամին,  
Մի պարզ վարձկանի, մինավավարի հսկողության առակ՝  
Գնացել ընկել և մի գագաշ Մավրի ըիրտ ճանկերի մեջ:  
Յեթե տեղյակ եք և թույլ եք տվել,  
Ապա իսկառես մենք ձեր դեմ հանդուզն ու բիրտ ենք  
վարվել.

Բայց թե անգետ եք՝ բարեկը թության ամեն կանոնով  
Դուք իդուր եք մեղ այսպես անպատվում: Մի կարծեք  
թե յես,

Մարդավարության ամեն դգացում վոտնակոխ արած՝  
Յեկել եմ այստեղ ձեր հարդության հետ կատակ  
անելու:

Այս, ձեր դուռապը, յեթե ինքներդ չեք թույլատրել,  
Ասում եմ նորեն, սաստիկ անվայել մի դործ և արել՝  
Զոհաբերելով պարտականություն, բախտ, գեղեցիկու-  
թյուն

Մի թափառական և մշտապառւյտ ոտարականի,  
Վոր և այստեղ ե, և ամեն տեղ ե:  
Դուք ինքներդ ձեզ գոհացում տվեք,  
Ցեթև ձեր դուստրը իր սենյակումն ե, կամ թե տան  
մեջն ե,  
Ապա պետության արդարությանը հանձնեցեք դուք  
ինձ,  
Վոր ուղեցել եմ ձեզ այսպես խաբել:

#### ԱՐԱՐԱՆՅԻՒԹ

Կայծքար դարկեցեք,  
Հմ, մի մոմ տվեք, վեր կացրեք, հմ, հմ, իմ բոլոր  
մարդկանց,  
Այս պատահարը զբեթե նման ե տեսած յերադիո,  
Հավաալը դրան ճնշում ե հոգիս Հմ, լույս, լուս,  
հմ, հմ,  
Լույս, լույս, ասում եմ:

#### Հեռանում և լուսամուտից

##### ՕԱԴՈ

Քեզ մնաս բարով. պետք ե հեռանամ.  
Անհարմար բան ե, նույնիսկ մնասակար պաշտօնիս  
համար,  
Վոր Մավրի ընդդեմ ինձ վկա կանչեն, և յեթե մնամ,  
Անշուշտ կը կանչեն: Ինձ քաջ հայտնի ե, վոր պետու-  
թյունը  
Թեղետ և Մավրին այս բանի համար մի քիչ կը ստամե,  
Սակայն չի կարող նրան վրնդալ առանց վատանդի,  
Ցեզ այս նոր ծագած կիսլըսյան ռազմում  
Նա այն աստիճան անհրաժեշտ մարդ ե, վոր կրտկն  
ել ընկնեն,

Այն չափի մեկը չե՞ն կարող գտնել, վոր դործը վարի:  
Այս պատճառով ե, վոր թեև նրան այնպիս ատում եմ,  
ի՞նչպիս գժոխիքի չարչարանքները՝

**Սակայն ներկայի հարկից ստիպված՝**

Պետք ե, վոր սիրո դրոշ ու նշան ցուցադրեմ առայժմ,  
ի՞նչ վոր ցույց ե լոկ! Վորպիսզի նրան անվրեալ հանա-  
պիպիս,

Տար վոտի կանգնած խուզարկուներին Աղեղնավորը.  
Ծես ել նրա հետ այստեղ կը լինեմ. դեհ, միաս բարով:

Դուրս ե զնում: Բրաբանցիոն ծառաներով, վարոնի ջաներ  
ոմնեն, մտնում են

#### ԱՐՅԱՆԴԱԿՈ

Շատ ճիշտ ե յեղել անբախտությունս, այս, գնացել ե,  
Յեզ ի՞նչ ե մեռում իմ անպետք կյանքից՝ դառնություն  
միայն,

Ո՞ւր տեսար նրան: Ո՞հ, անբախտ աղջիկ. ասում ես,  
**Մավրի:**

Ո՞վ այսուհետև կուզի հայր լինել.

Ի՞նչպես իմացար, վոր նա եր: Վայ ինձ, խարեց ինձ:  
Ի՞նչ ասաց նա քեզ:

—Ելի ճրագներ, զարթեցրեք բոլոր աղջականներիս:

—Ամուսնացմել են, դռւ ի՞նչ ես կարծում:

#### Ո-ՌԵ-ՌԵ

**Ա.յն, ճշմարիս:**

#### ԱՐՅԱՆԴԱԿՈ

Վաղորմած յիրկինք: Ի՞նչպես դուրս գնաց: Դավանան  
արյուն,

Հայրեր, այսուհետ մի վատահանաք ձեր աղջիկներին,

Դատելով նրանց արտաքին ձևից,  
ԶԵ վոր, Ռոգըիզո, կախարդություն կա,  
Վորով կուսության և անմնղության բուն իսկ բնույթը  
կարող և յնպեսվել ԶԵս կարդացել այդ:

## Ա-ՊՐԵ-ՀԱ-ՅԱ

Այս, տեղ, ճիշտ եւ

## Ա-ՐԱ-ՐԱ-ՆԵ-ՅԱ

Յեղբորս ել կանչեք. յերանի թե քեզ տված լինելի.  
— Բող ձեզնից վոմանք մեկ կողմից դնան, վոմանք՝  
մյուս կողմից:  
— Դիտես թե վորաեղ կարող ենք բռնել նրան և Մավրին:

## Ա-ՊՐԵ-ՀԱ-ՅԱ

Կարծեմ թե Մավրին կարող եմ գանել թե բարեհաճեք  
Բավական մարդիկ վերցնել ձեզ հետ և ինձ հետեւ:

## Ա-ՐԱ-ՐԱ-ՆԵ-ՅԱ

Դու առաջ անցիր, ամեն տան առաջ ձայն կտամ հիմաւ  
Նույնիսկ շատերին յես հրամայելու իրավունք ունեմ:  
— Զենք առեք, հո, հո.

Յեվ դիշերապահ մի քանի սպա վեր առեք ձեզ հետ:  
Շարժվիր, Ռոգըիզո, քո նեղությունը կը փոխարինեմ:

Դուրս և զնում

## ՏԵՍԱՐԱՆ ՑԵՐԿՐՈՐԴ

Մի ուրիշ փողոց Վենետիկում

Մանում են Օքելլոն, Ցագոն յեվ սպասավորները  
ցանեցով

## Ա-Զ-Յ-Ո

Ռազմի արհեստում մարդ սպանել եմ,  
Բայց համարում եմ, զոր խղճի դեմ և

Կանխամտածված սպանությունը։  
Զարություն չունեմ, վոր ինձ յերբեմըն սպահակար լինի։  
Իննը կամ տասը անգամ մտածել եմ սուրըս խրել  
Նրա այստեղը՝ կողուկը տակը։

## ՈԹԵԱՅԱ

Ավելի լավ ե՝ այդպես չես արել

## ՅԱԴԱ

Սակայն նա այնպես մեծ մեծ եր խռոսում,  
Լիրը ու գրգռիչ բաներ եր ասում ձեր հարգության  
դեմ  
Շատ դժվարությամբ տարա յես նրանու թայց, խնդրեմ,  
տեր իմ,  
Դուք հաստատապես ամուսնացած եք։  
Վստահ յեղեք, վոր այդ մագնիֆիկոն շատ սիրված  
մարդ ե,  
Ցեղ նրա ձայնը իր ազդեցությամբ, կը կնակ զորենդ ե,  
Վորքան Դուքսինը. նա ձեղ իրարուց բաժանել կտա,  
Կամ այնքան արգելք և մորմոցումներ կը սարգե ձեղ  
դեմ,  
Վորքան որենքը, հետն ել իր բոլոր կարողությունը  
Նրան ուժ կտա։

## ՈԹԵԱՅԱ

Թհղ ուղածն անե,  
Սինիորության իմ ծառայությունը  
Նրա գանգատի ձայնը կը խեղդե։ Դեռ ովետի գիտնալ,  
—թայց յերբ գիտենամ թե պարծենալը ողատիվ ե բե-  
րում,  
Անշուշտ կը հայտնեմ, վոր յես ել կյանքս և եռւթյունս

Պարտ ևմ զահանիստ նախահայրերի,  
Յեվ արժանիքներս իրավունք կտան ինձ հավակնելու  
Այս բարձր դիրքին, վորին, հասել եմ Խմացից, Յագհ,  
Վար յեթե աղնիով Դեղընմոնայի սերը Ամիներ՝  
Չեյի ուղենա ողարփակել անտուն և աղատ կյանքըս  
Նորեն յեղուվ կամ շրջապատօվ՝  
Թէկուղ անսահման ծովերի դնով,  
Բալլը, նայի՞ր,  
Ի՞նչ լույսեր են, ուսո՞ դնով մեղ են գալիս:

## ՅԱԴՐ

Ի՞նից ովեր կացած հայրը և նրա բարեկամները,  
Լավագույնն ե, զոր ներս գնաք, տեր իմ:

## ՈԹԵԱԼԸ

Վոչ յես. ինձ պետք ե զանեն հենց այստեղ:  
Թող արժանիքներս և աստիճանըս և մաքուր հոգիս  
Հանդիսացնեն այնպես, ինչպես կամ նրանք են արդյոք:

## ՅԱԴՐ

Հանուն Յանոսի այդպես չեմ կարծում:

Մենում են Կառա իոն յեվ մի նանի սպաներ՝ շահերվ

## ՈԹԵԱԼԸ

Դուքսի ծառաներն ու իմ աեղակմլըս,  
Բարեկամներըս, զիշերովա բարին ձեղ վըս լինի,  
Ի՞նչ լուր եք բերում:

## ԿԱՌԱՐ

Զորապետ, Դուքսը բարեում ե ձեղ,  
Ոքելլո—2

Յեզ ցանկանում են ձեր խիստ շուտափույթ ներկայուն  
թյունը,  
Հենց այս բռպելիս:

ԱԹՍՍԻՆ

Ի՞նչ ե պատահել,

ԿԱՍՍԻՐ

Յեմ գուշակում եմ մի բան կիսլրոսից.

Շատ հրատապ բան ե, ռազմանավերը այս զիշեր և յեզ  
Տանելու տարբեր մարդ են ուղարկել իրար յետերց.  
Անատորներից շատերին արդեն քնից զարթեցրել  
Յեզ ժողովել ևն Դքսի պալատում.

Զեղ ել շատ սաստիկ մինտուած են յեղել,

Բայց չգանելով ձեր ընակարանում՝

Անատը յերեք զանազան խմբեր վոաի և հանել,

Վոր ձեղ վորոնեն:

ԱԹՍՍԻՆ

Հայ վոր դժւք զաաք:

ԴԵհ, գնամ առնել յերկու բառ ասեմ և գնամ՝ ձեղ հետ  
Գուրս և զնում

ԿԱՍՍԻՐ

Դըոշակիը, այստեղ նա լինչ ե անում:

ԱՅՆ

Նը՞ս, նա այս զիշեր մի ցամաքային նայ և ձեռք ձդել-  
Յեթե հաստատվի, վոր իր գրավելն ոբինավոր և  
Բախտը բացվել եւ:

ԿԱՍՍԻՐ

Զեմ հասկանում:

ԱՐԴՅՈՒՆ

**Ամուսնացել եւ**

ԿԱՍՏԵՐԸ

**Ո՞ւ հիմա**

Որելլան վերամտնում ե

ՕԱՉԱ

**Ամուսնացել ե... ըհ՛ը, զորապետ, զնո՞ւմ եք հիմա**

ՈԹ-ՆԻ, Լ, Օ

**Միասին գնանք:**

ԿԱԼՍԱԽԸ

**Նոր խաւճր ել յեկավ ձեղ վորոնելու:**

Մանում են Բարաքանցինն, Ռոդրիգոնն, և ու աները յեզիր սոյան անունը շաներով

ՕԱԳՈ

**Ա՛հ, Բրաբանցիոն ե, զորապետ, զգեւյշ,**  
**Գոլիս և նա վատ մտադրությունով:**

ՈԹ-ՆԻ, Լ, Օ

**Հոլլա, կանդնեցեք:**

Ո-ՈՒ-ՐԵ-ՎԱ

**Մինիոր, Մայքրըն եւ****Զորկեցեց զբան, դռւ գնդ աղջաղակ:**

Ցերկու կողմերն ել սերեն են նաևում

ՕԱԳՈ

**Դժւ ես, Ռողբիզո, յեկ առաջ, պարոն, յես քեզ համար եմ:**

Հետ դըեք ձեր այդ փայլուն սրերը,

Զի ցողը նրանց կժանդեցնիւ—Բարեբար Սինիոր,  
Դուք ձեր աարիքով պետք ե հրամայեք, քան ձեր

դենքելուով:

ԹՐԱՌԱՆՅԱՅԻ

Ո՞վ դու անմըդ գող, մւր ես թագցըել գու իմ աղջկան,  
Ո՞վ դու անիծյալ, թովել ես նրան.

Հարց կտամ ամեն խելք ունեցողին,

Վոր լեթե թովքի շղթաների մեջ կապված չլիներ՝  
ինչպես կարող եր մի քնքուշ աղջիկ, սիրուն, յերջանիկ,  
Յեվ ամուսնության այնքան հակառակ, վոր խույս եր  
առաջիս

**Մեր ազգի հարուստ, գանգրահեր, սիրված**

պատանիներից,

Փախչել հոր տնից՝ ծաղքի առարկա դառնալու համար,  
Յեզ իրեն նետել քեզ պես եակի մըոտ կրծքի վրա,

Պետք ե զարհուրել, վհչ թե զմայլել

Աշխարհն ինձ դատե, թե ակներև չե,

Վոր դործ ես դըել իմ աղջկա վրա անարդ դյութանքներ,  
Յեզ նրա քնքուշ անմնդությունը մոլորեցրել ես

Հոգին թուլացնող հանքանյութերով ու դեղորայքով:

Պետք ե այդ մասին խնդիր հարուցեմ,

Շատ հավանական ե մտքի համար շոշափելի եւ

Ուրեմն բռնում ե կապում եմ քեզ իրը յեղծանող,

Իրը կիրառող չար արվեստների, վոր արդելված են,

Բանեցնք սրան, յեթե դիմադրի

Բոնի զաղեցնք իր կյանքի դնով:

## ՈԹ-ԵԱՅ.Ա

Չհոք մի բարձրացնեք, թե դհւք, իմ մարդիկ, թե  
դհւք, մյուսներդւ  
Ծեթե իմ գերը սուր քաշել լինեք՝  
Կը զիտենայի առանց դրդողիւ  
—Ռուր եք ուղում դամ ձեր մնղադրանքին պատասխան  
տալու,

## ԵՐԱԲԱՆԻՑԻ

Բանստ, մինչև որենքն ու դատարանի կարդ ու կանոնը  
մեղ ատյան կանչեն պատասխան տալու

## ՈԹ-ԵԱՅ.Ա

Յեթե հնազանդեմ՝ Դուքսը թնչ կասի,  
Վլորի ծառաներն կանդնած են կողքիս,  
Վլոր մի պետական մեծ գործի համար ինձ իր մոտ տանեն:

## ՍՊԱ

Իրավ ե, սինիոր, Դուքսը հենց հիմա ժողով ե նստել,  
Զեր Ազնվությանն ել յիտեիցը մարդ են ուղարկել:

## ԵՐԱԲԱՆԻՑԻ

Դուքսը ժողովի, այս ել զիշերվալա այս տարաժամին,  
Բերեք այս մարդուն, իմ դատը սին չե, թե Դուքսը,  
ինքը

Թե պաշտոնակից իմ յիդրայրներից յուրաքանչյուրը  
Զեն կարող չզգալ այս նախատինքը, վորազես իրենցը,  
Յեթե մննք թույլ առնք այսպիսի գործեր աղատ

անցկենան՝  
Աղա ստրուկներ և հեթանոսներ կը լինեն մեր գլխին  
պետական մարդիկ:  
Դուքս են գնում

ՏԵՍԱՐԱՆ ՑԵՐՌՈՐԴ

Վեհականիկ, մի ժողովի դահլիճ

Գուշոք յեզ սենառեները, մի սնդանի տուքը նոսած են,  
սպաները սպասարկում են

ԴԱՒՔԸ

Այս լուրերի մեջ ներդաշնակությունն չըկա, վոր նշանց  
արժեքավորին

Ա. ՍԵՆԱՏՈՐ

Ճիշտ ե, իրար հետ անհամեմատ են:  
Իմ նամակները ասում են միայն հարյուր յոթը նավ:

ԴԱՒՔԸ

Իսկ իմ նամակում՝ հարյուր քառասուն:

Բ. ՍԵՆԱՏՈՐ

Իսկ իմ նամակում ճիշտ յերկու հարյուրությունն ե,  
Բայց թեև դրանք ճշգրիտ թվերով իրար չեն բռնում,  
— թեև այն դեղքերում, յերբ միակ հիմքը  
յենթադրությունն ե,  
Հաճախ թվերը տարբեր են լինում — սակայն բոլորն ել  
Հասատառում են այն, թե հենց Թըրքական մինավատորմիդ  
Այժմ արշավում ե Կիպրոսի վրա:

ԴԱՒՔԸ

Այս, բավական խելքի մոտ ե դա.

Յես ել չեմ ուղօսմ հանգստացնել ինձ թվի սխալուի,  
Այլ հավանական եմ եական կետին ահավոր կերպուի,

ՆԱՌԱՋԱՅԻ (Ծ Հ Ա Բ Տ)

ՀԵՐ, ՀԵՐ, ՀԵՐ, ՀԵՐ, ՀԵՐ

Ա. ՍՊՈՒ

Ոռորանանդակ յեկալ ռազմանավերից:

ՄԵՆՈՒՄ և նավասին

ԴՐԱԽԱ

Ի՞նչ և պատահել:

ՆԱՌԱՋԱՅԻ

Թռւքը նավատարմը Հռոդոս և գնում:

Այս և պատվիրել սինիոր Անգելոն հայտնել

աշետության:

ԴՐԱԽԱ

Ի՞նչ կասեք դուք այս նոր փոփոխության:

Ա. ՍԵՆԱՑՅՈՐ

Կարելի բան չե,

Բանականության վարեն փորձով ըմբռնելի չե.

Մի խարկանք և զա՝ մեր ուշը թյուր կողմ թեքելու  
համար,

Ցերը հաշիվ անենք թե Թռւքի համար

կիսորսը վորքան կարեոր կետ և, և նորին խորհենք՝

թե նրա համար նա դժու թե միայն ավելի արժե,

Բան թե Հառասար, այլ և ավելի հեշտ և իլելը,

Բանի վոր այգովես գոտեպնոված չե ռազմի զրահով,

Այլ բոլորովին զուրկ և այն լուր սպառապենից,

Վորով Հռոդոսը ամբապնդված ե, յերբ մտածենք այս  
Զենք կարող կարծել, թե Թուրքը այնքան անհմուտ ե,  
վոր

Վերջինը թողնե ինչ վոր իր համար առաջնակարգն ե՝  
Անտես անելով հեշտ ու զանավետ մի ձեռնարկություն  
Դիմագրավելով անշահ մի վտանգ

#### ԴՐԱԳԱ

ՎԻՃ, կասկած չկա, Հռոդոս չեն գնում:

Ա. ՍՊԱ

Ահա հաօնում են ավելի լուրեր:

Մտնում ե մի սուրբանդակ

#### ՍՈՒՐՃԱՆԴԱԿ

Վաղորմած տեր իմ և շնորհալի,  
Ոսմանցիները ուղղվելով դեղի Հռոդոս կղղին՝  
Այստեղ միացան մի այլ պահեստի նավատարմի հետ:

Ա. ՍԵՆԱՏՈՐ

Այն, այդպես ել յես կարծում եյի, քանի՛ քո հաշվով:

#### ՍՈՒՐՃԱՆԴԱԿ

Յերեսուն, և այժմ նոր յեկած ճամբով վերադառնալով  
Գարդ արշավում են կիպրոսի վրա:  
Սինիոր Մոնտանոն, ձեր հայլատարին, քաջարի ծառան  
Խոնարհ հարդանքով հայտնում ե ձեզ այս,  
Յեկ աղաչում ե հավատաք նրան:

## ԴՐԱԿԱՆ

Պարզ և ուրեմն կիսդրոս են դնում,  
Մարկոս Լուկիանոս քաղաքումն և այժմ:

Ա. ՍԵՆԱՏՈՐ

Ֆլորանս և այժմ:

## ԴՐԱԿԱՆ

Գրիբ մեր կողմից, արագ ուղարկիր:

Ա. ՍԵՆԱՏՈՐ

Ահա Բըարանցին և արի Մավրու:

Մանում են Բրաբացին, Որելլոն, Յազոն, Ռոդրիզոն  
յիշ սպաները

## ԴՐԱԿԱՆ

Արի, կտրիճ Ոթելլո, պետք և անհապաղ ձեզ գործի դը-  
նենք,

Ըսդհանուր թշնամի՝ Ոսմանցու ընդդեմ:

Բրաբանցինին

Յետ ձեզ չտեսա, բարօվ եք յեկել, դուք աղնիվ Սինիոր,  
Այս դիշեր ստոտիկ կարոտ ենք յեղել ձեր խորհուրդ-  
ներին  
Յեղ աջակցության:

## ՌԵԱՌԱՆՑԻԱ

Յեղ յես ել ձերին, Ձերդ բարձրություն,

Ներեցնք, խնդրենք. ո՞հչ պաշտօնս և ինձ անկողնից

Կանել:

ՎՀՀ վորենե լուր,

ՎՀՀ ել հանրության հոգուն ե ինձ տանջում,

Այլ անձնական ցավս այնպես ամեն թումբ

հաղթահարել ե,

Վոր ինձ լափում ե և կուլ ե տալիս ամեն ուրիշ ցավ,

Յեվ ինք մոռմ ե այնպես ինչպես կա,

#### ԴՐԱԿԱՆԱՑՈՒՅԹ

Ի՞նչ է պատահել:

#### ԱՐԱԽԱՆԱՑՈՒՅԹ

Ո՛, իմ դուստրը, ո՛, իմ դուստրը...

ԴՐԱԿԱՆԱՑՈՒՅԹ ՍԵՆԱՏՈՐՆԵՐ

Մեռմծ:

#### ԱՐԱԽԱՆԱՑՈՒՅԹ

Այս, ինձ համար,

Խարել են նրան, ինձնից գողացել

Յեվ կախարդանքով, սուտ բժիշկներից գնած զեղերով

Գլխից հանել են. զի բնությունը

Վոչ կույր լինելով, վոչ պահասազոր, վոչ ել խելքից կաղ

Զեր կարող այսքան այլաղակորեն ճամբից խռոռուել

Առանց դյութանքի:

#### ԴՐԱԿԱՆԱՑՈՒՅԹ

Ո՛վ վոր ել լինի, վոր արդ պիղծ ձևով

Խլած ե խելքը ձեր աղջկանից և նրան՝ ձեղնից,

Պետք ե ինքները կարդաք որենքի արյունոտ դիրքը՝

Իր գաժան տառով և ձեր օնփական մեկնարանությամբ,

Թեկուղ հարազատ վորդիս ել լինի ձեզ դեմ մեղանչած:

ԱՐԱՐԱՏԻՆԻՑ

Ենոքհակալ եմ Ձեր Բարձրությունից,  
Ահա այս մարդը, ալս Մագրը, վորին, թվում ե,  
Հասառէկ հրամանով, պիտական վորոշ դործերի համար,  
Դանչել եք այստեղ:

ԴԱՒԹՈ ՅԵԿ ԸՆՆԱՏՈՐՆԵՐ

Մենք շատ ցավում ենք ալու բանի համար:

ԴԱՒԹՈ

(Ո թ և լ լ ո ւ ի 6)

Խալ դուք ձեր կողմից թնչ կառեք սրան:

ԱՐԱՐԱՏԻՆԻՑ

Վոչինչ, յեթե դոչ այս բանն այսպես եւ

ԱՅ-ԵԼ, 6

Ամենահղոր, լրջմիտ, խոհական, հարդու սինիորներ,  
Եմ ամենազնիվ և բարեհաճու իշխանավորներ,  
Վոր այս ծնը մարդու աղջկան փախցրել եմ  
Ամենամիջտն եւ, բայց ճիշտ եւ նաև  
Վոր լիս նրա հետ ամուսնացել եմ.

Մանրությունն ահա և լրբությունը իմ այս հանցանքի,  
Վոր այս չափն ունի  
Յեվ վաչ ուժնելի։ Յես կողիտ եմ իմ խոսակցության մեջ  
Յեվ խաղաղության փափկասուն վոճով քիչ եմորհնակած,  
Վորովինետն իմ այս բաղակները այն որից ի վեր  
Յոթնամյա ծուծով հյութավորվել են,

Մինչև ինն լուսին սրանից առաջ՝ նրանք վարել են  
իրենց ամենից սիրասուն գործը վրանապատ դաշտում,  
Թիշ բանի մասին կարող եմ խոսել այս մեծ աշխարհից,  
Յեթե վոչ միայն ինչ վոր կապ ունի

Կովի, խռովության, ճարպիկության հետ.

Յեվ այդ պատճառով դժվար թե դատիս վայելչություն  
տամ

Ինքըս լինելով իմ ջատագով:

Բայց ձեր բարեշնորհ համբերությամբ

Մի պարզ, անպանույն պատմություն կանեմ  
Իմ սիրո բոլոր ընթացքի մասին,

Թե ինչ դեղերով, ինչ դյութանքներով,

Ինչ վոգեկոչով և ինչ զորավոր մոգականությամբ  
—ինչպես ինձ այստեղ ամբաստանում են—

Դրավել եմ յես նրա աղջկան:

#### ԱՐԱՐԱՆՑԻՑ

Մի կույս, վոր յերեք հանդունդն չի յեղել,

Վոգով այնքան հեղ և այնքան խաղաղ,

Վոր իր բաղձանքը շիկնում եր իր վրա,

Հակառակ ընության, տարիքի, յերկրի, ըարի անունի,

Յեվ ամեն բանի, գա սիրահարվի ալսպիսի բանի,

Վորին նայելուց անգամ վախում եր:

Հաշմ ե այն խելքը և պակասավոր, վոր խոստովանի

Թե կատարյալը կարող ե սխալիքի

Բնության բոլոր կանոնների դեմ, և պետք ե տարվի

Դժոխքի նենգմիտ, մութ գործնականում

Փնտում թե ինչու այս պետք ելինի:

Ուստի պնդում, եմ թե նա անպատճառ

Արյան վրա ազդող ինչ վոր խառնուրդով

կամ թե վորեն կախարդ մի ռամպով  
Ազգել և վրան:

#### ԴՐԱԿՈՆ

Պնդել այս բանը՝ ունու ապացույց չե.  
Ավելի հաստատ, ակնհայտ փաստեր պետք են նրա դեմ,  
Քան թե այդպիսի թեթև վարկածներ, թույլ  
յերկույթներ  
Յեկառութական յենթագրություններ:

#### Ա. ՄԵԽԱՏԻՐ

Ոթելլի, խոսիր,  
Իրամզ ե արդյոք, զոր բանազատող, ծուռ միջոցներով  
Յենթարկել ես քեզ սերը այս կույսի և թունավորել  
Թե զբան հասել ես լոկ աղեքսանքով  
Յեկ այնպես ուղիղ հարցապնդումով՝  
Վարպիսին հոգին. ուղղում ե հոգուն:

#### ՌԱՅԵԼՈ

Ազաշում եմ ձեզ,  
Մարդ ուղարկեցնք աիկնոջը ըերեն Ազեղնավորից,  
Յեկ իր հոր առաջ թող ինքը խօսի իմ անձի մասին.  
Յեթե զուք դատեք նրա ասածից, վոր յես կեզտու եմ,  
Ազա վհչ միտյն յնտ առեք ինձնից ձեր այս ոլտշտոնը  
Յեկ ինձ շնորհած վստահությունը,  
Այլ վճիռը ձեր թող մինչև անզամ  
Ընկնի կյանքիս վրա:

#### ԴՐԱԿՈՆ

Բերեցնք այստեղ Դեղումոնալին:

Յագի, տար սըրանց, տեղը լավ գիտես:

Յաղոն յեփ սպասավարները դուրս են զնում

Յեվ մինչև նա դա՝

Նույն ճշմարտությամբ, վորակես թե արյանս

մոլորությունները

Յերկնքի առաջ խոստովանեյի, նույն ճշմարտությամբ  
Յես ձեր լրջամիտ ունկնդրությանը կը ներկայացնեմ,  
Թե բնչ միջոցով այս չքնաղ աղջկա սիրուը շտիւնցի,  
Յեզ նա ել՝ իմըս:

### ԴԱԽՎՈ

Ասմ, Ոթելին:

Հայրն ինձ սիրում եր՝ հաճախ հրավիրում,

Հարցեր եր տալիս իմ կյանքի բոլոր ալատմաւթյան մասին,

Տարի առ տարի — ուստերազմները, պաշարում, բախտեր,

Վոր անցել եյի Յես ել ծայրից ծայր, իմ մանկությունից

Մինչև այն ըստեն, վոր նա լառմ եր, բոլորը սահպաւմ

Յել պատմել տալիս Յես պատմում եյի

Խիստ աղետալի ծախորդություններ,

Սրտաշարժ դեպքեր հեղեղի միջից և լայն զաշտերից,

Յերբ մաղ եր մնացել, վոր սպաննվեյի խրամի վրա,

Ինչպես անդգամ թշնամու ձեռքը յես դերի ընկա,

Ինչպես ծախվեցի, ինչպես փրկանքով ինձ յետ գնեցի,

Յեվ այլ գրվադներ իմ ճամբորդական պատմու-

թյուններից —

Մեծ քարանձավիներ, չոր անապատներ,  
Բիբրա քարանձավներ, ժայռեր ու սարեր,  
Վոլորնց գլխները յերկինք են դպչում,  
Պատկերում եյի որանք բոլորը.

Յեղ կաննիբաշներ, իրար միս ուսող,  
Անթրոպօֆագներ և մառնին, վերանց դիմներն աճում են  
Ռւսերից Երջանք Յեղ Դեղամահու և ակվում եր լսել,  
Բայց առն ուրները շան նաև նրան դուրս եյին  
Լանչում,

Յեղ նա, չառպափ կարգի դնելով՝ վերազառնում եր,  
Յեղ իմ յերաքերը անհապ ականջով ուշում եր կարծես:  
Այս նկատելով՝ մի անգամ հարժակ մի ժամ ընտրեցի,  
Յեղ այսուհետո ու վար թախանձագիշե և նզրե ինձանից  
Պատմել իմ բոյոր պահպախությունը,  
Վորից բիւրման բայ եր միուցն, ոյն և վոչ ուշով:  
Համաձայն Ազգի և հանախ նրանից  
Արցունք կուպեշին պատմենավ բուժուի և յն

հարվածները,

Վոր կըել եւ յաջ չահպությունը Յերը ավարտեցի՝  
Նա տվեց ինձ իմ ցավերի համար  
Հառաչանքների մի ամբողջ աշխարհ,  
Նա յերդում արավ — զարմանալի ե, խիստ զարմանալի,  
Շատ սրաւաշարժ ե, անչմնի սրաւաշարժ —  
Նա ցանկացավ, վոր լսած չլիներ, ցանկացավ նաև, —  
Վոր յերկինք նրան այլովիսի մի մարդ ստեղծած լիներ,  
Ինձ շնորհակալ յեղավ և աղաչեց ինձ,  
Վոր յեթե ունեմ յես մի բարեկամ, վոր սիրում ե իրեն,  
Ուսուցեմ նրան թե ինչողիս պատմե իմ պատմությունը,  
Ինք նրան կը սիրի Այս թելառքանքից յես ել խոսեցի:

Նա բօւռն սիրեց ինձ իմ անցկածը վտանգների  
համար՝

Յես սիրեցի նրան, վոր կարեկցում եր իմ  
տանջանքներին.

Ահա այն միակ կախարդությունը, վոր գործ եմ դրեւ  
Ահա գալիս եւ տիկինը և թող ինքը վկային

Մանում են Դեզդեմոնան, Յազան յեզ սայասավորները

#### ԴՐԱԽ

Այդ պատմությունը և իմ աղջկան կարող եր գրավել,  
Բարե Թրաքանցիո, ընդունեցեք այս մատիլած խնդիրը  
Իբրև լավագույն արամադրությամբ.

Մարդեկ ավելի ի գործ են ածում  
Կոտրած զենքերը, քան դատարկ ձեռքը:

#### ԱՐԱԽԵՏԻՈ

Խնդրում եմ լսեք իմ դստեր խոսքը:

Թե խոստովանի, վոր կես տարփածուն հենց ինքն և  
յեղել,

Կործանվի գլուխո, յեթե այս մարդուն իզուր մեղադրեմ,  
Դեպ ալտեղ արբ, աղնիվ որիորդ,

Արդյոք հարդելի այս ժողովի մեջ

Ո՞վ ե այն անձը, վորին ավելի պարտ ես հնազանդել:

#### ԴԵՐԴԱՄԱՆ

Իմ աղնիվ հայր,

Տեսնում եմ այստեղ յես մի բաժանված ։

Պարտականություն

Եյանքս և կրթությունս ձեզ եմ պարտական.

Եյանքս և կրթությունս ինձ ուսուցել են պատվել,  
Հարդել ձեզ,

Դուք եք տերը իմ պարտականության  
Յեզ մինչև այստեղ յես ձեր աղջիկն եմ.  
Սակայն և ահա իմ ամուսինը,  
Յեզ հենց այն չափով, վորչափ իմ մայրը ձեզ եք  
անձնվեր,

Զեղ իք հորիցը գերազասելով, յես ել հայտնում եմ,  
Վոր անձնվեր եմ Մավրին, իմ տիրոջ,

#### ԹՐԱՌԱՆՑԻԱ

Լավ, Աստված քեզ հետո Յես վերջացըի,  
Զերդ բարձրություն, այժմ պետական գործերին  
անցնենք,  
Լավ եք մի դավակ վորդեղբեյի, քան թե սա լիներ.  
Այստեղ արի, Մավր, իմ բոլոր սրտով տալիս եմ  
քեզ այն,

Վոր յեթե ինքոդ առած չլինեյիր  
Իմ բոլոր սրտով ովկտի մերժելին Թո շնորհիվ, գոհար,  
Հոգով ուրախ եմ, վոր քեղնից բացի ել դավակ չունիմ,  
Թե վոչ փախուստը ինձ կը հարկադրեր բռնակալ  
դառնալ,  
Յեզ կապանք ունել նրանց վոտներին Վերջացըի,  
տեր իմ:

#### ԴԱԽՏՈ

Թույլ ալեք, վոր յես ձեր կողմից խոսեմ և մի  
վճիռ տամ,  
Վոր իրրե սանդուղք կամ թե պատվանդան  
Այս սիրող դույդին թույլ տա բարձրանալ դմոլի ձեզ  
շնորհը  
Յերբ ճար չի մնում և հույսը հատնում,

Վատթարի գալով՝ վատն և վերջանում  
Յեվ յեթե վողբանք անցած մի չարիք՝  
Նոր չարիքների մենք դուռ կը բանանք.  
Ինչ վոր չենք կարող մենք բախտից փրկել,  
Համբերությունը նրա վնասը ծաղը և դարձնում,  
Դոզունի տերը յերբ վոր ժպտում և  
Ելի նա գողից մի բան կորզում ե.  
Ով շոայլում և ապարդյուն կսկիծ՝  
Նա գողանում և սեփական ինչքից:

## ՌՐԱԲԱՆՑԻՈ

Թող Թուրքը ուրեմն Կիպրոսը գրավե.  
Ի՞նչ հոգ, քանի վոր ժպտալը բավ և.  
Այն մարդն և կարող այդ վճիռները լոռությամբ տանել,  
Ով մորմոք չունի, յեթե վոչ ցավից սփոփանք հանել.  
Բայց ով փոխ առնե համբերությունից, վոր առ  
տերության,  
Նա պետք և տոկա թե ցավին և թե միթթարության,  
Այն վճիռները, շաքարացնելու կամ դառնացնելու,  
Յերկու կողմից ել ուժեղ լինելով՝ շատ յերկդիմի են,  
Բայց և բառերը միշտ ել բառեր են, դա ինձ հայտնի չե,  
Ճղմված սիրտը ականջից բուժվի,  
Բայց յես խնդրում եմ անցնել պետության կարևոր  
գործին:

## ԴԱՒՅՍ

Թուրքը ահեղ պատրաստությամբ արշավում և Կիպրոսի  
վրա. Ոթելին, տեղի ամրություններն ամենից  
լավ քեզ են ծանոթ, և թեղետ այնտեղ մենք մեծ  
ընդունակություններով մի կուսակալ ունենք,

բայց հասարակաց կարծիքը, ներգործությունների վեհապետուհին, ավելի մեծ զստահությամբ քեզ ե տալիս իր ձայնը, պետք եւ ուրեմն զիջանես նոր ձեռք բերած բախտությամբ քիչ նսեմացնել այս տաժանելի արկածալից արշավանքով:

## ՕԹ-ՆԵՐԸ

Ո՞վ ակնածելի տեր սենատորներ,  
Բոնապետական սովորությունը  
Դարձրել եւ ռազմի քար ու պողպատե բիրտ անկողինը  
Ինձ համար փափուկ՝ յերեք հեղ ջոկած փետրեն  
մահնելի պես.  
Խոստովանում եմ, որը յես դանում եմ չարքաշության  
մեջ  
Բնածին ավյուն և զվարթություն։ Յես հանձն եմ  
առնում  
Վարել նոր ծաղած այս պատերազմը Տաճիկների դեմ.  
Յեվ խոնարհելով ձեր պատկառելի ժողովի առաջ  
Խնդրում եմ հարմար մի տնօրինություն իմ կնոջ  
համար,  
Յեվ պարտ ու պատշաճ կարգադրություններ դիրքի  
ու ծախքի,  
Տան և ծառայի, ինչպիս վայել եւ նըա կենցաղին։

## ԴԱՒՔԸ

Յեթե հոժոր ես՝ թող հոր մոտ մնաւ

## ՌՐԱՋԱՆՅԱ

Յես չեմ ընդունում

## ՕԹ-ՆԵՐԸ

Վիչ ել յես, տեր իմ։

## ԴԵՐԴԱՇՈՒԱ.

Վհչ ել յես, տնր իմ, յես ել չեմ ուզում այնտեղ քնակվել  
Յեզ իմ հոր աչքին միշտ յերևալով՝ բարկացնել նրան։  
Մ'զ զողորմած Դուքս, իմ աղաջանքին բարեհաճորեն  
Աւակըն շնորհեցեք, և թող ձեր ձայնը ինձ պաշտպան  
կանգնի,

Յեզ ոգնության գա իմ պարզմը տության։

## ԴԱՌԱՑՍ

Ամփ, Դեղդեմոնա, ի՞նչ ես ցանկանում։

## ԴԵՐԴԱՇՈՒԱ.

Թէ Ոթելլոյին սիրեցի՝ հետը ապրելու համար,  
Հախուռն ընթացքըս և փոթորկահույզ ճակատագիրըս  
Թհղ փողահարեն արար աշխարհին։  
Սիրուս ամուսնուս ըուն իսկ արհեստին սիրահարված և.  
Յես Ոթելլոյի մտքի մեջ տեսա նրա յերեսը  
Յեզ նրա փառքին և հերոսական շնորհներին և,  
Վոր նվիրել եմ հոգիս և բախարս։  
Այսպես ուրիմնե, աղնիվ պարոններ,  
Թէ ինձ տուն թողնեն, խաղաղության մեջ ապրող  
ցեցի պես,

Յեզ ամուսինըս պատերազմ գնա՝

Այս, վօրի համար նրան սիրում եմ, կը խլվի ինձնից,  
Յեզ դեռ պետք ե ինձ նրա ղգալի բացակայության  
Զրկանքը կրելու Թողեք վօր յերթամ յես ել նրա հետ։

## ՕԹԵԼԼՈ

Թողեք ստանա նա ձեր ձայները։

Յերկինքը վկա, յես այս չեմ խնդրում իմ ախորժակի  
հաղուբողի համար,

Վհչ ել իմ տապի կամ իմ սեփական բավականության,  
— Յերիտասարդի վառ տենչերն իմ մեջ անցած լինելով —  
Այլ նըա հոգուն սիրով դոհացում բախշելու համար。  
Յեզի յերկինքը պաշտպան ձեր հոգիներին, յեթե գուք  
կարծեք՝

Թե յես կարող ես ձեր ինձ վատահած մեծ ու լուրջ  
գործը

Անխնամ թողնել՝ յերբ նա դա ինձ հետո  
Վհչ, լերը թևազլոր Կուպիդի թեթև ու խոլ խաղերը,  
Մաքի և գործի ձեռքերը փակեն միշտ մեղկության մեջ,  
Յեզի ժամանցները պաշտոնս աղարտեն կամ թե  
խաթարեն՝

Թհնդ տանտիկիններն իմ սաղավարտից մի տապակ  
շինեն,  
Յեզի տմեն տեսակ անարդ ու նվաստ ձախորդու —  
թյուններ

Խուժեն խմբովին համբավիս վրա:

#### ԴՐԱՆՔԱ

Թհնդ լինի այդպես, ինչպես դուք ձեր մեջ հարմար  
համարեք՝

Նըա մնալու կամ գնալու մասին:  
Գործը կանչում ե, արագությունը թհնդ պատասխանեւ:

Ա. ՍԵՆԱՏՈՐ

Պետք եւ այս դիշեր ճանապարհ ընկնեք:

#### ՈՒՆԿԱՐ

Իմ բոլոր որառվեւ:

## ԴՐԱՆՔԱ

Առավոտ իննին պետք և մենք կրկին ժողովվինք  
այստեղ:

Ոթելի, մի սպա թող յետև մնա,  
Նա քեզ կը բերե մեր հրովարտակը և ամեն այլ ինչ,  
Վոր քո պաշտօնի և գիրքի համար կարեռը լինի:

## ՈԹԵԼԱ

Յեթե կը հաճի Զեր բարձրությունը, իմ դրոշակերը.  
Նա վատահելի և պարկեցա մարդ ե.  
Նըրան եմ հանձնում բերել կնոջը և ամեն այլ բան,  
Վոր ձեր շնորհը արժան համարե յետեիցս զրկել:

## ԴՐԱՆՔԱ

Լավ, այլպես լինի: Բարի գիշեր ձեղ յուրաքանչյուրիդ:  
Բրաբանցիոյին

Յեզ, աղնիվ սինիոր, յեթե ըստինքյան հերոսությունը  
Զուրկ չե հմայիչ գեղեցկությունից՝  
Ապա ձեր փեսան, այն, ավելի սիրուն ե, քան սեւ:

## Ա. ՄԵՆԱԳՈՐ

Գնաս բարով, քաջ Մավր, բախտավոր արա  
Դեղդեմոնային:

## ԱՐԱՐԱՏԱԿՈՒ

Աչք պահիք վըրան, յեթե աչք ունիս տեսնելու համար  
Հերը խարեց, Մավր, քեզ ել կը խարեն:

Դուքս, սենառուները յեզ սպաները դուրս են զնում:

## ԱՐԱ1,1,0

Կյանքըս զբագլ նրա հավատարմության:  
 Ո՞վ պարկեցտ Յագո, Դեղդեմոնայիս քեզ եմ թողնելու  
 ենդընմ, թող կինըդ ծառայի նրան,  
 Յեզ դու բեր նրանց ճիշտ հարմար պահին:  
 ՅԵԼ, Դեղդեմոնա, մեկ ժամ ունիմ դեռ, վոր պետք ե  
քեզ հետ  
 Նվիրիմ սիրո և աան դործերի և կարգադրության:  
 Պետք ե հարմարվենք հանգամանքներին:

Ա ր ե լ լ ո ն յ ե զ Դ ե զ դ ե մ ո ն ա ն զ ն ո ւ մ ե ն

## Ո-ՈՂԵՌԵԴՈ

Յագի:

## ՅԱԴԱ

Ի՞նչ ես ասում, հոգիս:

## Ո-ՈՂԵՌԵԴՈ

Ի՞նչ ես կարծում, ի՞նչ պետք ե անեմ:

## ՅԱԴԱ

Դնա անկողին և քնիր:

## Ո-ՈՂԵՌԵԴՈ

Դնում եմ ուղղակի ջուրն ընկնեմ:

## ՅԱԴԱ

Յեթե այդ տեսակ բան անեա, զբանից հետո ել քեզ  
 չեմ սիրի, դու թեթևողիկ ազնվական:

## Ո-ՌԵՐԱԴՐ

Թեթևովիկություն և ապրել, յերբ ապրելը տանջանք ե, յերբ մահը մեր բժիշկն ե, այն ժամանակ մենք կունենանք մեռնելու դեղատումս:

## ՅԱԿՈ

Մ թշվառական, յես աշխարհի վրա նայել եմ չորս անգամ՝ յոթը տարի և այն օրից ի վեր, վոր կարողացել եմ շահը զանազանել վնասից՝ չեմ դառել մի մարդ, վոր գիտենա թե ինչպես պետք ե սիրել ինքզինքը: Նախքան ասելը թե՝ ինձ ջուրը կը գցեմ մի գինեա արժող համի սիրո համար՝ յես կը փոխեյի իմ մարդկությունը մի շանագլուխ կապիկի հետ:

## Ո-ՌԵՐԱԴՐ

Ի՞նչ կարող եմ անել յես խոստովանում եմ, վոր իմ ամոթն ե այսպես սիրահարվել բայց իմ առաքինությունն անզոր ե ուղղել այն:

## ՅԱԿՈ

Առաքինություն, մի չնչին թուղ. մեղանից և կախված թե մենք այսպես ենք թե այնպիս: Մեր մարմինները սլարտեղներ են, վարոնց մեր կամքերը պարտիզաններ են, այնպիս վոր, յեթե մենք ուղենանք յեղինճ տնկել, կամ ցանել հաղար, ցանել մշտիկ, խոտաబել ուրց, կամ՝ մի տեսակ կանաչեղեն հալթայթել և կամ այդ շատ տեսակներով, և կամ ծուլությամբ թողնել անբերբի կամ

մեր աշխատությամբ պարարտացնել, այս, կարողությունը և ուղղիչ հեղինակությունը մեր մեջն եւ թեթև մեր կյանքերի հավասարակշռությունը խոհականության մի նժար չօւնենար՝ զդայականության կշեռքին հակազդելու համար, մեր բնությունների արլունը և ստորությունը պիտի առաջնորդեցին մեղ դեպի ամենից այլանդակ վախճաններ, բայց մենք ունենք խոհականություն զովացնելու մեր կատաղի ցանկությունները, մեր մարմական խայթոցները և մեր անսանձ կրքերը, ուրիշն յես հետեւցնում եմ, վոր ինչ վոր դու սեր ևս կոչում, մի աղանդ եւ կամ մի ընձյուղ:

#### Ա-ԱԴՐԵՆԱ

Դա ճիշտ չեւ

#### ՅԱԴՐ

Դա միայն արյան առվիանքն ե կամ կամքի թուլությունը: Խելքդ գլուխդ ըեր, մարդ յեղիք, ջուրն ընկնեմ... կատուններին և կույր շան լակուններին են ջուրը զցում: Յես հայտարարել եմ ինձ քո ըարենկամը և յես խոստավանում եմ, վոր հյուսված եմ քո արժանիքին ամուր և ընդմիշտ դիմացկուն կապերով: Յերբեք չեյի կարող քեզ այնպես ոգտակար լինել, ինչպես այժմ: Փող դիմ քո քսակում, հետեւիր կոփններին, ծածկիք դեմքդ խարդախ մորուքով, ասում եմ վոր դիմ քո քսակում: Զի կարող պատահել, վոր Դեղղեմոնան յերկար շարունակի սիրել Մավրին,—վոր դիմ քո քսակում,—զհչ ել Մավրը՝ Դեղղեմոնային, մի կատաղի-

սկիզբ եր դա և դու կտեսնես համապատասխան  
մի բաժանում,—միայն փող դիր քո քսակում,—  
այս Մավրերը փոփոխամիտ են,—լցրնւ քսակդ փո-  
ղով,—այն կերակուրը, վոր նրան այժմ ալնքան ա-  
նուշանամ ե, ինչպես յեղջերենին, շուտով նրան  
պետք ե լինի այնքան դառն, վորքան դառն  
դրմնին (colocquintida). Դեղդմոնան յերեսը պետք  
դարձնե յերիտասարդի, յերը նա կշտանա նրա  
մտարմնից՝ պիտի գտնի նա իր ընտրության սը-  
խալը, Դեղդմոնան պիտի ցանկանա փոփոխու-  
թյուն, պիտի ցանկանա, ուրեմն փող դիր քո  
քսակում։ Յեթե զու կարիք ունենաս դատապար-  
տել քեզ՝ արա այդ ավելի նուրբ ձևով, քան ջուրն  
ընկնելով։ Փող դիզիր ինչքան կարող ես. յեթե  
սուրբ պսակը և մի դյուրաբեկ ուխտ մի թափառա-  
կան բարբարոսի և վեհափափուկ վենետիկություն  
միջև՝ չափազանց դժվար չլինի իմ ճարպիկության  
համար և դժոխքի բոլոր ցեցերի համար, զունրան  
կըմբաշխնես, ուրեմն փող դիզիր։ Զուրն ընկնելու  
մի ախտ, ճանապարհը մաքուր ե. վորոնիր ավելի  
հաճույքդ կատարելով կախվել, քան թե ջուրն  
ընկնել ու գնալ առանց նրան։

## ՊՈՂԵԳԻԱ

Յերե բախտս փորձեմ, կարող եմ հույս դնել քո վըա։

## ՕՐԴՆԵ

Վաստահիր ինձ, —գնա, փառ վաստակիր! —Յես հաճախ  
քեզ ասել եմ և յես նորից և նորից առում եմ,

լես ատում եմ Մավրին—իմ պատճառը սրտում և  
արժատացած, քոնն ել պակաս պատճառ չունի։  
Այսենք միացյալ մեր վրեժի մեջ նրա հանդեպ  
Յեթե կարողանաս նրան կավատացնել՝ հաճույք  
կը պատճառես քնզ, իսկ ինձ՝ զվարճություն։  
Ժամանակի արգանդում կան շատ դեպքեր, վորոնք  
պիտի ծնվեն։ Անդրադարձիր, գնա, փռդ վաստա-  
կիքը վաղն ավելին կը խոսենք այս մասին։ Ցաե-  
սությունն

Ո-ՌԵՒԴՅԱՆ

**Մ”ւը պիտի հանդիպենք վաղն առավատ։**

ՕԱԴՈ

**Իմ կացարանում։**

Ո-ՌԵՒԴՅԱՆ

Կանուխ քեզ հետ կը լինեմ։

ՕԱԴՈ

Գնա, գնաս բարով։ Լսմամ ես, Ռոդրիգոն,

Ո-ՌԵՒԴՅԱՆ

**Ի՞նչ ես ասում։**

ՕԱԴՈ

Ջուրն ընկնելու մասին ալլես վհչ մի խոսք, լսմամ ես։

Ո-ՌԵՒԴՅԱՆ

**Միտքս փոխեցի, գնում եմ բոլոր կարվածներս ծախեմ։**

Գնում ե

Միշտ իմ հիմարս քսակս եմ շինուած.

Այլապես պիտի սըբագղծելի իմ շահած խելքըս

Ցեթե վատնեյի իմ ժամանակը այսպես թռչունին՝

Ցեթե վոչ միայն իմ զվարճության և շահի համար:

Ատում եմ Մավրին: Հեռվում կարծում են,

Վոր նա սեփական սավաններիս մեջ պաշտոնս ե վարել-

Չեմ իմանում թե՝ ճիշտ ե այդ արդյոք.

Բայց լոկ այդ տեսակ կասկածի համար՝

Կը վարվեյի լես, վորպես թե իրոք վստահ լինեյի:

Նա հարզում ե ինձ. ուրեմն ավելի դյուրավ կարող եմ

Մտադրածներըս գործ դնել վրան:

Ասենք՝ Կասսիոն մի մաքուր մարդ ե,

Լավ, տեսնեմ հիմա—խլեմ պաշտոնը,

Լարեմ իմ կամքը կրկին ու կրկին սրիկալությամբ:

Ինչպես, ինչպես թե... մի լավ մտածեմ...

Քիչ հետո Մավրի ականջը յեղծեմ:

Վորպես թե Կասսիոն շատ ե մտերիմ իրա կնոջ հետ:

Նա այնպիսի գեմք և հաճոյական վարք ու բարք ունի,

Վոր կասկածանքի շուտ տեղիք կտա,

Զեված ե կանանց փճացնելու—

Մավրը մի ազատ և բաց բնություն ունեցող մարդ է,

Վոր մարդկանց անկեղծ կարծում ե յերբ վոր այդպես  
են թվում,

Ցեվ կարելի ե այնպիս քնքշությամբ քթիցը քաշ տալ,

Ինչպես եղերին:

Գտամ: Հղացվեց: Դժոխք ու գիշեր

Ճիպաղ զավակին լույս աշխարհ բերեն:

Զուր և սըրըսկում վառ Արջի վրա  
Անշարժ բեղեռի պահապաններին մարելու համար։  
Եերբեք չեմ տեսել կատաղած ծովի այսպիսի հուզում։

#### ՄՈԽՏԱՆՈ

Յեթե թուրքական նավատորմիդը չի ապաստանել  
Մի ծովախորշում, նա ընկղմված եւ,  
Անկարելի յե սրան դիմանար

Մնում ե մի յերկուու ազնվական

Գ. ԱԶՆՎԱԿԱՆ

Ուրախ լուր, տղերք, կոփիս ավարտվեց։  
Թուռն փոթորիկն այնպես ծեծել ե սսմանցիներին,  
Վոր նպատակը նրանց կասել ե։  
Վենետիկից յեկած փառահեղ մի նավ  
Տեսել ե նրանց մեծագույն մասի նավարեկումը  
Յեկ քայշայումը։

#### ՄՈԽՏԱՆՈ

Ի՞նչպես, ճիշտ ե այս։

Ա. ԱՀՆՎԱԿԱՆ

Նավը հենց այստեղ խարիսխ ե ձգել  
Մի վերոնացի, Միքայել Կասսիոն,  
Վոր տեղակալն ե մեր քաջառազմիկ Մավր Ոթելլոյի  
Դուրս յեկավ ցամաք, բայց Մավրը՝ ինքը ծովի վրա  
յե  
Յեկ լիակատար իրավունքներով գալիս ե Կիոլոս։

#### ՄՈԽՏԱՆՈ

Ահ, շատ ուրախ եմ. նա արժանավոր կառավարիչ եւ

Դ. ԱԶԿԵՊ.ԱՆԱՆ.

Բայց հենց նույն կասսիոն, թեև խիստ հրճված  
թուրքերի կրած կորսափ վրա՝ շատ մտահոգ ե,  
Յեզ աղօթում ե, վոր Մավրն անփորձանք, ապահով  
լինի,  
Մի շատ կատաղի և վատ փոթորկում նրանք զատվել են:

ՄՈԽՏԱՆՈ

Աստված պահպանե. յես ծառայել եմ նրա ձեռքի տակ,  
Մարդը իսկ և իսկ դինփորի նման հրամայել գիտե՛  
Դնանք ծովեղերք, թե յեկած նաւիը տեսնելու համար,  
թե սպասելով քաջ Ոթելոյին՝ աչք ձգենք հեռուն՝  
Մինչև ուր ծովը և լուրի յերկինքը միախառնվում են:

Դ. ԱԶԿԵՊ.ԱՆԱՆ.

Լինի, արդուս անենք. ամեն մի բողե մի նոր յեկող  
կար:

ՄՏՆՈՒՄ և ԿԱՍՍԻՆ

ԿԱՍՍԱՆ

Ծնորհակալութ յուն այս պատերազմիկ կղզու քաջերիդ,  
Վոր Ոթելոյին հարդում եք արդպես.  
Ո՞հ, յերկինքը թող ոլաշտպանե նրան տարերքի  
ընդդեմ,

Յես կորցրի նրան շատ վտանգալից մի ծովի վրա:

ՄՈԽՏԱՆՈ

Լայլ և իր նավը

ԿԱՍՍԱՆ

Այս, իր նավը ամուր շինված ե,  
Յեզ նավաղեաը իր զործին հմուտ և փորձառու ե.

Ուստի հույսներս, թեև մահամերձ,  
Բայց պետք ե բուժվեն:

ԴՐԱՆՑ

Նմվ, նմվ, նմվ...

Մենում ե մի չորրորդ ազնվական

ԿԱՍՏԻԾ

Ի՞նչ աղմուկ ե այս:

Ռ. ԱԶԽԱՎԱԿԱՆ

Ամբողջ քաղաքը իստառ դատարկ է,  
Մովի յեղերքին կանգնած են շարքեր ժողովրդական՝  
Յեվ գոչում են «առագաստ, առաջաստ»:

ԿԱՍՏԻԾ

Միբուլս ասում ե թե կուսակալն եւ

Գրափշ քննանորներ

Ռ. ԱԶԽԱՎԱԿԱՆ

Պատվի վողջույնն ե, վոր արձակում են,  
Անպայման դրանք բարեկամներ են:

ԿԱՍՏԻԾ

Խնդրում եմ, պարոն, առաջ գնացեք,  
Յեվ լուր տվեք մեզ թե յեկողն ով եւ:

Ռ. ԱԶԽԱՎԱԿԱՆ

Խսկույն:

ՄԱՆՅԱՆ

Բարի տեղակալ, ձեր դորապետը ամուսնացմած եւ:

## ԿԱՍՏՈՒՈ

Բարեբախտորեն Նա տիրացել և մի չքնաղ կույսի,  
Վոր վեր և ամեն նկարագրումից և խոլ համբավից,  
Մեկը, վոր վեր և տոհմադիրների սուտ ներըողներից,  
Յեվ ստեղծության նախահիմնական պահումանքի  
մեջ

Հոգնեցըրել և իրեն՝ աբարչին:

Վերամենում և յեկուր աղնվականը

Ի՞նչ կա. Թվ յեկավ

## Բ. ԱԶԴՎԱԿԱՆ

Մի վամբն Յազո, զբոշակիրը մեր զորապետի:

## ԿԱՍՏՈՒՈ

Յեվ լոնչպիս հաջող և շուտ և հասել.

Փոթորիկները, ուռած ծովիրը և զոր հողմնը,

Ակսավորված սուր խարակները, դիզված խիճերը,

Անմեղ նավերի այդ գարանամուտ դավաճանները,

Կարծես գեղնցկի գիտակցությունով՝

Իրենց մահացու ընույթը լըել

Յեվ աստվածային Դեղդնմօնալին ճամբա յեն տվեր

Վոր անփորձ անցնի:

## ՄՈՒՏԱՆ

Ի՞նչ աղջիկ և դա:

## ԿԱՍՏՈՒՈ

Ճենց այն աղջիկը, վոր ասում եյի,

Մեր զորապետի զորապետուհին,

Վորին քաջ Յազոն պետք և ուղեկցեր,

Յեվ վարի գալը յոթ որ կանխել և մեր յենթագրածը,

Հզնը Յուտղիտեր, պահապան յեղիք մեր Ոթելլոյին,  
Յեզ զորեղ շնչովդ ուռեցըու նըա առագաստները,  
Վոր իր պերճ նավով որհնություն բերե այս  
ծովախորչին,  
Սիրով բարախի Դեղդեմոնայի բաղաւկների մեջ,  
Նոր բոցով հրահրե մեր հանգած վոգին,  
Յեզ բերկըանք բերե ամբողջ կիալըսին: Յեզ  
ահավասիկ:

Մենում են Դեզէն մոնան, Նմիլիան, Յազոն, Առողրիզոն  
շեմ սպասավորները

Նավի գտնձն ե ալն, վոր ցամաք իջավ:  
Կիալըսի մտրդիկ, ծնկաչոք նրան հյուրընկալեցեք.  
—Վողջույն քեզ, տիկին, յերկնային շնորհն  
Քո առաջ, յետև և ամեն կողմուն՝ շրջապատե քեզ:

#### ԴԵՐԴԱՇՄՈՒԱԾ

Շնորհակալ եմ, քաջարի կասսիո,  
Ի՞նչ բարի լուրեր կարող ես ինձ տալ իմ տիրոջ  
մասին:

#### ԿԱՍՍԻՈ

Դեռ տեղ չի հասել, ուրիշ լուր չունիմ,  
Թե վոչ, վոր լաղ ե, և ինքն ել շուտով այստեղ կը  
լինի:

#### ԴԵՐԴԱՇՄՈՒԱԾ

Բայց վախենում եմ, ինչողեւ պատահեց, վոր իրաբ  
կոբցըիք:

## ԿԱՍՏՈՒ

Շոգի և յերկնի ահեղ պայքարն եր, վոր մեղ բաժանեց:  
Բայց լսեցնք, առադմստ

## ԴՐՈՒՅ

Առադմստ, առադմստ...

Թնդանորներ դրախ

Բ. ԱԶԻՎԱԿՈՆ

Բարե են տալիս մեր միջնաբերդից,  
Հավանորեն դա մի բարեկամ եւ

## ԿԱՍՏՈՒ

Դնա և լուր բեր

Բ. ազնվականը զնում է

Գալուստ բարի, սիրելի Յազու,

Եմիլիային

Բարե ձեղ, տիկինու

Բայց չնեղանաս իմ ազատ վարքից, սիրելի Յազու,

Իմ ծնունդն ե, վոր տալիս ե ինձ այս

Բաղաքաղարության հանդուգն ձեզ:

Համբաւում և Եմիլիային

## ԸԱԴՈ

Յեթե նա տա ձեղ իր շրթունքները  
Այսքան, վորքան ինձ լնդուն ե տալիս,  
Շնում կը կշունաք:

ԴՆՁԴՆՄՈՒԱ

Ամիսդ, նա չունի իսկ վճչ մի լեզու

## ՅԱԴՐ

Խսկապես շատ շմտու

Այս ել միշտ յերբ յես քնել եմ ուղում:

Տիկին, ձեր առաջ մի քիչ ձեր լեզուն սրտումն ե

դնում

Յեվ ստքի մեջն ե իմ դեմ մըթմըթում:

## ՆՄԻԼԻԱ

Այդպես խռովելու փոքր պատճառ ունեք:

## ՅԱԴՐ

Հավ, լավ. պատկերներ եք դուք դուրսը, դանդակներ՝  
Ձեր դահլիճներում, վայրի կատաներ

խոհանոցներում,

Յեվ սրբեր եք դուք վիրավորելիս,

Դեվեր եք, յերբ դուք եք վիրավորվում,

Դերասաններ եք տանտիկնության մեջ,

Յեվ տանտիկիններ՝ անկողիններում:

## ԴԵԳԴԵՄՈՒԱ

**Թհւէ քեզ, չարախոս!**

## ՅԱԴՐ

Ճիշտ ե, թուրք դառնամ թե սուտ եմ ասում:

Քնից դարթնում եք խաղալու համար,

Անկողին մանում գործելու համար:

## ՆՄԻԼԻԱ

Դուք չեք դրելու իմ ներբողականը:

## ՅԱԴՐ

**Մի թողնեք գրեմ:**

## ԴԵՐԴՆԵՄՈՒԱ.

Յեթե ուզեյիր ինձ դովասանել՝ լինչ կը գըեյէր:

-ՅԱԴ-

Ո՛, ազնիվ տիկին, այդպիսի բանի դուք ինձ մի  
մղեք,

Թես մի վոչինչ եմ թե քննադատ չեմ:

## ԴԵՐԴՆԵՄՈՒԱ.

Արի, փորձ արա: Մարդ ուզարկեցի՞ր նավահանգիստը:

-ՅԱԴ-

Այս, տիրուհի:

## ԴԵՐԴՆԵՄՈՒԱ.

Սրառով ուրախ չեմ: Ծածկում եմ ինչ վոր յես

իսկապես եմ:

Քվալով այլ կերպու ծեսնենք թե ինչպես կը գովեիր  
ինձ:

-ՅԱԴ-

Դրա վրա յմժ, բայց իմ գյուտերը

Այնպես են պոկվում խելապատակից՝

Ինչպես սոսինձը թաղիքի վրայից,

Ուզեղ, ամեն բան պոկվում ե իր հետ:

Բայց մուսաս հիմա յերկունքի մեջ ե,

Յեզ այսպես ծնեց:

Յեթե նա չքնաղ և խելացի յե—չքնադություն և  
խելացիություն:

Մին՝ գործածելի, իսկ մյուսն արդեն ինքն ե  
գործածում:

## ԴԱԶԴՆԵՍՏՈՒԱ

Շատ լավ դովիկեցիր:

Խնչպթս կը լինի, յեթե սև լինի, նաև սրամիտ:

## ՅԱԴՈ

Յեթե սև լինի, սրամտություն նաև ունենա

Մի ճերմակ պետք ե գտնի նա վայել իր սևլիկության:

## ԴԱԶԴՆԵՍՏՈՒԱ

Ել ավելի վատ:

## ՆԵՐԵՒԹԻՒՆ

Խնչպթս կը լինի, յեթե սիրուն ու հիմար ել լինի:

## ՅԱԴՈ

Զի պատահել վոր գեղեցիկ լինի ու հիմար լինի,

Մինչև խակ նրա հիմարությունը

Ոգնել ե նրան մի ժառանգության:

## ԴԱԶԴՆԵՍՏՈՒԱ

Դրանք հին միամիտ պարագոքներ են, զինետներում

հիմարներին ծիծաղացնելու համար: Ի՞նչ թշվա-

ռական գովեստ դու ունես նրա համար, վոր աը-

գեղ ե ու հիմար:

## ՅԱԴՈ

Խնչքան ել տգեղ ու հիմար լինի՝ կարող ե նաև ել,

Խնչ վոր խելացին և գեղեցիկը սովոր են անել:

## ԴԱԶԴՆԵՍՏՈՒԱ

Ո՛ թանձր տգիտություն, դու ներբողում ես ամենա-

վատին ամենալայլը, Բայց բնչ ներբող կը շռայ-  
լելիր հատկապես մի արժանի կնոջ, մեկը, վոր  
արժանիքի հեղինակությամբ հենց չարամտու-  
թյունից հարդանք կը կորդի:

## ԱՎԵՐ

Այն վոր չքնաղ և և յերբեք հպարտ,  
Վոր լիզվանի յե և վճչ մեծախոս,  
Վորին չի պակառում վոսկի և յերբեք  
Չի գառնում հիմար և թեթևովիկ,  
Այն վոր չի փախչում իր ցանկությունից  
Յեր դեռ ասում ե, նիմա կարող եմ,  
Վոր բարկանում և և վրեժն և մեղմ,  
Վոր պաղատում և իր սխալին մնալ,  
Իսկ իր տագառուկին թողնում և թռչել  
Նա վոր իր բարձը իմաստության մեջ  
Այնքան հիմար չե, վոր մի փողոշի\*)  
Դլուխը փոխի իշխանի\*\* պոչի հետ,  
Նա վոր կարող և խորհել բայց միտքը  
Յերբեք բաց չանել գարպասողներին  
Չգառնալ նայել—դա մի եակ ե,  
Յեթե արդարիսին գոյություն ունի...

## ԴԱՀԴԱՇՄՈՒԱ.

Ի՞նչ անելու:

\*) Տէկ տեսակ—cod

\*\*) Տէկ տեսակ—salmon

**Միամիտներին դիեցնելու  
Ցեղ գարեջրի հաշիվ պահելու:**

## ԴԱՅԱՆԵՄՈՒՄ.

Ամենակազ և անկարող լեզրակացություն։ Նրանից մի սովորիր, նմիլիա, թեև քո ամուսինն եւ ի՞նչ կարծիք ունեք, Կասոփո, չեք կարծում, վոր նա ամենապիղծ և վատշվեր մի խորհրդատու յեւ։

## ԿԱՍՍԻՈ

**Ազդու և խոսում, տիկին, դու կարող ես ըմբռշխնել  
նրան ավելի իրբեւ զինվորական, քան իրբեւ քե-  
րական\*):**

## ՏԵՐԴԱ

## Մեկասի

Դեղդեմոնայի ձեռքն առնում եւ իր ամիկ մեջ, հը, լավ ե, փսփսա. այսքան փոքրիկ վոստայնով ել կարող եմ բռնել մի խոշոր ճանճ, ինչպես Կասո- սիօն։ Այս, ժաղան յերեսին, ժաղան, լես ողետք և շղթայեմ քեղ քո իսկ սիրաբանության մեջ, ծըշ- մարիտն ես ասում, այդպես ե, իհարկե, յեթե այդ- պիսի աճպարարությունները քեղանից կորզեն քո տեղեկալությունը, լավ կը լիներ այնքան հա- ճախ չհամբռուրեյիր քո յերեք մատները, վորով դու այժմ նորից միտում ունես պարոն խաղալու։ Եատ ըարբ՝ լավ համբռուրեցիր, մի ընտիր քա-

\*) Scholar

դաքավարություն։ այդպես եւ, ի հարկեւ նոր  
մատներդ տանում ես քո լրթունքներին, յերա-  
նի՛ նրանք քեզ համար լինելին ներարկիչ խո-  
ղովակներ։

Փողեւ դրսից

**Մայլը:** Յես ճանաչում եմ նրա շեփորը

ԿԱՍՏՈ

**Ճշմարիտ այդպես:**

ԴԵՇԴՆՄՈՒԱ.

**Ընդառաջ գնանք և ընդունենք նրան։**

ԿԱՍՏՈ

**Ահա. յեկալ։**

Մտնում և մրելլոն ճնշեվորդներով

ՕԹԵՎԵՐ

**Իմ ռազմիկ չքնաղ։**

ԴԵՇԴՆՄՈՒԱ.

**Իմ սիրելի Ռթելու։**

ՕԹԵՎԵՐ

Վորքան դարմացած, նույնքան ուրախ եմ,

Վոր ինձնից առաջ արդեն հասել ես։

**Ո՞վ հոգուս հրճվանք,**

Յեթե ամեն մի փոթորկից հետո այսպես հանդիսա  
կա,

Թռղ փչեն հոգմերն մինչև վոր մահը զարթեցնեն  
քնից,

**Յեզ թող բարձրանա հոգնառանջ նավը**

Կատղած ծովերի բլուրների վըա,  
Ոլիմպի չափ բարձր և հետո այնքան վար  
խորասուզվի,

Վորքան դժոխքը ցած և յերկնքից:  
Յեթե ճիշտ էիմա յես պետք և մեռնեմ  
Դա իսկ կլիներ Են բախտավորը,  
Զի վախենում եմ հոգիս հասել և  
Այնքան բացարձակ բավականության,  
Վոր ուրիշ հանգիստ ճիշտ սրա նման  
Զի հաջորդելու անհայտ այս բախտին:

#### ԴԵԶԴԱՄՊՈՆԱ

Յերկինքը արգելք թող հանգիսանա:  
Մեր սերը ընդմիշտ և մեր հանգիսաը  
Համաշափ աճեն մեր որերի հետ:

ՈԹԱՅԱՅ

#### ԱՃԵՆ.

Քաղցը դորությունք,  
Զեմ կարողանում խոսել բավական  
Իմ այս հագեցման մասին խորախոր,  
Դա կասեցընում ե ինձ այս տեղում,  
Զափաղանց շատ և այս խնդրությունը  
Յեզ այս, և այս, այս, ամենախոշոր  
Անհերդաշնակը լինի, վոր յերբեք

Համբուրում և նրան

Մեր հոգիները կարող են տեսնել:

ՅԱԳՅ (մնկութի)

ՄՌ, առայժմ դուք ներդաշնակ եք,

Բայց ոլարկեշտ մարդ չեմ, յեթե այս սիրուն  
յերաժշտության  
Լարաբռոյթերը հթուլացնեմ:

ԱՅ-ԵՎ. Ա.

Դնմաք զգյակը  
— Եռւր, բարեկամներ, կոխվը վերադարձամ,  
Բուրքերն ընկան ջուր:  
Ինչպես են դդում այս կղզու իմ հին բարեկամները:  
Մեղքիկ, կիալրոսում քեզ շատ կը սիրեն:  
Յես այս մարդկանց մեջ շատ սեր իմ դուել:  
Ո՛, անուշնես, անկառ եմ խօսում  
Ցեվ դառանցում եմ ուրախությունից:  
Սիրելի Յաղո, խնդրում եմ յիս քեզ,  
Գնա ծովափիը և սնդուկներս հանել տուր նավից.  
Նավապետին ել բեր միջնարերդը,  
Լավ նավապետ և և արժանի և շատ հարդ ու պատվիր  
Յեկ. Դեղպեմոնա, կիալրոսում նորից դալուսագ բարի:

Դնում են Արելլոն, Դեղպեմոնան յել նեեւուշները

ԱՅ-ԵՎ.

Քիչ հետո նավամատույցում հանդիպիր ինձ: Մհատ յեկ:  
Ցեթե դու քաջ ես—ինչպես ասում են, ստոր մար-  
դիկ սիրահարվելիս ազնվության են ստանում  
ավնլի քան իրնեւ ունեցել են իրենց ընավորու-  
թյունների մեջ—լսիր ինձ: Տեղակալն այս գիշեր  
պահականոցում հսկելու և, նախ՝ պետք և քեզ  
ասեմ — Դեղպեմոնան ուղղակի սիրահարված և  
նըսան:

Նրան, անկարելի եւ

ՏԱԴՐ

Մատդ դիր այնպես և բան սովորեր։ Նշեր թե ինչ կատաղությամբ նու սիրեց Մավրին առաջին անգամ, վորովհետեւ Մավրը փչում եր և ֆանտաստիկական սօւտեր եր ասում, նա կը շարունակի՞ սիրել նրան շաղակրատության համար։ Թող քո խոհական սիրտդ չանդրադառնա դրան։ Նրա աչքերը պետք ե մնանին և լինչ ըմբուշինում պիտի ստանա նա այդ դեին նայելով։ Յերբ արյունը դառնում ե անկենսունակ զվարճության գործողությամբ, հարկավոր ե — նորից բացավառելու համար և տալու լիանագեցման թարմ ախորժակ՝ գրավիչ դիմք, տարիքի համակրություն, լավ ձեեր և գեղեցկություններ, իսկ Մավրը զուրկ ե այդ բոլորից, ուրեմն, այս պահանջված հրապույրների բացակայության պատճառով, նրա նըրարին քնքչությունն իրեն խարգած պիտի զռա, պիտի սկսի խեղդել կոկորդը, նողիալ և ատել Մավրին։ Բնությունն ինքը պիտի առաջնորդե նրան այդ բանում և ստիպե նրան մի վորեւելիքություն, Ուրեմն, պարհն, այսպես ընդունենք, քանի վոր սա ամենից ակներեւ և անբոնազբոս առաջադրությունն ե — այդ բախտավորության սանդուղխի վրա մի կա ավելի բարձր կանգնած, քան Կասսիօն, մի հեղինեղուկ սրիկա, վորի խղճմատանքն այնքան ե միայն, վոր քաղաքավարության և բարեկրթության արտաքինն և

յուրացրել՝ իր խենեշ և լավ թագցրած պիղծ միտումներին ավելի դյուրավ հագուրդ տալու համար, իհարկե վհչ վոք, իհարկե վհչ վոք, մի նկուն և խորամանկ խարերա, առիթներ դանող, վոր ունի մի աչք, վոր կարող և տպավորել և կեղծել առավելություններ, թեկուզ խեկական պատեհությունը չներկայանա, դիմալին մի սրբիա, բացի զբանից, սրբկան գեղեցիկ և, յերիտասարդ, և ունի այն բոլորն իր մեջ, վոր հիմար և տհաս մտքերը վորոնում են, մի ժանտարեր, կատարյալ սրբիա և կինն արդեն դոել և նրանու

#### Ա-ԱԴՐԵՆՈ

Յես չեմ կարող դրան հավատալ, նա ոժոված և ամենառոհնելի հատկություններով,

#### Ա-ԱԴՐԵՆՈ

Որհնված թղի ծայրը... նրա խմած դինին և լինված և խաղաղից, Յեթե նա որհնված լիներ՝ Մագրին յերբեք չեր սիրի, որհնված... չտեսմը թե ինչպես ձեռքը քսրառում եր Կասսիսյին ձեռներին, չնկատեցիք:

#### Ա-ԱԴՐԵՆՈ

Այս, այդ անսա, ըայց դա միայն քաղաքավարություն կրի

#### Ա-ԱԴՐԵՆՈ

Լառություն, ձեռքս վկան, դա առաջարտնն և և մուջ նախերդանքը լիտանքի և խենեշ մաքերի մի ամրադի ոլատամության, Նրանք այնքան եյին մոռեցն իրաբ իրենց շրթունքներով, վոր նրանց

շնչերը խառնվում ելին իրաբու Սրբիայական մըտքեր, Ռոդրիգհ, յերբ այս փոխադարձ մտերմությունները ճամբա են բաց անում, անմիջապես յետևից դալիս ե զլխավորը, մեծ մարզանքը, ճարմական վերջաբանը. Փիքչ Բայց, պարզն, ղեկավարվիր ինձմով. յես եմ քեզ Վենետիկից բերել Այս գիշեր պահակի գնա. հրամանը քեզ համար ձեռք կը բերեմ, Կասսիոն քեզ չի ճանաչում, յես ել քեղանից հեռու չեմ լինի, Կասսիոյին բարկացնելու մի բան գտիր, լինի դա բարձր խոսելով, կամ կարգապահության հակառակ մի բան անելով, կամ վորևե ուրիշ կերպով, վոր ինքդ ուղարկ ես, նայելով թե ինչպես առիթը կը ներկայանա:

#### ՈՐԴՐԻՉԱ

### Լավ:

#### ՅԱԳՅ

Պարհն, նա սանձարձակ ե և շուտով բարկացող, կարող ե պատահել, վոր նա քեզ խփի, գրգռիր, վոր խփի. յես հենց զրա վրա կը մղեմ կիտրոսցիներին ապստամբության, վորի հանգստացումը վոչ մի կերպ գլուխ չի դա, յեթե վոչ Կասսիոյին փոխադրելով իր պաշտոնից, Այսպես դու կունենաս ավելի կարճ ճանապարհորդություն դնողի քո ցանկություններն այն միջոցներով, վոր յես կունենաս նրանց առաջ տանելու համար, և խոչընդուռը վերացված կը լինի, առանց վորի չկամեր հաջողության վոչ մի հույս:

## ԱՐԴԻՇՎԱՐ

Յիս այդ կանեմ, յեթե կարողանամ գտնել պատեհ առիթը՝

ԱԱՀԱ

Յիս կերազխավորեմ քեզ ՞նիչ հետո յնկ միջնաբերդը՝  
հիմա պետք և գնան և նալից դուրս բերեմ նրա  
իրեղենները։ Դնաս բարով։

## ԱՐԴԻՇՎԱՐ

Յանություն

Մոդրիզն դուրս և զնոս

ԱԱՀԱ

Վոր Կաստիսն նրան սիրահարված և, հավատացած եմ,  
Նա ել Կաստիոյին, այդ ել կարելի և խելքի մոտ և.  
Մավրը — թեղեան չեմ տանում նրան —  
Հասատառն, սիրող, մհծահողի և.

Յեվ հասատ դիտեմ շատ դուրովալից ամուսին կը լինի  
Իր կնոջ համար։ Դեղպեմոնային յես ել եմ սիրում,  
Դոչ միայն տենչից, թեն պատահմամբ

Այդ մեծ մողքից ել այնքան մաքուր չեմ,

Այլ մասամբ զրգված վրեժիս փափառից՝

Բանի վոր իրոք կառկածներ ունեմ, վոր գամաշ Մավրը  
Ցատկել և իմ իսկ բազմոցի վրա.

Յեվ յերբ այդ բանը մտքովս անցնում են

Հանքաթույնի պես կրծում են ներսը.

Վաչինչ չի կարող սիրառ հովացնել և չի հովացնի  
Մինչեւ նրա հետ հաշիվս չփակեմ—կնոջ տեղ կնիկ.

Յեվ յեթեն չեղաղ գեթ Մավրի սրտում

Այնտիսի զորեղ մի նախանձ ցանեմ,

Վոր դատողությունն այնքան բուժել չկարողանաւ,

Այժմ, այդ բանըն անելու համար՝  
Այս վենետիկցի թշգառ վարսկանըս,  
Վորին գրգռում եմ վոր թունդ հարձակվի,  
Ցեթե լավ բռնե՞ Միքայել Կասսիոն իմ ճանկս կընկնի  
Մավրի մոտ նրան սոսկալի կերպով կաևացնեմ.  
Կասսիոն, կարծում եմ, գիշերվա դդակս գլուխն ե դրել.  
Ցեվ այնպես կանեմ, վոր Մավրը ինձնից շնորհակալ  
ՈՒնի,  
Միըե, վարձատրե, վոր նրան այնպես լավ իշացրել եմ,  
Անգորությունը և հանգիստ կյանքը տակն ու մրա  
արել՝  
Խելազարության չափու Ահա, սակայն դեռ  
Խառնաշփոթ ե, Մըիկայության պարզութ գեմքը  
Ցերբեք չի տեսնիած, մինչև դորձածին

የኅጂ እና የኅጂ

ՏԵՍԱՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

Մի ժաղաց

Եթեմ և մի մամնեակի մի նայտարարւոյսը:

Ժողովությոր նետելում և

アカデミック

Ոթելլոյի, մեր ազնիվ և քաջարի զորապետի հրամանն ե,  
վոր նոր ստացված լուրերի հիման վրա, վորոնք  
ավետում են թըքական տորմիդի բնաշնչումը,  
ամեն մարդ հաղթության տոն կատարե — վորմանք  
պարելով, ուրիշներ՝ հրախաղությամբ, ամեն մարդ  
իր սիրած զվարճությամբ և խրախնանքով, վորով-  
հետի բացի այս բերկրառիթ լուրերից՝ այսոր  
նաև նրա հարստանելուն հանդեմն եւ Անտ այս իւ

նա բարեհաճում և հայտաբարել տալ, Դղյակի  
ըսլոր սեղանատները բաց են և տմին մարդ կա-  
տարյալ աղատություն ունի իւննուլք անելու  
ներկա ժամը հինգից մինչև վոր դանզը կանչի  
տասը և մեկը Աստված որհնե Կիպրոս կղզին և  
մեր տղնից դորապետ Ոթելոյին:

Դուրս և զնոս

### ՏԵՍԱՐԱՆ ՅԵՐՐՈՐԴ

Մօնում ԱՅ Ո ր ե լ լ ո ն, Դ ե զ դ ե մ ո ն ա ն, Կ ա ս ս ի ո ն յ ե կ  
ս պ ա ս ա վ ո ր ն ե ր ը

ՕԹԵԼՈ

Բարի Միքայել, հակիր այս գիշեր պահակի վրա.

Պետք ե ինքներս այսպես չափ գնենք մեր զվարճության,  
Վոր պատշաճության սահմանից չանցնի:

ԿԱՍՏԻ

Արդեն Յագոյին հրահանդ արված ե,

Բայց այնուհանդերձ, ինքս ել իմ աչքով կը վերտահսկեմ:

ՕԹԵԼՈ

Յագոն պարկեշտ եւ Գնամ, Միքայել, բարի գիշեր քեզ,  
Իսկ վաղի առավատ կանուխ յեկ խօսենք:

Դեղդիմոնային

Արի, սիրուհիս,

Ցերք առքը յեղաղ՝ մերն եւ և բերքը.

Ցեղ շահը պետք ե զեռ բաժնենք մեր մեջ:

Բարի գիշեր:

Դուրս են զնոս Ո ր ե լ լ ո ն, Դ ե զ դ ե մ ո ն ա ն յ ե կ  
ս պ ա ս ա վ ո ր ն ե ր ը: Մօնում ե Յ ա գ ո ն

## ԿԱՍՏԻՇԱ

Բարեւ քեզ, Յագո, դնանք պահականոց:

ՏԱԴՅԱ

ՎՀՆ այս ժամին, տեղակալ, ժամը դեռ տաօն ել չեւ Մեր  
զորապետը մեղ այսպես վազ արձակեց իր Դեղ-  
գեմոնայի սիբույն համար. մեղադրելիչ չեւ, նա  
դեռ վճշ մի գիշեր չեւ դվարճացել նրա հետ, իսկ  
Դեղդեմոնան վայել և Յուղիտերին:

## ԿԱՏԱՇԱ

Ամենաընտիր տեսակի մի կին և նա:

ՏԱԴՅԱ

Յեզ, վստահացնում եմ, դվարճասեր:

## ԿԱՏԱՇԱ

Այս, նա ամենաթարմ և ամենանուրբ մի արարած է:

ՏԱԴՅԱ

Ի՞նչ աչքեր ունի նա, թվում և, վոր անձնատուր լինելու  
հրավեր և ձայնում:

## ԿԱՏԱՇԱ

Հրամիրող աչքեր, բայց և թվում են շատ համեստ:

ՏԱԴՅԱ

Յեզ յերբ խոսում ե, սիրո ահազանդ չեւ:

## ԿԱՏԱՇԱ

Նա, իհարկե, կատարելություն եւ

## ԱԱԴՈ

ԵՇԻ, յերջանկությունն նըստ առագաստին Յեկ, տեղական, մի լավ գինի ունեմ և այստեղ դուքսը կիպրոսի քաջ տղաներ կան, վորոնք ուզում են խճել ու Ոթելլոյի կենացը:

## ԿԱԾՍԽԸ

ՎՐՈՎ այս գիշեր, բարի Յագո, յես շատ խեղճ և դժբախտ գլուխ ունեմ խմիչքի համար: Յերանի քաղաքավարությունը հյուրասիրելու մի ուրիշ միջոց հնարեր:

## ԱԱԴՈ

ՈՌ, նրանք մեր բարեկամներն են, միայն մի բաժակ, քո տեղը յես կը խմեմ:

## ԿԱԾՍԽԸ

Այս գիշեր միայն մի բաժակ եմ խմել, մեջն ել խորամանկությամբ ջուր եյի խառնել, և ահա, Բնչ խռովություն և սարքել այստեղի:

Գլուխն և ցուց տալիս

Անհասատատությունն իմ դժբախտությունն ե, և չեմ համարձակվում տկարությանս վրա նոր բնուլացնել:

## ԱԱԴՈ

ԵՇԻ մարդ, զվարճանալու գիշեր ե, տղաները շատ են ցանկանում:

## ԿԱԾՍԽԸ

ՎՃՐԹԵՂ ԵՆ ՆՐԱՆՔ:

## ՅԱԴՐ

Այստեղ, դուանը, խնդրում եմ, ներս կանչեցեք նրանց:  
ԿԱՍՏՈՒԹ

Կը կանչեմ, բայց ինձ դուք չի գալիս  
Գնում ե դուրս

## ՅԱԴՐ

Թե մեկ գավաթ ել յնս գլխին կապեմ,  
Այս բոլորի հետ վոր նա այս գիշեր խմել ե արդեն,  
Տիրուհուս շան պես ցասկոտ կը լինի և կռիվ փնտռող՝  
Այժմ, իմ հիվանդ, ապուշ Ռոդրիգոն,  
Վորին սերն այնպես հիմարացրել ե,  
Վոր խելքի աստառն յերես ե շինել,  
Այս գիշեր արդեն Դեղզեմանայի առողջությանը  
Գալիք ե խմել և պետք ե գնա պահակ կանգնելու.  
Եերեք կիսլրոսցի յերիտասարդներ — ազնիվ հոգիներ,  
Պատվիր գործերում իրմատ դյուրագրգիւ,  
Բնիկ տարբերը այս ռազմիկ կղզու,  
Նրանց գլուխն ել լիք բաժակներով լավ տաքացրել եմ,  
Վորոնք ալս գիշեր պահակելու ենու  
Այժմ գինովների այդ նախիրի մեջ  
Պետք ե կասսիոյին մի բան անել տամ,  
Վոր վիրավորանք լինի այս կղզուն Ահա գալիս ենու  
Եեթե ղեալքերն ել աջակից լինեն իմ խորհուրդներին՝  
Նավը կը սուրա թե հաջող հողմից և թե հոսանքից  
Վերամենում ե Կասսիոն, ներ Մոնտանոն  
յեվ պարոններ, նրանց նետելում ե մի սպասավոր զինիով:

## ԿԱՍՏՈՒԹ

Եերկինքը վկա, մի ահագին գավաթ արդեն խմցրին  
ինձ,

ՄԱՆՏՈՎԱՆ

Համատեմ, իոր մի փոքրիկ դաշտավէ եր, կես քառորդ  
չկար, զինվորի խճաք:

ԱՎԵՐ

*Մի քիչ զինի, հա...*

ՑԵՐՊԱՄ և

Բաժակ զարկեցնը բաժակի,  
Ճընկի, ճընկի,  
Բաժակ զարկեցնը բաժակի,  
Ճընկի, ճընկի,  
Մարդ և զինվորը,  
Կարճ և մեր որը,  
Ուստի, զինվորներ, բաժակ բաժակի:

*Մի քիչ զինի, աղանձը:*

ԿԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Յերկինքը վկա, ընտիր յերդ եւ:

ԱՎԵՐ

Սովորել եմ Անգլիայում, վարտեղ, անշուշտ կոնծելու,  
մեջ հմուտ են, ձեր Դանիացին, ձեր Գերմանացին,  
ցածր, և քո փորը կախ ընկած Հոլանդացին, հա,  
խմեցեք, վոչինչ են ձեր Անգլիացու մոտ:

ԿԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Զեր Անգլիացին այնքան վարպետ և կոնծելու մեջ:

## ՅԱԴՐ

ԱՆԴԱԼԻԱԳԻՆ հեշտությամբ ձեզ կը գերազանցե, յերբ  
Դանիացին արդեն մեռածի պես հարրած կը լինի,  
ԱՆԴԱԼԻԱԳԻՆ դեռ չքրտնած՝ Գերմանացին արդեն  
տապալվել ե, նա Հոլանդացուն փսխել կտա՞ն  
նոր գինի կը լցնի:

## ԿԱՍՏԻՈ

**ՄԵՐ ԳՈՐԱՎԵԹԻ ԿԵՆԱՑՑՐ:**

## ՄԱՆՅԱՆ

ՅԵՍ ՃԻԱՆՈՒՄ եմ, տեղտկալ, և յես ձեզ արդարություն  
կանեմ:

## ՅԱԴՐ

**ՈՌ ՔԱՂՋՐ ԱՆԴԱԼԻԱ...**

## ՅԵՐԳՈՎ և

Մահփան աշքան մեծ թագավոր եք,  
Բայց իր ասփառը հինգ շիլինդ աքժեր.  
Դեռ ելի վեց պենս նա թանդ եր դանում,  
Յեկ իր գերձակին հայհոյանք անում,  
Նո թագավոր եր չառ հաշակավոր,  
Դու մի հասարակ մտրդ ես չքափոր.  
Հզարառությունն ե ավերում մեր տռնե,  
Դնա, վրադ քաշեր բո հին վերաբեռն

**ՄԵՐ ՔԻՆ ՊԻԻՆ, հմ:**

## ԿԱՍՏԻՈ

**Այս յերգն ավելի ընտիր ե, քան մյուսը:**

## ՅԱԴՐ

**Նորից կը լսեմ:**

## ԿԱՌՈՒԹ

Վիճակ վորովինեան լես իր պաշտոնին անարժան եմ համարում նրան, վոր այս բաներն ե անուամ։ Լմվ—յերկինքն ամենից վեր ե. հոգիներ կան, վոր փրկվելու են և հոգիներ կան, վոր չեն փրկվելու։

## ԱԱԴՐ

Դա նշմարիտ ե, բարի տեղակալ։

## ԿԱՌՈՒԹ

Իսչ վոր ինձ ե վերաբերում—վիճ մի անարդանք դեպի մեր զորապետը և վիճ ել դեպի մի վորեւ աստիճանավոր մարդ—հույս ունեմ յես, վոր կը փրկվեմ։

## ԱԱԴՐ

Յես ել հույս ունիմ, տեղակալ։

## ԿԱՌՈՒԹ

Այս, բայց, ձեր թույլավությամբ, վիճ ինձանից առաջ, նախ տեղակալը ովեաք ե փրկվի, հետո դրոշակիբը, Թողնենք այդ բաները, մեր գործին գնանք, Ներվի մնդ մեր մեղքերը։ Պարսններ, մեր գործին նայենք։ Զկարծեք, պարոններ, վոր յես հարբած եմ. սա իս դրոշակիբն ե, սա իմ աջ ձեռքն ե, սա ել՝ իմ ձախը։ Յես հիմա հարբած չեմ, կարող եմ լավ կանոնել և լավ խոսել։

## ԲՈՒՋԵ

Հըաշալի։

## ԿԱՍՏԻՈ

Ե՞ն, շատ լավ ուրեմն, չպետք է կարծեք ուրեմն, վոր յեռ  
հարբած եմ:

Դուրս և զնում

## ՄՈԽԱՆՈ

Գնանք հարթավայրը, աղարոններ, գնանք պահակներ  
կարգենք:

## ՕԱԿՈ

Տեսնեմ եք դրան, վոր դուրս յելավ այժմ.

Մի զիսվոր ե դա, վոր պետք ե կանգներ կեսարի կողքին  
Յեվ հրամաններ տար. հիմա նայեցեք իր մոլությանը.

Ճիշտ զուգակցիոն իր արժանիքի,

Մեկը մյուսի չափ. ափսես այդ մարդը:

Շատ եմ վախենում, վոր Ոթեղոյի վատահությունը

Դրա ակարության մի անրախտ ժամկն

Ծնցի այս կղզին:

## ՄՈԽԱՆՈ

Հաճմիս և այդպես:

## ՕԱԿՈ

Նրա քնելու նախերդանքն ե այս,

Յեվ քսան չորս ժամ արթուն կը մնա,

Յեթե խմիչքը չը ճոճե նրա փուճ որորոցը:

## ՄՈԽԱՆՈ

Բայց լավ կը լիներ մեր զորապետին գիտակ գարձնել.  
Դուցե չի տեսնում, կամ նրա բարի բնավորությունը

Կասսիոյի դրսե հատկություններն և արժեքավորում,  
Յեղ վատ կողմերին չե նայում Շիշտ չե:

### Մանում և Ռոդրիգոն

#### ԱԱԴԱԾ

Խ՞նչ կա, Ռոդրիգո,

Մեկուսի Երան

Շհւտ, տեղակալի յետնեց հասից

Ռոդրիգոն դուրս և զնում

#### ԱՊՆՏԱՆՈ

Շատ ցավալի ե, վոր աղնիվ Մավրը

Իր փոխանորդի ծանր պաշառնը մեկին և հանձնել,  
Վոր արմատացած մի ախտի տեր ե.

Պարկեշտ գործ կը շիներ այդպիս ել ասել մնր աղնիվ  
Մավրին:

#### ԱԱԴԱԾ

Յես չեմ տնի այդ, յեթե այս չքնաղ կղզին ել ինձ

առան:

Կասսիոյին սրտանց սիրում եմ. իրավ, շատ բան  
կտայի  
Նրան այդ տիտից բուժելու համար Լոիր, Բնչ Ճայն ե,

Աղաղակներ Եերօից տպնեցն, ոգնեցն»:

Վերամանում ե Կասսիոն Եերս Տօնավ Ռոդրիգոյին:

#### ԱԱՍՍԱՐ

Այ դու դարձելի, մյ դու անդպամ:

## ՄԱՆՅԱՆՈ

Ի՞նչ և պատահել, տեղակալ:

## ԿԱՍՏԻՈ

Մի որիկա ինձ սովորեցնի իմ պարտականությանը.  
յես ծեծելով նրան կը կոխեմ վոզորանյուս շիշի մեջ:

## ՌԵԴՐԵԴՈ

Ի՞նձ ծեծես...

## ԿԱՍՏԻՈ

Հոխորածւմ ես, անզգման:

Խփում և Ռոդրիգոյին

## ՄԱՆՅԱՆՈ

Ո՞ վիչ, բարի տեղակար

Բռնելով նրան

Անդրում եմ, պարհն, ձեռք քաշեք:

## ԿԱՍՏԻՈ

Թհղ գնամ, պարհն, յեթե վոչ կտամ ոլիսիդ:

## ՄԱՆՅԱՆՈ

Ռւշքի յեկ, դու հարրած ես:

## ԿԱՍՏԻՈ

Հարբմետ:

Մենամարտում եմ

ՅԱԴՐ

(Առանձին ՌՈԴՐԻ ԿԱՇԻ Տ)

**Հեռացիք, ասում եմ, զուրս գնակ և տղաղակիք, և ապշտամբության։**

ՌՈԴՐԻ ԿԱՇԻ ՊՈՒՄ և զնում

**Կեցնք, տեղակալվ ի սեր Աստուծո, պարոնեքր ։ — ԵԿԵՐ ։**  
ողնության... տեղակալվ պարոն... Մոնաշնու...  
պարոն... ողնեցնք... պարոններ... հրաշալի ուա-  
հակության։

Զանգը ննջում և

**Ո՞վ ե, վոր զանգահարում եւ — Սատանա. եհեր, քա-  
զաքը վասի պիտի կանգնի, ի սեր Աստուծո, տե-  
ղակալ, ձեռք բարձրացրեք. ամոթալի կը մնանք  
մինչև հագիխայան։**

Վերամբում են նրելլոն յեվ սպասավորներ

ՅԱԴՐ

**Ի՞նչ և պատահել այսակդ։**

ՄՈԽԱՎԱՐ

**Դժմիք, արյունս գնում ե դեռևս.**

**Վկրավորված եմ մահացու կերպով։**

ՅԱԴՐ

**Զեռք քաշեք, այն ել՝ ձեր կյանքի համար։**

ՅԱԴՐ

**Զեռք քաշեք, եհեր, տեղակալվ պարոն...  
Մոնաշնու... պարոններ...  
...**

Մոռացմէ եք դուք ամեն զգացում  
Պարտքի, պաշտօնի,  
ՀԵյ, զորապետը ձեղ հետ և խոսում, հԵյ, հԵյ ամսթ  
ձեղ,

## ԱԹԵԱՆԱ

ԵԿԵյ, այս ի՞նչ ե, վմբանդից ծագեց,  
Թուրքնը ենք դարձել, մԵնք ենք մեղ անում,  
Ինչ վոր յերկինքը ոսմանցիներին չթողեց անել,  
Ի սեր քրիստոնյա ամոթխածության  
Թողեք այդ հիմար, բարբարոս կոփիլը,  
Ով առաջինը փորձե հագուրդ տալ իր կատաղության  
Զեռք ե քաշում իր սեփական հոգուց,  
Կը մահանա նա հենց վոր շարժըլի:  
—Լռեցրեք իսկույն այդ դժմին զանգը.  
Դա վրդովում ե կղզու հանգիստը Ի՞նչ կա, պարոններ,  
Դու, պարկելու Յագո, վոր յերևում ես վշտից մի մեռել,  
Խոսիր,  
Ո՞վ սկսեց այս,  
Քո սիրուդ վրա՝ յերդվընցնում եմ քեզ:

## ԱՎԵՐ

Չը գիտեմ, հիմա, հենց այս բոպեյիս,  
Նրանք իրար հետ այնպես հաջու ելին, այնպես սիրալիր,  
Ինչպես հարս փեսա՝ յերք վոր հանվում են պառկելու  
համար,  
Հետո, հենց հիմա, վորպես թե հանկարծ մի չար  
մոլորակ

Մարդկանց խելազուրկ դարձըրած լիներ՝  
Սրեր հանելով և իրար կրծքի՝ կոփի են տալիս:

Զեմ կարող ասել թե այս հիմար վեճն ուրեմբ սկսվեց,  
Մի մեծ, դասահեղ գործողության մեջ  
Յերանի՛ յերկու զոտներս կորցնելի,  
Վարոնք ինձ դաշձրին արան մասնակից:

ՈՒՆԻՉՈ

Ինչպես պատահեց, աղնիվ Միքայել, վոր քեզ մոռացար:

ԿԱՍՏՈ

Խնդրեմ ինձ ներեք, չեմ կարող խռոնել

ՈՒՆԻՉՈ

Աղնիվ Մոնաւանո, դու սովոր եյիր բարեկերթ լինել  
Հանդարտությունը, լրջությունը քո յերիտասարդու-  
թյան

Վաղջ աշխարհ դիտե. մեծ և քո անունն

• Խելացի մարդկանց դատողության մեջ. ինչպես թա-  
տանեց,

Վոր աղարահցիր բարի համբավը այլպիսի բարքով,  
Ցել սպանեցիր քո մեծ հոչակի հարուստ կարծիքը  
Իրը դիշերային անհոգ կովարար:  
Պատասխան տուր ինձ:

ՄԱՆՏԱՆ

Աղնիվ Ոթելո, յես գտանգալոր վիրավորված եմ,

Զեր սպան, Յազմն, կարող ե ասել...

— Մինչդեռ խռովում եմ, մի բան ինձ հիմա վիրավո-  
րում ե, —

Նա բոլորը կտսի, ինչ վոր յես դիտեմ. չը գիտեմ սակայն  
Թե յես ալս դիշեր մի վատ բան ասած կամ արած լինեմ.

Յեթե վոչ անձի հոգածությունը մոլություն սեղվի,  
Յեզ պաշտպանվելը՝ բռնի մեր վրա հարձակվողի գեմ՝  
Հանցանը համարվի:

## ԱԹԵԱՅԱ

Յերկենքը վկա,  
Արյունըս ահա սկսում ե իշխել  
Ավելի խոհեմ ուղղիչներիս վրա,  
Յեզ կիրքը, պայծառ դատողությունըս մթնացնելով՝  
Փորձում ե ինքը դառնալ զեկավար,  
Յեթե յնս հուզվեմ, կամ այս բազուկը մի քիչ բար-  
ձրացնեմ  
Զեզնից լավերը կը զոհվեն սաստիս Ասացեք տեսնեմ  
Խնչպթս սկսվեց՝ տիմար կռիվն այս. և պատճառ  
դարձավ,  
Յեզ հզ այս բանում հանցավոր զուրս գա,  
Թեկուղ յերկորյակ լինի նա ինձ հետ, միասին ծնված,  
Պիտի ինձ կորցնի: Մրազմի քաղաքում  
Դեռ խելացնոր, և մարդկանց սրտերն ահով լեփ-լեցուն,  
Ներքին տնային կռիվներ սարքել  
Գրշերանց, այն ել պահականոցմամ,  
Ապահովության ալս կենտրոնի մեջ,  
Հրեշտավոր եւ Յագի, առա ինձ, և սկսեց այս:

## ՄԱՆԵԱՆՈ

Յեթե ընկերի կամ թե պաշտօնի կողմնապահությամբ  
Ճշմարտությունից մի ժադ ավելի կամ պակտս ասես՝  
Ապա զի՞նվոր չես:

## ԱՎԴԻ

Մի հուղի սիրասու

Լով և այս լնդուն բերանից կտրեն,  
Քան թե Կասսիոյին մաս հասցնեմ.

Բայց, համոզված եմ, վոր ճիշտ խռովելքս չի մնասի նրան:  
Այսպես, զորապետ, Մոնաշանոն և յես խռոակցում  
Եյինք,

Հանկարծ մանում և մի մարդ՝ ոկնության

աղաղակելով,  
Կասսիոն՝ յետեից, սուրը դուրս քաշած, վոր նրան  
զարկի.

Մոնաշանոն թռավ Կասսիոյի առաջ, ուզեց կանգնեցնել.  
Իսկ յես վաղեցի այն հարայ տվող մարդու յետեից,  
Մի՛ գուցե նա իր գոռում գոչումով—ինչպես վոր  
յեղավ—

Սարսափ տարածե քաղաքի վրա,

Նա արագավոտ, շատովիլ խույս տվեց իմ նպատակից  
Յեզ յետ յետ դարձա՝ սրերի շայուն և զարկ լսելով,  
Միքայել Կասսիոն բարձր հայնոյում եր,

Ի՞չ վոր նրանից մինչև այս դիշեր չեյի լսել դեռ  
Յերբ վոր յետ դարձա—վորը կարճ տեսց—  
Յես նրանց գոտա դեմ առ դեմ զարկեր փոխանակելիս,  
Ճիշտ այն դիրքի մեջ, յերբ վոր ինքներդ նրանց  
զատեցիք:

Մրանից ավել գոչինչ չգիտեմ. մարդիկ մարդիկ են.

Բայց և շատերը ողատանում եւ վոր մոռանում են այս,  
Թիպետե Կասսիոն, ճիշտ ե, զատ վարվեց այս

պարոնի հետ,  
Յեզ հաճոի մարդիկ կատաղության մեջ նրանց են  
զարկում,

Վոր միայն իրենց լավն են ցանկանում.

Բայց պետք և կասսիոն այն փախած մարդուց

Այսպիսի սասաթիկ մի վիրավորանց ստացած լինի,

Վորին համբերել հնար չի յեղել:

#### ՈՐԵԱՅԻ

Յես գիտեմ, Յազն,

Պարկեշտությունը և դեպի ընկերդ ունեցած սերը

Փոքրացնում են յեղելությունը

Դարձնելով թեթև կասսիոյի համար.

Յես քեզ սիրում եմ, Միքայել կասսիո,

Բայց դու իմ սպան չես այսուհետեւ,

Վերամտնում և Դեզինմոնան հետեւորդներավ

Ինձ նայիր, լեթե իմ ազնիվ սերը զարթած չլիներ՝

(Կասսիօյին)

Ճույց կտայի քեզ մի լավ որինսակ:

#### ՆԱԶԴԱՆՄՈՒԱ

Ի՞նչ և պատահել:

#### ՈՐԵԱՅԻ

Այժմ ամեն ինչ արդեն կարգին ե, իմ անուշ խնձոր,

Գնանք անկողին:

Մոնտանոյին

Իսկ ձեր վերքերին, պարհն, յես ինքու բժիշկ կլինեմ:

Առաջնորդեցք:

Դուրս են տնօւմ Մահանային

Յաղը, քաղաքին լով ուշ դարձրե՛ւ,  
Յեվ հանդստացրու այս անարդ կռվից վրդռվածներին,  
Յեկ, Դեղդեմոնա, զինվորի կյանք և  
— ծիկով արթնանալ բալասան քնից:

Բոլորը դուրս են գնում բացի Յաղոյից յեվ Կոստիոյից  
առաջ

Դիրավորված եք, լնչ և, անդականլ:

ԿԱՍՏԻԱ

Այս և անբուժելի

ՕԱԴ-Ը

Աստված վոչ անեւ:

ԿԱՍՏԻԱ

Անժւնս, անժւնս, անժւնս: Ո՞հ, անունս կորցրի. կորցրի եռլթյանս անմահական մասը. և ինչ վոր մոռմ և՝ անասնական եւ Անժւնս, Յագո, անժւնս:

ՕԱԴ-Ը

Պատիվս վկա, յես ել կարծեցի թե մի մարմնական վերք եք ստացել, դրա մեջ ավելի զբացում կա, քան թե անվան մեջ: Անունը սին և կեղծ մի հարկադրություն ե, վոր հաճախ ձեռք և բերլում առանց արժանիքի և կորցվում և պահնց արժանիք լինելու: Դուք վոչ մի անուն կորցրած չեք լինի, յեթե այդպիսին ձեղ չհամարեք: Ի՞նչ ե, մարդ, շատ միջոցներ կան զորապետի սիրաը կըկին շահելու: Դուք հանդիպեցիք նրա քարկալթյան, ՈՒԵՐ-Ը

դա մի պատիժ ե քաղաքականության քան թե  
վոլոսի, ինչպես վոր մի մարդ իր անմեղ շանը  
ծեծում ե՝ մի գոռող առյուծի վախեցնելու համար։  
Ազաշեցնք նրան և նա ձերն եւ։

#### ԿԱՌԱՆՈ

**Ազելի** լավ ե ազաշեմ արհամարհնվելու, քան թե խաւ-  
բելու այնպիսի մի աղնիվ հրամանատարի՝ այս  
պիսի թեթևառլիկ հարրեցող և անմիտ մի սպայի  
կողմից։ Հարրեթվ զաղակրատել թութակի նման,  
կործ սարքել մեծարանթվ հայհոյմը, ինքս իմ  
շվաքի հետ դատարկախոսթվ Ո՞վ դու դինու  
աներեւույթ վողի, յեթե դու չունես անուն, վո-  
րով ճանաչվես, կոչենք քեզ դեմ։

#### ՅԱԴՈ

**Ո՞վ** եր, վորին հետապնդում ելիք որովի Զեղ Բնչ եր  
արել։

#### ԿԱՌԱՆՈ

**Չեմ** ճանաչում։

#### ՅԱԴՈ

**Կարելի** բան եւ։

#### ԿԱՌԱՆՈ

**Եատ** բաներ են միտս գալիս, բայց վոչինչ վորոշ, մի  
քաշքառուք, բայց ինչից։ Ո՞ւ, աստված իմ, այդ  
մարդիկ իրենց բերանների մեջ պետք ե մի թշշ-  
նամի դրած լինեն իրենց ուղեղները գողանալու  
համար, այնպիս վոր մենք ուրախությամբ, հո-

նույթով, խրախնանքով և ծափահարությամբ  
պետք և փռխակերպվենք գաղաններին,

## ԱԱԴՈ

Բայց այժմ բազմական լավ եք. ինչպես յեղավ վոր  
սթափվեցիք:

## ԿԱՍՏԻՇ

Դեմ դիմովությունը բարեհաճեց իր տեղը տալ դեպ  
բարկության, մի պակասություն ինձ ուղարկում  
ե մի ուրիշին, վոր բոլորովին ինքս իմ աշքիս  
արհամարհեցի դառնամ:

## ԱԱԴՈ

Ձեռք քաշեցնք, դուք չառ խռարարս եք. ժամանակը,  
տեղը և այս յերկրի գրությունը նկատի առնեն-  
լով՝ սրտագին կը ցանկանայի, վոր այս բանը  
պատահած չլիներ, բայց հիմա վոր յեղածը յեղել  
ե, դարմանեցնք այն ձեր իսկ բարու համար:

## ԿԱՍՏԻՇ

Յես պիտի խնդրեմ նըան նորից իմ պաշտօնս,—նա  
պիտի ասի, վոր յսս հարբեցադ եմ Յեթե այս-  
քան բերաններ ունենայի, վորքան Հիղրան, այդ-  
պիսի մի պատասխան պիտի կասեցներ բոլո-  
րը. Այժմ լինել խելքը դլիսին մի մարդ, հետո մի  
խելակար ու շուտով մի գաղանո Ո՛, տարորինմկ,  
ամեն ավելորդ բաժակ անիծված և և բաղկա-  
ցուցիչը մի դեվ եւ:

## ԱԱԴՈ

Եեւքի յեկ, լավ դինին մի լավ ընտանի արարած ե,

յեթե լավ գործածվի, այդքան մի զատաբանեք  
այս, թեվ, բարի տեղակալ կարծում եմ, վոր  
ոլուք կարծում եք՝ յես ձեզ սիրում եմ:

## ԿԱՍՏԻԾ

Յես փորձով տեսա, պարոն! Յես հարբաժ...

## ՅԱԿՈ

Պատահում ե, ինչպես վորեն ապրող մարդու, վոր մեկ-  
մեկ հարրում ե, մարդ Ասեմ թե ինչ պետք է  
անեք: Մեր զորապետի կինը հիմա զորապետն ե.  
Այդ պատճառով այլպես եմ ասում, զորովնեան  
Ոթելոն իր խելքն ու միտքը տվել ե բոլորովին  
իր կնոջ հատկություններին ու շնորհներին, դիւ-  
տելով, զննելով և պաշտելով նրանց: Աղատորեն  
բաց արեք ձեր սիրութ Դեղդեմոնայի առաջ, ա-  
զաշեցեք, վոր աջակցի ձեզ նորից դնելու ձեզ ձեր  
պաշտօնի մեջ: Դեղդեմոնան այնքան պատրաս-  
տակամ, բարեսիրտ, սիրալիր և որհնված ընա-  
վորություն ունի, վոր իր բարության համար  
պակասություն կը համարե չտալ ավելին, քան  
ինչ վոր պահանջվում ե իրենից, այս կոտրած  
հոդը քո և նրա ամուսնու միջև՝ աղերսիր նրան  
վոր միացնե: Յես իմ հարստությունը գրավ կը  
դնեմ վորեն բանի դեմ, յեթե ձեր սիրո այս ճեղք-  
վածքը ավելի հզոր չլինի, քան առաջ:

## ԿԱՍՏԻԾ

Լավ խորհուրդ ես տալիս:

## ԱՅՆՈ

Հավաստիացնում եմ սիրո անկեղծությամբ և պարկեշտ  
բարությամբ:

## ԿԱՍՏԱՌ

Հաստատ գիտեմ, վաղն առավոտ կը խնզրեմ առաքինի  
Դեղդեմոնայից ձեռք առնի իմ գործը: Կը հուսա-  
հատվեմ իմ բախտից՝ յեթե ինձ ճնշեն ալստեղի

## ԵԱԴԱ

Իրավունք ունեք: Բարի գիշեր, տեղակալ, յես պետք  
և զնամ հոկելու:

## ԿԱՍՏԱՌ

Բարի գիշեր, պարկեշտ Յազու:

Դնում ե զուրս

## ԵԱԴԱ

Հիմա մել կասե թե յես խաղում եմ սրիկայի դեր,  
Յերբ իմ խորհուրդը անկեղծ, պարկեշտ ե,  
Յեղ շատ բանավոր, և խօկապես ել միակ միջոցն ե  
Մավրի շնորհը կըկին շահելու: Շատ դլուրին բան ե  
Խնդրն արամավեր Դեղդեմոնային իր կողմը գրավել  
Վորեմ պարկեշտ մի աղաչանքով:  
Նա ստեղծված ե այնպես մրգավետ, ինչպես տարերքը.  
Յեղ թշնչ չի կարող Մավրից ստանալ,  
Թեկուր ստանալ մկրտությունը,  
Մեղքի քալության բոլոր նշաններն ու դրոշմները:  
Յեղ Մավրի հոգին այնպես կապված ե իր սիրուհու  
հետ,

Վոր Դեղդեմոնան կարող ե նրան կապել և քանդել  
իր ուղածն անել, ինչպես կամենա նրա քմայքը,  
իր աստված խաղալ իր մարդու տկար գաառղության  
հետ:

Ուրեմն յես ինչպես կարող եմ լինել մի պիղծ սրբիկա,  
Յերբ զոր Կասսիոյին խորհուրդ եմ տալիս այն ուղին  
ընտրել,

Վոր ճիշտ տանում ե դեպ իր ոգուտը:  
Մ'զ գժոխային դու աստվածություն,  
Սատանաները յերբ ցանկանում են սև գործեր տանել,  
Նախ հրապուրում են յերկնալին պայծառ  
յերեռոյթներով,

Ինչպես յես այժմ, այսինչ մի կողմից այս պարկեշտ  
իենթը

Դեղդեմոնայից կը խնդրե կրկին կանգնել իր բախտը,  
Յեզ նա Մավրի մոտ թունդ կը միջնորդե՝  
Յես ել մյուս կողմից Մավրի ականջին այս թույնը  
կածեմ,

Թե Դեղդեմոնան յետ կանչում ե նրան  
իր մարմնի հայրատ կրքերի համար,  
Վորքան ավելի նա ճիգ գործ գնե Կասսիոյի ոգաին,  
Այնքան իր վարկը Մավրի մատ կընկընի,  
Այս կերպով նըրա անմեղությունը կուալըր կը շինեմ,  
Յեզ իր սեփական բարությունից ել մի ցանց կը  
հյուսեմ,

Վոր բոլորին ել իր ցանցը ձգի:

Մտնում ե Ռոդրիգոն

ի՞նչ կա, մողքիդու

ԱՐԴՅՈՒՆԱ

Ար վորսորդության մեջ յես հնտեսում եմ վոչ թե իրարևի վորսկան շուն, այլ իբրև այն, վոր հաջոցի պակասն եմ լրացնում։ Դրամս գըսթե սպասվեց։ այս գիշեր ել ովատվական ծեծ կերա, և կարծում եմ արդյունքը պետք ել լինի հնտեյալը— այնքան շատ փորձառություն ձեռք կը բերեմ իմ ցագերի փոխարեն, և այսողիս, առանց փողի, և մի քիչ ավելի խելքով, կը վերադառնամ Վենետիկ։

ԱՐԴՅՈՒՆԱ

Վորքան թշվառ են նրանք, վոր չունեն մի քիչ  
համբերանք,  
Վոր վերքն ե բուժվել՝ յեթե վոչ միայն  
աստիճանաբար,  
Դու գիտես, վոր մենք զործում ենք խելքով, վոչ  
կախարդությամբ,  
Խելքն ել կախոված ե դանդաղ, հապաղկոտ, համը  
ժամանակից.

Ի՞նչ, զործդ լավ չ՛մ. Կասսիոն քեզ ծեծեց  
Ցեզ դու ել Կասսիոյին վունտել տվիր,  
Փոխարեն այդ փոքր վիրավորանքի։  
Թեև այլ բաներ անում են պայծառ արեղակի դմմ,  
Բայց այն մրցերը, վօրոնք ծաղկում են ավելի առաջ,  
Շուտ ել կը հասնեն։

Մի քիչ համբերիր Ահա լուսաբաց.  
Հաճույքն ու վործը թվացնում են՝ ժամերը կարճ են։  
Գնա անկողին, գնա ուր վոր քեզ տեղ են հատկացրել։  
Գնա առում եմ։

Սրանից հետո դու շատ ավելին պիտի իմանառ  
նողինուն դնում ե

Յերկու բան ել կա, վոր պետք ե անեմ,  
 Պետք ե, վոր կինըս իր տիրաւհու մտ բարեխոս  
լինի  
 Կասսիոյի համար. կստիպեմ նրան, վոր այդպես անե.  
 Իսկ այդ միջոցին յես Մավրին կտանեմ մեկդի կը  
քաշեմ,  
 Յեզ ճիշտ յերբ Կասսիոն Դեղղեմոնային խնդրելիս  
լինի,  
 Ներս կը մացնեմ: Ա՛յ, այս ե կերպը,  
 Չփչացնենք այս ծրագիրը  
 Վոչ դանդաղությամբ, վոչ ել պաղությամբ:

Դաւան և զնում

---

## ԱՐԱՐՎԱՇ ՅԵՐՐԱՐԴ

### ՏԵՍԱՐԱՆ ԾՈԱԶԲԻՆ

Կիողըսու դոյլակին տռադ.

Մանում են Կասսիոն յեվ մի Տաճի յ բաժիօններ

### ԿԱՌԱՒՆ

Ցեկնք, վարպետներ, այստեղ նվազեցեք.

Ձեր նեղությունը լիս կը վարձատրեմ.

Մի կարճ բան լինի—«բարի լույս, զորապետ»:

Յերածություն: Մանում և խեղի առակը

### ԽԵՂԱԿԱՏՈՒՆ

Այդ լինչ ե, վարպետներ, ձեր գործիքները միջեւ յեղել են.

Նապոլիում, վոր այդպես քթից են խոսում:

### Ա. ՅԵՐԱՃԻԵՑ

Ինչպես, պարհն, ինչպես:

### ԽԵՂԱԿԱՏՈՒՆ

Առացնք, խնդրեմ, դրանք քամու գործիքները են:

### Ա. ՅԵՐԱՃԻԵՑ

Այս, պարո՞ն:

ԽԵՂԻ, ԿԱԼԱԾԱՀԱ

Բայց, վարդեաներ, ահա ձեզ փող զորապետին այնքան  
Դուք յեկայ ձեր յերաժշտությունը, վոր խնդրում ե,  
Աստծո սիրուն, գրանով ել աղմուկ չբարձրացնել:

Ա. ՇԵՐԱՋԻՆ

Լավ, պարոն, ել չենք ածի:

ԽԵՂԻ, ԿԱԼԱԾԱՀԱ

Ցեթե դուք ունեք վորեւ յերաժշտություն, վոր չի  
լսվում,  
Սկսեցեք, բայց, ինչպես ասում են, մեր զորապետը  
յերաժշտության շատ սեր չունի:

Ա. ՇԵՐԱՋԻՆ

Այդպիսին չունենք, պարոն:

ԽԵՂԻ, ԿԱԼԱԾԱՀԱ

Ուրեմն զուռնաներդ դրեք տոսլրակներիդ մեջ, վորովհե-  
տեւ յես հեռանում եմ, գնացեք, չքացնք ողի մեջ,  
հեռացեք:

ՅԵՐԱՋԻՆԵՐԸ գնում են

ԿԱԼԱԾԱՀԱ

Ականջ դիր, պարկելու բարեկամ:

ԽԵՂԻ, ԿԱԼԱԾԱՀԱ

Ականջ չեմ կարող դնել, բայց կարող եմ լսել ձեզ:

ԿԱՌԱՒՆ

Խնդրեմ բաց թողնես ալդ բառախաղերը. առ քեզ այս  
փոքրիկ վոսկին. յեթե այն տիկինը, վոր զորա-  
պեսի հնոջ մոտն եւ լինում, արդեն վեր և կացեր  
առան նրան թե կասսիո անունով մնկը խնդրում և  
նրա հետ խոսել. կանեմ:

ԽԵՐԻ ԿԱՌԱՒՆ

Այն, պարոն, վեր և կացել. յեթե դեղի ալս կողմը վար  
դա՞ ձեր ասածը նրան կը այտաբարեմ:

ԿԱՌԱՒՆ

Խնդրեմ, բարեկամ:

Ես եղի առաջի դուրս և զնում, մենում եւ Ցագան

Բարեկ՝ քեզ, Յագո:

ՅԱԴ

Ուրեմն այս գիշեր անկողին չե՞ք ժաել:

ԿԱՌԱՒՆ

Վաչ, լուս եր արդեն, յերբ բաժանվեցինք:  
Ցես ինձ թույլ ամի մի մարդ ուղարկել ներսը կնոջը մոտ.  
Աղաչանքս այն և մի միջոց գտնի,  
Վոր առաջինի Դիղղեմոնային կարենամ տեսնել:

ՅԱԴ

Հենց այս բողեյին կուղարկեմ ձեզ մոտ.

Ցես ել իս կողմից մի բան կը հնարեմ,

Վոր Մայրին առնեմ և մնկդի տանեմ,

Վորովհազի ձեր զործն ու ասուլիսը անխափան լինի:

## ԿԱՍՏՈՒՅ

**Շատր շնորհակալ եմ:**

Ցագոն զնում ե

**Ցերբեք յես այսքան բարի ու պարկեցա մի Ֆլորենտացի  
դեռ չեմ ճանաչել**

Մանում և Նմիջիան

## ԱՐԵՎԱՐԱ

**Բարե՛, տեղակալ**

Ցավում եմ, վոր ձեզ այդպես անախորժ բան ե պատահել:  
Բայց հոգ չե, շուտով կարգի կը դրվի.

Մազրն ու իր կինը այդ մասին եյին հենց այժմ խոսում.  
Տիրուհիս սաստիկ պաշտպանում ե ձեղ.

Իսկ Մազրն ասում ե, թե նա, վորին դուք վերավորել եք,  
Այստեղ՝ Կիպրոսում շատ ազգականներ և համբակ ունի.

Ցեվ ինքն ստիպված խռնեմությունից՝

Պետք ե անպատճառ ձեզ հեռու պահե,

Բայց նա պնդում ե թե սիրում ե ձեղ,

Ցեվ կարիք չունի ուրիշ միջնորդի,

Բացի սեփական իր համակրանքից,

Ցեվ հենց առաջին պատեհ առիթը ձեռքից չի փախցնի.

Զեր պաշտոնը ձեզ յետ տալու համար:

## ԿԱՍՏՈՒՅ

**Սակայն և այնպես յես խնդրում եմ ձեզ՝**

**Ցեթե կարծում եք, վոր անհարմար չե և կարելի ե,**

Միջոց տվեք ինձ՝ կարճ ժամանակով  
Դեղղեմոնային առանձին խոսեմ:

ԱՐԴԻՇԱ

Ներս յեկեք, խնդրեմ.  
Յես ձեղ կը տանեմ մի տեղ, ուր ազատ  
Զեր սրտի ուղածն ասել կարենաք:

ԿԱՍՏՈ

Շնորհապարտ եմ:

Դնում են

ՏԵՍԱՐԱՆ ՑԵՐԿՐՈՐԴ

Կիողոս, մի սենյակ զզակում

Մանում են Արևիլոն, Յազոն յեզ մի Տաճի աղնվական եւ

ԱԲ-ԵՎԼՈ

Յաղի,

Այս նամակները տուր նալապետին,

Յեղ ասն նրան, վոր հարգանքներս հայտնե Աննատին.

Այդ անելուց յիտ, յես ման եմ դալու կառուցումներում:

Արթ, դանիք ինձ,

ԱԱ-Դ

Շատ բարի, տեր իմ:

ԱԲ-ԵՎԼՈ

Պարոններ, կուզե՞ք այն ամրությունը տեսնելու դնանք:

ԱԶՆՎԱԿԱՆԱՆԵՐ

Կողասավորենք Զերդ Հարգության,

Գնում են

ՏԵՍԱՐԱՆ ՑԵՐՈՐԴԻ

Եիպրոս. գոյակի պարտեզը

Մոնում Ան Գեղին մոնաց, Կասսիոն յեկ Եմիլիան

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ.

Յեղիք դու վստահ, սիրելի կասսիոն,  
Իմ բոլոր ուժը կը դործադրեմ քեզի ի նպաստ:

ԽՄԻԼԻԱ.

Արեք, տիրուհի, ասեմ՝ ամուսինս այնպես տիրել ե,  
Վոր կարծես զործը իրենը լինի:

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ.

Ի՞նչ աղնիվ մարդ ե,  
Մի տարակուսիր, սիրելի կասսիոն,  
Ցես այնպես կանեմ, վոր տերըս և դուք  
Առաջվա նման բարեկամ լինեք:

ԿԱՍՏԻՈ

Բարեսիբատ տիկին,

Միքայել կասսիոն կա ու կը մնա ձեր անկեղծ ծառան:  
Ի՞նչ ել գլուխն զաւ

ԴԵՐԴԱՆՄՈՒԱ

Այս, լավ դիտեմ, շնորհակալ եմ.

Սիրում եք տիրոջո, վաղուց եք ծանոթ,

Ցեզ վստահ յեղեք՝ նա ձեղնից այնքան հեռու կը

մնա,

Վորքան վոր պետք ե իրը խոհեմությունու

ԿԱՌԱՒԱ

Այս, բայց, տիկին,

Այդ խոհեմությունը կարող ե յերկար, շատ յերկար  
տևել

Կամ թե այնպիսի ջըրիկ ե անհյութ կրակով սնվել  
կամ դիպվածներից նոր ծնունդ առել,

Վոր, յես բացակա, ալաշտոնս ուրիշին արդած լինելով  
Իմ դորապնաը կարող ե սերըս և ծառայությունս  
իսուառ մոռանալ:

ԴԵՐԴԱՆՄՈՒԱ

Մի տարակուսիր,

Այս եմիլիայի ներկայությանը քեզ խօսք եմ տալիս,  
Վոր քս ալաշտոնսը յետ կը տրիփի քեզ։ Ապահով յեղիք,

Ցեմի յես յերդվեմ բարեկամություն՝ կը գործադրեմ  
Մինչեւ վերջին կետն. ել հանդստություն չեմ տա իմ  
տիրոջ,

Քունը կը կարեմ, այնքան կը խոսեմ մինչեւ սպառեմ  
համբերությունը,

Նրա անկողինը դպրոց կը շինեմ,

Ցեզ ճաշարանը՝ խոստովանարան.

Ամեն գործի մեջ հասսիոյի հարցը կը խառնեմ

մնվերջ-

Աւրեմն ,կասսին , զվարթ պահիր քեզ,  
Քո միջնորդուհին պատրաստ ե մեռնել , քան դատըդ  
լինել:

## ԵՄԻԼԻԱ

Տիկին , դալիս և ահա իմ տեղը:

## ԿԱՍՏԻԱ

Տիկին , թույլ տվեք գնամ այստեղից:

## ԴԵՋԴԱՆՄՈՒԱ

Խնչմա , մասցեք , լսեք խոսելըս:

## ԿԱՍՏԻԱ

Վեչ այժըմ , տիկին , ինձ վատ եմ զզում ,  
Ցեղ անհարմար ե իմ դատիս համար:

## ԴԵՋԴԱՆՄՈՒԱ

Լավ , այնպես արեք , ինչպես ուղում եք:

Կասսիոն զնում և

Մենում են Արելոն յեվ Յազն

## ԾԱՇԱ

Սա ինձ դուր չեկավ:

## ԱԹԵԼԻԱ

Ի՞նչ ասիք , Յազու:

## ԾԱՇԱ

Վոչինչ , աղնիլ տեր , կտմ յեթե .. չը դիտեմ թե ինչ ..

## ԱԹԵԼԻԱ

Կասսիոն չմը միթե , վոր իմ կնոջից հիմա ըածանվեց:

ԱՅ. 9-2

Կասախմն,.. վիչ, տեր իմ, չեմ կաբող կարծել,  
Վոր նա այս ձևով դռւրս կը սողոսկեր հանցավորի  
աղեա,  
Հենց վոր ձեզ տեսներ:

ԱԲ-Ա. 3. 8

Վասահ եմ նա եր:

ԴԱԶԴՆԵՄՈՒԱ.

Ի՞նչպես ես, տեր իմ.

Հենց այս ըստնյիս յիս խոսում եյի մի խնդրովի հետ,  
Վոր քո շնորհից դրկված լինելով՝ հալվում մաշվում ես

ԱԲ-Ա. 3. 9

Ո՞ւմն ես ակնաբեկում:

ԴԱԶԴՆԵՄՈՒԱ.

Յո տեղակալին, բարի Կասախոյին, իմ բարի տերըս,  
Յեթե շնորհք ունիմ կամ կարողություն սիրտ  
շարժելու՝

Խնդրում եմ խեկույն հաշտվես նրա հետ  
Թե ճիշտ չը լինի, վոր նա խեկապես նվիրված ե քեզ,  
Յեվ մեղանչել ե անդիտությունից, վոչ նենդությունից,  
Յես զուրկ կը լինեմ դատողությունից  
Մի պարկեշտ յերես ճանաչելու մեջ.  
Ապաչում եմ քեզ, յետ կանչիր նրան:

ԱԲ-Ա. 3. 9

Նմ եր այստեղից դռւրս գնացազը,

ԴԱԶԴՆԵՄՈՒԱ.

Այս, նա ինքն եր,

Այնպես ընկճված, վոր իր տխրության մի մասն ինձ  
թողեց,  
Վոր իր հետ ցավիմ, Բարի սիրելան, յետ կանչիր  
նըան:

ՈԹԵԱԼՅԱ

ԱՆԺԻՀ Դեղպեմոն, վոչ թե ճիշտ հիմա, այլ ուրիշ  
անդամ:

ԴԵՋԴԱՄՈՒԱ

**ՇՈՒՄՈՎ ԿԸ ԸՆԻՇ**

ՈԹԵԱԼՅԱ

ՇՈՒՄՈՎ քանի վոր դու ինքդ ես ինդրում:

ԴԵՋԴԱՄՈՒԱ

**ԱԼ ԳԻՉԵՐ ԸՆԹՐԻՇՔԻՆ:**

ՈԹԵԱԼՅԱ

**ՎՈՐ ԱՅ ԳԻՉԵՐ ՎՈՉ:**

ԴԵՋԴԱՄՈՒԱ

**Լավ, վաղը ճաշի՞ն:**

ՈԹԵԱԼՅԱ

Յես վաղը տանը չպետք եւ ճաշեմ:  
Գնդապետներին պետք եւ հանդիպեմ՝ բերգաքաղաքում:

ԴԵՋԴԱՄՈՒԱ

**Լավ, այն ժամանակ վաղը ընթրիքին.**

Կամ յերեքշարթի առավոտ, կամ թե նույն որ  
կեսորին,

Կամ թե դիշերը, կամ չորեքշարթի.  
Խնդրեմ, որն աստ. բայց վոչ ավելի, քան թե յերեք  
որ.

Հավատացնում եմ, շատ և պղջացել  
Յեզ Նրա մեղքը, մեր սովորական դատելու ձեռվ,  
—թեն, ասում են, կուլի ժամանակ  
Պետք եւ լավիերը որինակ դառնան—  
Դրեթե մի մեղք չե, վոր արժանի լինի մասնավոր  
պատժի,

Յերբ կարող եւ գալ ասա, Ոթելու ինքս ինձ  
ասում եմ,  
Ի՞նչ կա աշխարհաւմ, վոր ինձնից խնդրես և յես քեզ  
մերժեմ,

Կամ թե այս ձեռվ տատամսած կանդնեմ:  
Ի՞նչ մեծ բան եւ վոր... սա նույն կասօթոն ե,  
Վոր միշտ քեզ հետ եր՝ յերբ գալիս եյիր ինձ  
դարպասելու.

Յեզ ամեն անգամ յերբ յես քեզ մի քիչ բամբասում  
եյի՝  
Թո կողմն եր բանում, և հիմա վորքան դժվար ե  
դարձել  
Նրան յետ բերելի Հավատացնում եմ շատ բան  
կանեյի...).

#### ՈՐԵԱԼԱ

Բավ ե, խնդրում եմ. թող զա յերբ ուզե,  
Յերբ վոր չեմ կարող քեզ վոչինչ մերժել:

#### ԴԱՅԱՆՄՈՒՄ

Ի՞նչ խսք, զա մի շնորհ չե.  
Դա այսուիսին ե, վորպես թե խնդրեմ, վոր ձեռնոց  
հաղնես

Կամ սննդարար կերակուր ուտես, կամ քեզ տաք  
պահես,  
Կամ մի բան անես սեփական անձիդ և ոգտիդ  
համար.

ԶԵ, յեթե մի որ մի բան աղերսեմ,  
Վորով ուզենամ քո սերը փորձել՝  
Ո՛, դա կը լինի խիստ ծանրակշիռ, խիստ դժվար մի  
բան,  
Վորի շնորհը սարսափելի յեւ

ՈԹԵԱՀՅ

Վոչինչ չեմ մերժի,  
Դրա փոխարեն յես ել քեզանից այս բանն եմ  
ինդրում  
Մի քանի բոպե առանձին թող ինձ,

ԴԵԶԴԱՄՈՆԱ

Մերժեմ յես քեզ այդ, վոչ, մնաս բարով, սիրելի  
տերըս:

ՈԹԵԱՀՅ

Գնաս զու բարով, իմ Դեղդեմոնա, յես խոկույն կդամ:  
ԴԵԶԴԱՄՈՆԱ

Արի, Եմիլիա:—Թող այնպես լինի, ինչ հաճո յե քեզ,  
Ի՞նչ ել վոր լինես՝ հնազանդ եմ, ընդմիշտ:

ԴԵԳԴԵՄՈՆԱ գնում և դուրս Սմիլիայի ենա

ՈԹԵԱՀՅ

Անդին արարած, հոգիս կործանվի թե քեզ չեմ  
սիրում,  
Ցերք չսիրեմ քեզ՝ ուրեմն քառուը վերադարձել են

## ՅԱԴՐ

իս աղնիիլ տեր...

## ՈԹԵԼՆ

Ի՞նչ ես ասում, Յազ:

## ՅԱԴՐ

Յեթև իմ տիրուհուն դարպասում եյիք,  
Միքալել կասսիոն դիտմբը ձեր սերը:

## ՈԹԵԼՆ

Այս, սկզբից մինչև վախճանը ինչժե ես հարցնում:  
ՅԱԴՐ

Միայն իմ խոհի գոհացման համար.  
Մի վատ բան չկա:

## ՈԹԵԼՆ

Ի՞նչ խոհ, Յազ:

## ՅԱԴՐ

Յես չեյի կարծում, վոր նա ծանոթ եք իմ տիրուհու  
հետ:

## ՈԹԵԼՆ

Այս, ծանոթ եք, և հաճախ նա եք միջնորդը մեր մեջ:

## ՅԱԴՐ

Իրանի:

## ՈԹԵԼՆ

Իրանի, հա իբավ, միթե դրա մեջ մի բան ես տեսնում,  
Միթե պարկելա չե Միքայել կասսիոն:

ՅԱԿՈ

**Պարկեղշտ,** տեր իմ:

ԱԹԵԼՅՈ

**Պարկեղշտ,** հա, պարկեղշտ:

ՅԱԿՈ

**Վորքան յես գիտեմ, այո, պարկեղշտ եւ:**

ԱԹԵԼՅՈ

**Ի՞նչ ես մտածում:**

ՅԱԿՈ

**Մտածում, տեր իմ:**

ԱԹԵԼՅՈ

**Մտածում, տեր իմ.****Յերկինքը վկա, արձադանդի պես ասածս և կրկնում.  
Կարծես թե մտքում մի ճիվաղ ունի,****Այնպես սոսկալի, վոր ուրիշին չի կարելի ցույց տալ:  
—Անպատճառ մի բան ուզում ես ասել.****Հենց այս բողեյիս, յերբ կասսիոն գնաց իմ կնոջ  
մոտից****Այսպես ասացիր, «Սա ինձ դուք չեկավ»: Ի՞նչը դուք  
չեկավ.****Յերբ յես ասացի թե նա իմ սիրո բոլոր ընթացքում  
Խորհրդակիցս եր՝ ասացիր «իրմվ»,****Հետո հոնքերըդ ալնպես կծկեցիր և ժողովեցիր,****Կարծես ահաելի մի միտք թաղեցիր ուղեղիդ մեջը:****Թե ինձ սիրում ես՝ ցույց տուր ինձ միտքըդ:**

ՅԱԿՈ

**Տեր իմ, դուք դիտեք, վոր սիրում եմ ձեզ:**

## ԱԹԵԼՅՈ

կարծիմ սիրում ես, և վորովհետեւ դիտեմ թե սիրացք  
լիցուն և սիրով և պարկեշտությամբ,  
Յեզ ամեն մի բառ ասելուց առաջ չափում կշռում ես,  
Հենց այդ պատճառով այս ընդհատումներդ  
ինձ ել ավելի յերկյուղ են ազգում։  
Այդ տեսակ բաներ մի կեղծ և խարդախ սրիկայի մեջ  
Շատ սովորական ձեռցումներ են։  
Բայց մի մարդու մեջ, վոր ուղղամիտ ե՞  
Դրանք թագնը ված մեղադրանքներ են սրտից դուրս  
բղխած,  
Վոր կիրքը զսպել չի կարողանում։

## ՅԱԴԱ

Ինչ վոր կասսիոյին վերաբերում ե՞  
Կարող եմ յերդվել, վոր պարկեշտ մարդ եւ

## ԱԹԵԼՅՈ

Յես ել եմ կարծում։

## ՅԱԴԱ

Բայց պետք և մարդիկ հենց այն լինելին, ինչ վոր  
թվում են,  
Կամ նրանք վոր չեն, շատ լավ կը լիներ, վոր  
չթվային։

## ԱԹԵԼՅՈ

Այս, ամեն մարդ պետք և այն լիներ, ինչ վոր թվում են  
ՅԱԴԱ

Յես ել ուրեմն կարծում եմ կասսիոն մի պարկեշտ  
մարդ է։

## ՈՐԵԱՆՆԱ

ԶԵ, այդ բանի մեջ մի ուրիշ բան կա.

Խնդրեմ, խոսիր ինձ վորպես թե ինքըդ քեզ հետ ևս  
խոսում,

Յեվ վորոճում ես մտմտուքներըդ,

Տուր ամենավատ մտածութերիդ ամենավատ բառեր:

## ՅԱԴԱ

Բայց վոչ, ներեցեք, սիրելի տեր իմ,

Թեև ամեն կերպ ծառայություններ պարտական եմ

ՃԵՂ,

Բայց պարտ չեմ մի բան, վորի մեջ նույնիսկ գերին  
աղատ և

Խոհեմըս հայտնել. ոհ, դուցե ստոր, սիալ խոհեր  
են.

Վեր պալատըն ե, ուր անարդ բաներ ներս չսողոսկեն.

Մվ ունի մի կուրծք այնպես անապակ,

Ուր կեղտոտ խոհեր ատյան չկազմեն,

Յեվ որինավոր խորհուրդներին կից դատի չը բաղմեն,

## ՈՐԵԱՆՆԱ

Յաղո, դավաճան յեղած կը լինես բարեկամիդ դես՝

Յեթե կասկածես, վոր մարդիկ նրան անիրավում են,

Յեվ հեռու պահես մտածութերըդ նըրա ականջից:

## ՅԱԴԱ

Բայց աղաչում եմ... գուցե սիալ են յենթադրածներըս,

Յեվ պետք և ասեմ, վոր մի ախտ ե դա իմ ընության  
մեջ՝

Հանցավոր բաներ տեսնել ամեն տեղ, և իրավ, հաճախ

Կասկածող միտքըս մեղք և համարում բաներ, վոր  
մեղք չեն:

Խնդրում եմ վոր ձեր խոհեմությունը դեռ ուշ չը  
դարձնե:

Մի մարդու վրա, վոր այսքան հոռի կարծիքներ ունի,  
Յեզ վոչ ել նրա ցըիվ, անհաստատ նկատածները  
իդուր ձեզ համար մորմոք դարձնեք:

Դա վոչ ողատշան և ձեր անդորրաւթյան, վոչ ել ձեր  
ողտին,  
Վոչ իմ մարդության և պարկեշտության, վոչ ել իմ  
լսելքին,  
Վոր ձեզ իմացնեմ իմ խորհուրդները:

## ՈԹՆԵԼՈ

Խ՞նչ ևս ուղում ասեմ

## ԱԱԴՈ

Բարի անօւնը, աղնիի տերս, մարդու և նաև կնոջ  
Հողու ուղղակի գոհար և աղնիիլ.  
Ով վոր քսակս գողանա ինձնից, միայն ավելցուք  
գողցած կը լինի:  
Մի բան ե, վոչինչ, իմս եր, նրանն ե,  
Յեզ հաղարների զերին ե յնդել.  
Բալց ով ինձանից անունըս շորթե՝  
Մի բան կը շարթե վոր բնավ իրեն չի հարստացնի,  
իսկ ինձ հոգաւզես կաղքատացնի:

## ՈԹՆԵԼՈ

Յերկինքը վկա, քո խոհերը յես պետք ե իմանամ:

## ՅԱԿԱ

Զեք կարող, նույնիսկ յեթե իմ սիրալ ձեր ձեռքում  
լիներ,  
Ցեզ չեք իմանա՞ք քանի իմո և նա:

## ՈՐԵԱՀԱ

ՀԱՅԻ

## ՅԱԿԱ

Ո՛ զգուշ, տեր իմ, խանդուառւթյունից.  
Կանաչ աշքերով դա այն ճիվաղն ե,  
Վոր ինքն ե ստեղծում այն կերակուրը վորով մնվում ե,  
Յերջանկության մեջ ե այն կավատը,  
Վոր լավ գիտակ ե իր անբախտության,  
Բայց և չի սիրում իրեն խաբողին.  
Ո՛, ինչ անիծված ըոպեներ կապրի  
Նա, վոր սիրում ե, և կասկածում ե,  
Վոր կռահում ե, բայց այնուհանդերձ խորը սիրում եւ

## ՈՐԵԱՀԱ

Ո՛, թշվառություն:

## ՅԱԿԱ

Աղքատ ու գոհը հարուստ ե, և շատ.  
Բայց ով անդադար աղքատանալու յերկյուղի մեջ ե,  
Այն մարդու համար անսահման գույքն ել այնուես  
աղքատ ե,

Ինչպես ձմեռը, վողորմած յերկինք,

Փրկիք իմ տոհմի ըոլոր հոգիներն խանդուառւթյունից:

## ՈՐԵԱՀԱ

Ինչի՞ն համար են այս ասածները.

Կարծում ես թե յիս նախանձու մարդու կյանք կը  
վարելի

Ամեն նոր լուսնի նոր կասկածներով կը հետեւելի՞,  
Յերբեք Մի անդամ կասկած հղանալ, իսկույն  
վճռել ե,

Դու ինձ այծի հետ կարող ես փոխել,  
Ցեմե արագիսի վրուն ու փչած յենթադրություններ  
Իմ հոգու համար բան ու գործ շինեմ, քո ասած ձեռվ։  
Մարդ չի կարող ինձ խանդոս դարձնել

Ասելով թե կինս դեղնցկուհի յե, սիրում ե ճաշել,  
Սիրում ե լինել ընկերության մեջ, ազատ ե խոսում,  
Ցերպում ե, նվազում և լավ ել պարում,  
Լսիր, յերբ կինը առաքինի ե,

Դրանք ավելի առաքինի են,  
Ցեզ վոչ ել իմ քիչ արժանիքներն են,  
Վոր ամենադույզն վախ են ինձ ազդում,  
Կամ կասկածը թե ազստամբվել ե.

Աչք ուներ, տեսավ և ինքն ընտրեց ինձ։  
Վոչ, Յակո, յերբեք յիս պետք ե տեսնեմ նախքան  
կասկածեմ,

Ցերբ վոր կասկածեմ, պետք ե հաստատեմ,  
Իսկ յերբ հաստատեմ, վոչինչ չի մնա, յեթի՝ վոչ միայն  
այս—

Հեռու ինձանից և՛ սեր, և՛ նախանձ։

#### ՏԱՐԱ

Շատ լավ, ուրախ եմ, ուրեմքն հիմա ազատ կարող եմ.  
Անձնվիրությունս ու սերըս ցույց տար  
Քանի վոր հիմա պարտ եմ ճիշտ խոսել ահա  
Խորհուրդը,

Յես գեռ չեմ խոսում ապացուկցներից.

Աչքներըդ բացեք ձեր կընոջ վրա.

Զննեցեք նըրան, թե Կաստիոյի հետ բնչպես ե-

վարվում:

Նայեցեք այսպես, վոչ խանդոտի պես, վոչ ել միամիտ.

Յես չեյի ուղի, վոր ձեր վեհանձըն և աղնիվ սիրաը

Հենց իր բընածին բարության համար շահագործըվի.

Աչքներըդ բացեք. մեր յերկրի բարքերն ինձ լավ

ծանոթ են.

Վենետիկում կանայք չեն քաշվում յերբեք յերկնքին

ցույց տալ

Իրենց ախտերը՝ միայն թե ծածկեն ամուսիններից,

Նրանց մոտ խիզճը վոչ թե չանելն ե, այլ թաղցնելու

#### ԱԲԱԼՅՈ

Այսպես ես կարծում:

#### ԹԱՐՅԱ

Իր հորը խաքեց՝ ձեղ հետ պսակվելով.

Եերբ ցույց եր տալիս թե դոդողում ե և զարհուրսում ե  
Զեր նայվածքներից, հենց նա սիրում եր ամենաշատը:

#### ԱԲԱԼՅՈ

Այս, այլողես ե:

#### ԹԱՐՅԱ

Ուրեմն հասկացեք,

Նա, այնքան ջահել և կարողացավ այդպես յերենալ

Փակեց հոր աչքը, ինչպես կաղնեղուռ,

Այնպես վոր հայրը մի կախարդունու կարծեց

ապջիան, —

Բայց վատ եմ անում, շատ աղաչում եմ, վոր ներող  
լինեք

Զեղ այսքան սաստիկ սիրելուս համար:

ԱԹ-ԵԼ, Յ

Յազո, քեզ ընդմիջութ յերախտապարա եմ:

ԱԹ-Դ

Տեսնում եմ, վոր այս ձեղ մի քիչ հուզեց:

ԱԹ-ԵԼ, Յ

Վոչ բնավի, բնավի:

ԱԹ-Դ

Իրավի, կարծում եմ: Հույս ունեմ, վոր դուք այս  
խռովածները

Իմ սիրուց բղխած պլիտի համարեք.

Բայց նկատում եմ, վոր դուք հուզված եք:

Գևաք և ձեղ խնդրեմ, վոր իմ ասածները այնքան  
ձիգ չը տաք,

Վոր շոշափելի փաստի ձև տոնեն,

Վոչ ել ավելի ծավալ տաք նըրանց, քան մի կասկածի:

ԱԹ-ԵԼ, Յ

Միամիտ յեղիբ:

ԱԹ-Դ

Թե որդուս անեք, սիրելի տերը,

Խօսքերս այսուս վատ մի հետեւանքի կարող են  
հասնել

Վոր շատ հեռու յե իմ նողատակից:

Միքայել կասոիոն լավ բարեկամս ես..

Տեր իմ, տեսնում եմ, վոր վրդովված եք:

ՕՐԵՎԻՆԱ

Շատ վրդովզած չեմ.

Զեմ կարող կարծել վոր Դեղդեմոնան անկեղծ չի  
լինի:

ՕՐԵՎԻՆԱ

Շատ ապրի այդպես. գուցե ել շատ ապրեք այդ  
մտածումով:

ՕՐԵՎԻՆԱ

Ստկայն և այնպես՝ գուցե ընությունը ճամբից  
շեղվելով...

ՕՐԵՎԻՆԱ

Ահա բուն կետը, ինչպես—թույլ տվեք լինել  
հանդուղըն—

Մերժել իր ձեռքը այնքան շատերին  
իր յերկրի, գույնի և աստիճանի,  
Վարոնց տեսնում ենք, ամեն բաներում ընությունն  
հակվում ե—  
Փուհ, մարդ կարող ե գարշելի մի տենչ հոտքուն  
այլանդ,

Կեղտուտ հակումներ, անքնական մտքեր, Բայց  
ներեցեք ինձ,

Զեմ խոսում նրա մասին ուղղակի,  
Թեև վախ ունիմ, վոր նրա կամքը  
Վերադառնալով իր ավելի լավ դատողությանը՝  
Զեղ իր յերկրացի տղամարդկանց հետ սկսի չափել  
Յեզ դուցե դղջաւ:

ԱԹԵՆԻԱՆ

Դնասո բարով, դնասո բարով:

Յեթե ավելին դու ընդնշմարես՝ հենց ավելին ել ինձ  
տեղեկացրու:

Հեռացիր, Յագո:

ՕՊԵՐԱ

ԱԽԱԲՈՋԻՆԻ

Թույլ ավեք, տեր իմ:

ՕԹԵՎԱԼՈ

Ի՞նչու, մեն, ինչու, յես ամուսնացաւ:

Այս պարկեղտ մարդը, շատ բան և տեսնում, շատ բան  
ել դիտէ:

Անշուշտ ավելին քան թե հայտնում եւ

ՕՊԵՐԱ

ՎԵՐԱԴԱՊԵՏՈՒ

Տեր իմ, կռւղեյի հայցել ձեղանից,

Վոր այս խնդիրը որանից ավելի չպրալտեյիք.

Թողեք ժամանակին, թեև հարմար եւ,

Վոր Կասսիոն կրկին պաշտոնին կանչիլի,

Քանի վոր այնողիս մեծ կարողությամբ վարում եւ նա  
այն,

Բայց յեթե հաճեք մի առ ժամանակ հեռացած պահել,

Այդուհո կարող եք լավ դնենել նրան

Յեկ այս միջոցը, վոր դործ կը դնե,

Տեսնել թե ձեր կինն արդյոք շատ սասաթիլ,

անհամբեք կերպով

Զի ստիպի արդյոք, վոր նրան կրկին պաշտոնի  
կանչեք.

Դրանից շատ բան հայտնի կը լինի, Մինչև այդ,  
տեր իմ,  
ինձ նկատեցեք սաստիկ ժրաջան իմ յերկյուղի մեջ,  
—թել իսկապես ել շատ լուրջ վախ ունիմ, վոր  
հենց այդպես եմ—  
Թողուցեք աղատ ձեր բարի կնոջն, զիմում եմ անում  
ձերըդ հարգության:

ԱՓԵԱ.Ա.Յ

Իմ վարմունքիցը դու մի վախենա:

ՏԱՂԱ

Նորից թույլ տվեք, վոր յես հեռանամ:

ԳԱՎԱ

ԱՓԵԱ.Ա.Յ

Արտաքո կարգի պարկեշտ մարդ ես սա, և հմուտ մտքով՝  
Գիտե մարդկային ամեն մե գործի բուն եռթյունը:  
Ցեթե համոզվեմ, վոր մատղաշ բազես վայրիացել ե՝  
Թեկուզ իմ որտեղ լարերը լինեն նրա կապերը  
Կը սուլեմ նրան դուքս, կըթողնեմ նրան դեպի  
հողմնիվար,

Գնա ըստ բախտի իրեն վորս ճարի:  
Գուցե ողատնառը այն ե, վոր ոն եմ  
Ցեղ չունեմ փափուկ ձեւը խոսքի,  
Վորոնք հատուկ են բանսարկուներին,  
Կամ այն վոր արդեն հակվում եմ դեպի ծերության  
ձորը,  
—թեպետ և վոչ շատ,—նա գնաց և յես խորը  
նախատիւծ,

Իմ ամոքումը նրան ատելն եւ  
 Անիծ յալ լինի ամ ռւսնությանը  
 Վոր մենք կարող ենք կոչել այս նրբին արարածները  
 Մերը, և ով ոչ թե իրենց առարձակներինն  
 Այիւի լազ եր լինելի մի գորտ,  
 Ապրեյի նկողի արտաշնչությամբ,  
 Թան թե պահեյի մի գաղանի անկյուն իմ սիրածի մեջ  
 Ռւրիշի համար Յեվ, սակայն, դա լե մեծերի բախտը,  
 Նրանք նվազ են առանձնաշնորհյալ, քան ստորմարդիկ,  
 Դա անխուսափելի ճակատադիր ե, ճիշտ ինչպես մահը,  
 Այս յերկայուղանի անրախտությունը վիճակվում ե մեզ  
 Յերբ կենդանություն ենք մենք զգենում։  
 Առ գալիս ե իմ Դեղդեմոնան,  
 Թե կեղծ լինի նա՝ ապա յերկինքը ինքզինքն ե ծաղրում։  
 Յես չեմ հայատում։

Վերամնում են Դեղդեմոնան յեվ Նմիլիան

#### ԴԵՐԴԱՄՈՒԱ

Բ՞նչ ե պատահել, սիրելի Ոթելլո,  
 Յո ճաշը, ինչպես ե քո հրավիրած կղզեցիները  
 Քեդ են սպասում։

#### ԱԹԵԱՅՈ

Յես եմ մեղավոր

#### ԴԵՐԴԱՄՈՒԱ

Ինչմէ յես այդոնս նվազկոտ խռոամ,  
 Հիվմնող ես, լինչ եւ

## ԹՐԵԼԼԱ

**Մի ցավ եմ զգում այստեղ՝ ճակատիտ**

## ԴԵԳԴԵՍՑՈՆԱ

**Անքնություն ե, վոչինչ, շուտ կանցնի,  
Թող ամուր կապեմ, մի ժամում կանցնի**

## ԹՐԵԼԼԱ

**Այդ թաշկինակը չափազանց փոքր ե.**

(Ձեռմավ բաշկինակը ճեռացնում ե, Դեղդեմոնան ձգում և ցած)

**Թռղ մա: Արբ, արի գնանք ներս քեզ հետ:**

## ԴԵԳԴԵՍՑՈՆԱ

**Յես շատ ցավում եմ, վոր անհանգիստ ես**

**Ոթելլան յեվ Դեղդեմոնան գնում են**

## ԵՄԻԼԱ

**Ի՞նչ լավ վոր գտա այս թաշկինակը**

**Մավրի առաջին հիատակն ե սա Դեղդեմոնային.**

**Շոշորթ ամուսինս ինձ հարյուր անգամ ասել, խնդրել ե,**

**Վոր գողանամ. բայց իմ տիրուհին**

**Այսպիս սիրում ե այս հիշատակը,**

**—Ոթելլոն նրան յերդմնցրել ե վոր լավ պահպանե —**

**Յեզ նա շարունակ ձեռին ե պահում,**

**Յեզ համբուրում ե, հետք խոսում ես**

**Պետք ե բանվածքը որինակել տամ Յակոյի համար.**

**Ի՞նչ բանին ե պետք, յերկինքը գիտե, վոչ յես. յես մշայն**

**Ուզում եմ նրա քմահաճույքը կատարած լինել**

Վերամանում և Ցագըն

ԱՐԴՅՈՒՆ

Դու լինչ ես անում այսակեղ մեն մենակը

ԱՄԻՒԴԻՆ

Դե մի չեխի ինձ, մի լավ բան ունեմ քեզի համարտ

ԱՐԴՅՈՒՆ

Հմա, մի բան ինձ համար... մի հասարակ բան կը լինի  
անշուշտ:

ԱՄԻՒԴԻՆ

Հմա...

ԱՐԴՅՈՒՆ

Ե՞ս, ունենալ մի հիմար կնիկը  
Հմ, հմ, հենց այդքանու

ԱՄԻՒԴԻՆ

Ի՞նչ կասս յիթե այն թաշկինակը...

ԱՐԴՅՈՒՆ

Դժոր թաշկինակը

ԱՄԻՒԴԻՆ

Դժոր թաշկինակը...

Այս զոր Ոթելոն առաջին անգամ ընծա յե տվել  
Դեղդիմոնային,

Այս զոր շարունակ ստիպում եյիր, զոր գողանայի

ԱՐԴՅՈՒՆ

Գողացն ես դու արդեն նրանից:

## ԱՌԵՎԱՐ

Վէչ, յերկինքը վկա, անզգուշությամբ ձեռքից վայր ձգեց  
Յևս ել պատահմամբ այնտեղ լինելով՝ գետնից վեր առին  
ՏԵս, ահավասիկ!

## ԱԱԴՅ

Ի՞նչ լավ աղջիկ ես. ինձ տուր, խնդրում եմ:

## ԱՄԵԼԻԱՌ

Բայց ինչի՞ն ե ոկետք, վոր այդքան սասարիկ հորդորում  
եյիր,  
Վոր գողանային

## ԱԱԴՅ

(Զեռնիցը ճափօտակելով)

Դա քո ի՞նչ գործն եւ

## ԱՄԵԼԻԱՌ

Եեթե կարեոր բանի համար չե, յետ տուր: Խեղճ տիկին,  
Կը խելագարվի՝ յերբ վոր նկատի, վոր կորցրել եւ

## ԱԱԴՅ

Այսպես ձևացրու, վոր դու չես տեսել, պետք ունիս  
սըան.

Գնա, հեռացիր:

Նմիլիան զնում ե

Յես կը ձգեմ այս կասսիոյի տունը, թող ինքը գանեն  
Ողի պես թեթև աննշան բաներ՝ խանդոտի աչքին  
Սուրբ զրքի նման ուժեղ փաստեր են:  
Սա շատ բան կանեւ Մավրը իմ թուխից արդեն  
փոխվում եւ

Վատ կասկածները իրենց բնույթով այն թույներիցն են,  
Վորոնք սկզբում բնավ համ չունեն,  
Բայց յերբ արյան վրա մի քիչ աղղում են՝  
Այրում են ինչպես ծծմբի հանքերը:  
Միթե չասացի. ահա դալիս եւ  
Վոչ խաշխաղը և վճչ ել տշտակը,  
Վոչ ել աշխարհի բոլոր թմրաբեր ոշարակները  
Կարող են կրկին յետ տալ յերեկվա քո անուշ քունը:  
Վերամնում ե նրելլան

## ՈԹ-ԱՒՅՈ

Խնձ դավաճանել, հմ, հմ:

## ՏԱԴԱ

Խնչ ե պատահել, բարի զորապետ,  
Այդ մասին այլաս դռւք մի մտածեք:

## ՈԹ-ԱՒՅՈ

Կորիր, հեռացիր, դու ինձ դրել ես մի պրկոցի մեջ:  
Ցերդվում եմ լավ ե շատ խարսխ լինել,  
Բայց քիչ գիտենալ

## ՏԱԴԱ

Ինչպես թե, տեր իմ:

## ՈԹ-ԱՒՅՈ

Նրա լրբության գողցած ժամերից Ի՞նչ լուր ունեյի,  
Յես չեյի տեսել, չեյի մտածել, ինձ չեր զնասել.  
Յես լավ քննեցի հաջորդ գիշերը, անհոգ ե ուրախ.  
Յեվ չդատ յես կասսիոյի համբուլը նըա շրթներին.  
Մի մարդ վոր, ասենք, կողոպավում ե

Յեղ կողոպտվածին պակասն չի զգում,  
Թող նա շիմանա և յերբեք ել նա չի կողոպտըված:

ՅԱԴԸ

Յես ցավում եմ, վոր այսպես եմ լսում:

ՅԹՆԱՅԻ.Յ

Ո՞ւ, յես յերջանիկ լեղած կլինեյի՞  
Յերի ընդհանուր զորարանակը, ռահվիրաները,  
Բոլորը նրա անուշ մարմինը ճաշակած լինեյի՞  
Միայն թե ինքըս լուր չունենայի  
Իսկ այժմ, մնաս բարով, ընդմիշտ, անդմըրը միտք,  
Մնաս բարով, դու զոհունակություն,  
Մնացեք բարով, փետրազարդ գնդեր, մեծ պատերազմ-  
ներ,  
Վոր վերտծում եք փառախրությունն առաքինության,  
Մնացեք բարով, վրնջըւն նժույդ, շռնչըւն շեփոր,  
Վոգեցմւնց թմբուկ, ականջը ծակող սրբնդ սրածայն,  
Դրոշմկ արքունի, ամեն ինչ, ամեն,  
Պերճություն, հանդես, և զրւք փառավոր պատերազմների,  
Յեղ դճւք, մահասփյուռ դուք մեքենաներ, բիրտ կո-  
կորդներով,  
Դուք վոր կեղծիքն եք անմահ Դիոսի անեղ վորուման,  
Մնացեք բարով, այլևս Ոթելոն զբազմունք չունի:

ՅԱԴԸ

Կարելի բան ե, սիրելի տեր իմ:

ՅԹՆԱՅԻ.Յ

Դու, թշվառական, պետք ե հաստատես, վոր կինըս  
բոզ ե,

Լաւի իմացիք ալդ, ողնաք և ակներեվ ապացույց տառ  
ինձ.

Թե զոչ՝ յերգվում եմ հայի տեսնական հոգուս արժեքով,  
Լաւի եթ մի շնորհ ծնոված լինելիք,  
Քան հաշիր տայիք իմ զարթնած վոխին:

## ՅԱԴ

Բանն այսո՛ղ հասավ:

## ԱԹԵԱՆ

Ինձ տեսցնել տուր, կամ գոնե այնպես հաստատիք դու  
այդ,

Վոր ցուցման վրա մի տեղ չմնա և վոչ ել մի կեռ  
Մեկ հատիկ կասկած կախ տալու համար.

Թե զոչ՝ վայ կյանքիդա

## ՅԱԴ

Իմ ազնիվ տերըս:

## ԱԹԵԱՆ

Թե ուղեցել ես նրան զբարտել և ինձ ել տանջել՝  
Ել մի աղոթիք, լքի ը այլըս ամեն ապաշավ,  
Սարսափ կուտակիք սարսափի գլխին,  
Գործեր կատարիք, վոր յերկինքը լա և յերկիքն առցի.  
Քանդի սրանից ավելի սեծ մնդք  
Չես կարող բարձել մեղքերիդ վրա:

## ՅԱԴ

Ո՞վ զողորմություն, յերկինք, ներիք ինձ,  
Մմրդ եք դուք, ունիք դուք հողի և միտք,  
Աստվածը ձեզ հետ, առեք պաշտօնըս:  
Ո՛, թշվառ հիմար, վոր ապրում ես քա

Պարկեշտությունը մեղք դարձնելու։  
 Հրեշտավիր աշխարհ, նկատիր, աշխարհ,  
 Այնել ուղղամիտ և լինել պարկեցա՝ ապահով բան չեւ  
 Ծնորհակալ եմ այս շահի համար։  
 Սրանից հետո յես չեմ սիրելու վեհ մի բարեկամ,  
 Յերբ սերն ալսոլիսի փորձանք և ծնում։

## ՕԹ-ԵՒ.Լ.Օ

Վեշ կաց, պետք եւ դու պարկեշտ մարդ լինես  
 ՏԱԴԱ

Յես պետք եւ լինեմ իմաստուն, խելոք,  
 Պարկեշտությունը մի խելազար եւ,  
 Վոր կորցընում եւ ինչ վոր շահում եւ

## ՕԹ-ԵՒ.Լ.Օ

Յերկի՞նքը վկա,  
 Մտածում եմ, վոր կինըս անմեղ եւ, և մտածում եմ,  
 Վոր անմեղ չե նա,  
 Մտածում եմ, վոր դու ճիշտ ես ասում, մտածում եմ,  
 Վոր ճիշտը չես ասում,  
 Ապացույց պետք եւ Նրա անունը, վոր այնքան թարմ ել  
 Ինչպես Դիանի, այժմ մրոտ եւ, սեվ ե նա ինչպես  
 Սեփական գեմքս Յեթե չվան, թույն, դաշույններ, կրակ,  
 Խեղող գետեր կան, յես չեմ հանգուրժի,  
 Պետք եւ ստանամ յես խոր գոհացում։

## ՏԱԴԱ

Տեր իմ, տեսնում եմ վոր բուռն կիրքը ձեր սիրան  
 ուտում եւ  
 Սաստիկ զղջում եմ, վոր յես այս բանը ձեր առաջ դըխ  
 Դուք ցանկանում եք խորը գոհացմամ։

## ԹԹ-ԵԼ.Ի.Ա

Վահ թե ցանկանում, ալլ պահանջում եմ:

## ՇԱԴՈ

Յեվ կարելի յե. բայց ինչպես, տեր իմ, ինչպես զոհանուալ  
Դուք կուղենայիք, իրը հանդիսատես,  
Այլանդակորին ըերան բաց արած,  
Աչքով տեսնելիք նրան զուդավորված:

## ԹԹ-ԵԼ.Ի.Ա

Մահ և անմեծք, մ...

## ՇԱԴՈ

Սակայն շտո գժվար կը լիներ, կարծեմ,  
Նրանց սարքել տալ այդ տեսարանը:  
Անիծված լինեն, յեթե մարդկային ուրիշ աչքեր ել  
Տեսնեն իրենց վրա բարձած ավելին քան թե իրենցը,  
Ել բնչ ուրեմն, ինչպես ուրեմն, բնչ սլիտի ասեմ,  
Գոհացումն մեր եւ  
Անհնարին ե տեսնել աչքերով,  
Մինչև իսկ յեթե լինեյին տռփոտ, ինչպես այծերը,  
Այնպես տաք, ինչպես մազոտ կապիկներն,  
Հեշտասեր ինչպես գայլերը անզումալ,  
Յեվ տխմարները այնպիս այլանդակ,  
Ինչպես գինովցած տպիտությունից:  
Բայց ասսում եմ ձեղ, յեթե հանցանքի յերեսույթները  
Հարակից զորեղ պարագաներով,  
Վոր ուղիղ տանում ե ճշմարտության դուռն են հասցնում,  
Գոհացում կը առան, կարսղ եք ստանալ:

## ԹԹ-ԵԼ.Ի.Ա

Ճաւը կենդանի փառա, վոր նա խարսմ եւ

## ՏԱԿԱ

Շատ ել չեմ սիրում յես այդ պաշտոնը.

Բայց քանի վոր այժմ այս բանում այսքան տռաջ եմ  
մղվել

Դրդված իմ հիմար պարկեշտությունից և անմիտ սերից՝  
Կը շարունակեմ:

Վերջին որերը լես պառկած ելի Կասսիոյի կողքին,  
Յեզ տառապելով ատամնացագից՝ քունը չեր տանում:  
Մարդիկ կան հոգով մի տեսակ տկար,

Վոր քնի մեջ ել խռոում են իրենց գործերի վրա.

Այսպիսի մեկն ել հենց այս Կասսիոն եւ

Նա քնած տեղը ալսպես եր ասում. «Քաղցրիկ Դեղղեմոն,  
Լինենք մենք զգույշ, ծածկենք մեր սերը»:

Յեզ հետո, աեր իմ, նա ձեռքը բռնեց և պինդ վոլու-  
րից,

Ասաց, «Ե քաղցրը արարած», հետո համբուրեց ինձ պինդ,  
Կարծես ուզում եր ամեն մի համբույբ,

Վոր բուսած լիներ շրթունքիս վրա, արմատից պոկել.  
Հետո իր ազդը դրեց վոտիս վրա, հառաչանք հանեց,  
Կըկին համբուրեց և հետօ ասաց,

«Անիծված լինի այն բախտը, վոր քեզ Մավրին վե-  
ճակեց»:

## ԱԹԵՆԱ

Ո՞ հրեշտավոր, ո՞ հրեշտավոր!

## ՏԱԿԱ

Սա Կասսիոյի միայն լերազն եր:

## ԱԹԵՆԱ

Բայց աղացույց ե մի նախկին դեղքի.

Շատ վաս նշան ե, թեպետ և յերազ.

## ՅԱԴԸ

Յեզ դա կարող եւ ուժ տայ, թերեւըս ուրիշ փառաերից  
վոր յերևում են ալժմ աղոտորեն:

## ԱԹԵԱԼՈ

Կառք առ կառք կանեմ յես նրան:

## ՅԱԴԸ

Վեչ, խելոք լեղեք, գեռ մենք չենք տեսնում վորենէ-  
մի բան,

Զեր Դեղդեմոնան դեռեւըս կարող եւ լինել շատ անձեղ,  
Բայց ալս ասացեք.

Մի ուլակներով նախշած թաշկինակ չեք տեսել յերբեք  
Զեր կնոջ ձեռին:

## ԱԹԵԱԼՈ

Հենց մի այդպիսին յես ինքս եմ տվել.  
Դա իմ ասաջին ընծան եր նրան:

## ՅԱԴԸ

Չեյի իմանում. բայց մի այդպիսին,  
— Յեզ հաստատ գիտեմ, վոր ձեր կնոջն ե—  
Յես այսոր տեսա կասսիոյի ձեռքին, մոբուքն եր-  
սըրում:

## ԱԹԵԱԼՈ

Յեթե այն լինի...

## ՅԱԴԸ

Յեթե այն լինի, կամ մի ուրիշը,  
Վոր ելի նրանն ե, այլ փաստերի հետ  
Խոսում ե ընդգեմ ելի ձեզ կնոջ:

## ԱԹԵԱԼՈ

ԱՌի, այն ստրօւկը քառառան հազար կյանք պետք է  
ունենամք,

Մեկը շատ քիչ է, չափաղանց տկար՝ իմ վրեժի համար.  
Հիմա տեսնում եմ, վոր ճշմարիտ եւ  
ինձ նայիր, Յագո, խորախոր սերըս այսպես փշում եմ  
Յերկնքին, ողին.

Դնաց.

Զարթիր, սև վրեժ, քո խոռոչավոր նկուղից մթին,  
Զիջիր թագըդ, սեր, և դահդ սրտաշեն  
Բռնակալական սև ատելության,  
Ուսիր, կծւրծք, ուսիր, քո կրած բեռով, իժերի խոյ-  
թով.

## ԱԱԳԱ

Դեռ հանգիստ կացեք:

## ԱԹԵԱԼՈ

ՈՌ, արյուն, Յագո, արյուն, մ, արյուն:

## ԱԱԳՈ

Դեռ համբերեցեք, ասում եմ. զուցե ձեր միտքը փո-  
խեք:

## ԱԹԵԱԼՈ

Վիչ, Յագո, յերբեք. ինչպես Պոնդական ծովը մռայլած,  
Վորի սառցային, բռնի հոսանքը  
Յերբեք չի տեսել հետաղարձ ծփանք,  
Այլ դիմում ե ջեղտ դեպի Պրոպոնտիկ և Հելլեսպոնտես,  
Այսպես արյունոտ իմ մտածութերն, կատաղի թափով  
Զըպետք ե յերբեք դեպի յետ նայեն,

Յեվ յետ ընկրիին դեպի խոնարհ սեղ,  
Մինչև վոր հղոր և լայն մի դրեժ կուշ տու բռլորին։  
Այժմ մարմարյա յերկինքը վկան,  
Ի պատիվ իմ այս սրբազան ուխտի՝  
Զօհում ե

Յերգում եմ անում։

#### ԱՎԵՐ

Դեռ մի վեր կենաք (Չոքում ե):  
Վկա յեղեք դուք, մշտավանու լույսեր,  
Դուք, ապարեք, վոր մեղ զրջապատում եք,  
Վկա յեղեք դուք, վոր Յագոն այսաեղ ուխտում ե  
Ճռնել  
Խը խելքի, ձեռքի և սրտի բոլոր ունակությունը  
Խարդած Ոթելոյի ծառալությանը։  
Թհղ նա հրամայե,  
Խսկ հնաղանդելն խղճի պարտք ե ինձ,  
Խ՞նչ արյունահեղ զործ ել վոր լինի։  
Վեր են կենում

#### ԱՎԵՐԱՐ

Վրդջունում եմ սերդ՝  
Վճչ թե ընզունայն շնորհակալությամբ,  
Այլ սիրահոժար ընզունելությամբ։  
Յեվ իսկույն և յեթ ձեղ գործ եմ հանձնում։  
Յերեք որվա մեջ ինձ պետք ե ասես, վոր Կառսիոն  
մեռած եւ

#### ԱՎԵՐ

Բարեկամու մեռավ, և դա կատարվեց

Զեր իսկ պահանջով։

Սակայն թույլ տվեք աիրուհին ապրի։

ԱՅ-ԵՎ-Լ-Յ

Դժմիք, վրբ բողը, դժմիք և անենք։

Յնկ առանձնանանք, յես պետք և գնամ մի միջոց  
գտնեմ

Զքնաղ այդ գեզին շուտ սպանելու։

Իսկ հիմա դու ես իմ տեղակալը։

ԱՅ-Դ-Յ

Զեր անձնվերը մինչև հավիտյան։

Գնում են

### ՏԵՍԱՐԱՆ ՁՈՐՌՈՐԴ

Դոյակի ռռաջ

Մանում են Դեղդեմանան, Եմիլիան յեվ խեղիատակը

ԴԱԶԴԱՆՄՈՒԱ

Դու պիտիս, տղա, վորտեղ և տեղակալ կասսիոն զըստ  
նվաւմ։

ԽԵՂԿԱՑԱԿ

Եւս չեմ հանդգնում ասել, վոր նա ստում և մի  
վորեն տեղ \*)։

ԴԱԶԴԱՆՄՈՒԱ

Ինչմւ, մարդ

\*) Խեղիատակի պատասխանը ըստախաղություն եւ Անդ-  
քերինում գտնվել (պառկել) մէկնուրի և ինչ զոր ասել սահմանական  
յեղանակը յեղակի, յեղորդ գեմքու մէ

ԽԵՂԱԿԱԾԱԿԱ

Նա զինվոր ե, և մի մարդ, վոր ասում և թե զինվորը  
ստում ե՝ խոցելի յեւ

ԴԱԶԴԱՆՄՈՒԱ

Ձեռք քաշիր, վմբուղ և բնակվում։

ԽԵՂԱԿԱԾԱԿԱ

Յեթե ձեղ ասեմ թե վորտեղ և բնակվում նա, ողբաց և  
սուստ ասեմ։

ԴԱԶԴԱՆՄՈՒԱ

Սրանից կարելի յե մի բան հասկանալ,

ԽԵՂԱԿԱԾԱԿԱ

Չեմ իմանում թե վորտեղ երնակվում և յեթե իմ կողմից  
հնարեմ մի բնակարան և ասեմ թե այստեղ և  
բնակվում կամ այստեղ՝ դա կը լիներ սուստ

ԴԱԶԴԱՆՄՈՒԱ

Կարմաղ ես հարց ու փորձել և մի պատասխան բերել  
ինձ։

ԽԵՂԱԿԱԾԱԿԱ

Յես նրա համար վողջ աշխարհին քրիստոնեական ՝)  
կը կարդամ,  
այսինքն հարցեր կտամ և պատասխան կտանամ։

\* ) Թրիստոնեական դրժերի (catechism) հարց ու պատասխանի ձևին և ակնարկութեւ

## ԴԱՇՆԱՄՈՒԱ

Վերընիք նրան և ասա զուտ գա այստեղ, ասա՝  
ամուսնուս  
համոզել եմ իր ոգտին և հռչյա ունեմ, վոր ամեն ինչ  
լավ կը մինի:

## ԽԵՂԿԱԾՈՒԱ

Այդ բանն անելը մարդու կարողության սահման-  
ներումն ե, ոստի կը փորձեմ անել:  
զնում ե

## ԴԱՇՆԱՄՈՒԱ

Եմիլիա, Թաշկինակս վժրտեղ պետք ե կորցրած լինեմ:

## ԽՄԻԼԻԱ

Չգիտեմ, տիկին:

## ԴԱՇՆԱՄՈՒԱ

Հավտացնում եմ ավելի լավ եր  
Կրուզաղոներով լոցուն քսակըս կորցրած լինեյի:  
Թե ազնիվ Մավրըս բարեմիտ չլիներ  
Ցեզ զերծ այնպիսի նվաստությունից,  
Ինչպիսիներն են նախանձուները՝  
Հենց այս կրավեր  
Նըրան վատ բաներ մտածել տալու

## ԽՄԻԼԻԱ

Միթե խանդոտ չեն:

## ԴԱՇՆԱՄՈՒԱ

Ո՞վէ նմ.

Կարծիմ արել, վորտեղ ծնվել ե,  
Ամեն այլպիսի տրամադրություն քաշել և նըանից:  
ՆՄԻՒՅԱ.

Տեսեք, դալիս ե:

ԴԵԳԴԱՆՄՈԱ

Բաց չեմ թողնի նըան մինչև կասսիոյին յետ կանչել  
Հուամ:

Մանում և Որելլոն

ԽՇԱՊԵՍ ես, իմ տեր:

ՕԹԵՎԱԼԱ

Լավ եմ, տիրուհիս: (Առանձին) և, բնչ դժվար և  
կեղծավորվելու<sup>1</sup>  
Իսկ դու լինչպես ես, Դեղդէմոնա:

ԴԵԳԴԱՆՄՈԱ

Լավ, իմ բարի տեր:

ՕԹԵՎԱԼԱ

Տուր ինձ քո ձեռքը, այս ձեռքը խոնավ ե, իմ տիր  
ըուհիս:  
ԴԵԳԴԱՆՄՈԱ

Նու գես չի զգացել տարիքը, վոչ ել զիտե տիրու-  
թյուն:

ՕԹԵՎԱԼԱ

Սա ցույց է տալիս մրգավետություն, ազատասեր սիրա.  
Տաք, տաք և տամուկ, սա պահաջում ե  
Հրաժարումըն ազատությունից, հարկավոր ե ծոմ,  
Աղոթք և պատիժ և ճգնություններ,

Այստեղ մի ջահել և քրտնաթոր դեվ կա,  
Վոր սովորաբար ըմբռատանում եւ  
Լավ ձեռք ե,  
Բազմառատ

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ

Իհարկե այրպես կարող ես ասել,  
Հենց այդ ձեռքն եր, վոր սիրտըս քեղ ավեց,

ՈԹԵԱԼՈ

Առատաւեր ձեռք, Հնում սրտերը տալիս եյին ձեռք,  
Բայց մեր հիմտկվա զինանշանը ձեռքն ե, վոչ սիրտը

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ

Այս բանի մասին չեմ կարող խոսել  
Տևնենք խոստումը

ՈԹԵԱԼՈ

Ի՞նչ խոստում, վառյակի

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ

Մարդ եմ ուղարկել կասսիոն գա այստեղ և խոսի քեզ  
հետո

ՈԹԵԱԼՈ

Մի ջատ խիստ հարբուխ նեղացնում ե ինձ.  
Թաշկինակըդ տուր!

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ

Ահա, սիրելիս,

ՈԹԵԱԼՈ

Իմ ընծայածը

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ

Առաըս չե հիմատ

## ԱԲ-ԱԼ, Յ

Վ. Բ. Հ.

## ԳԵԶԴՆԵՄՈՒԱ

Այս, տեր իմ:

## ԱԲ-ԱԼ, Յ

Դա մի հանցանք եւ

Այդ թաշկինակը մի Յեգիպտուհի տվել եր մորըս.

Մի կախարդ կին եր, վոր զիաեր կարդալ մարդկանց  
մտքերը.Դա մորս տսել եր, վորքան վոր պահե այդ թաշկի-  
նակը՝

Դա սիրո հմաւք կը բաշխե նըրան,

Յել հորըս սիրուը կապված կը լինի նըրա սիրովք.

Բայց յեթե կորցնե, կամ ուրիշին տա՞-

Հայրս կոկուի զզվել նրանից,

Յավ նըրա տենչը նոր հրապուրանքներ կոկոի փնտռել

Մայրըս մեռնելիս ինձ տվալ՝ ասաց՝ վոր յեթե բախտը  
ինձ կին շնորհնե, յես ել նրան տած.

Այդպես ել արի. ուրեմն զդույշ կաց.

Աչքիդ լույսի պես գուրգուրա վրան:

Յեթե կորցնես կամ ուրիշին տաս՝

Դա մի այնպիսի կորուստ կը լինի,

Վորին վոչ մի բան չի հավասարվի:

## ԳԵԶԴՆԵՄՈՒԱ

Կարելի՞ բան եւ

## ԱԲ-ԱԼ, Յ

Դա ճշմարիտ ե. հյուսվածքի մեջ կախարդություն կա.

Մի Սիրիկուհի, վոր յերկու հարյուր արևի շրջան

Հաշվել եր արդեն այս աշխարհքի մեջ  
 Մարդարեյական իր մոլուցքի մեջ կտորն և հյուսել՝  
 Սրբազն վորդեր մետաքսն են նյութել,  
 Ներկը շինված և մումիայի հյութից,  
 Վոր այն վհուկը կույս աղջկների սրտից եր քամել.

ԴԵՁԴԵՄՈՒԱ

Իսկապէս, ճիշտ եւ

ՕԹԵԼՈՅ

Ամենաճիշտը,  
 Հետևաբար տես, վոր շատ լավ պահետ

ԴԵՁԴԵՄՈՒԱ

Ցերանի՛ լերենք տեսած չլինելին

ՕԹԵԼՈՅ

Հ՞ը, ինչժւ, ի՞նչ կատ

ԴԵՁԴԵՄՈՒԱ

Ինչժւ յես խոսում այնպես ցնցըված և այնպես արագ:

ՕԹԵԼՈՅ

Կորե՛լ եւ գնացե՛լ ասմ, վժրտեղ եւ

ԴԵՁԴԵՄՈՒԱ

Ցերկինքը փրկեւ

ՕԹԵԼՈՅ

Ի՞նչ ես ասում դու

ԴԵՁԴԵՄՈՒԱ

Վիշ, վիշ, չե կորել. բայց դիցուք կորեր:

ՕԹԵԼՈՅ

Ինչպէս:

## ԴԵՋԴԱՍՊՈՆԱ

**Ասում եմ՝ չե կորել**

ՕԹ-ԵԼ.Յ

**Դնա բեր տեսնեմ:**

## ԴԵՋԴԱՍՊՈՆԱ

**Կարող եմ, տեր իմ, բայց վոչ թե հիմա:**

**Այդ ել մի խաղ և միջնորդությունըս մերժելու համար  
ենդրում եմ թույլ տուր, վոր կասսիռն յնտ գա:**

ՕԹ-ԵԼ.Յ

**Թաշկինակը բեր, սիրաըս վատ բան և նախագուշա-  
կում:**

## ԴԵՋԴԱՍՊՈՆԱ

**Համի, լով, նրա պիս ընդունակ մարդու դու չես հան-  
դիպի:**

ՕԹ-ԵԼ.Յ

**Թաշկինամկը:**

## ԴԵՋԴԱՍՊՈՆԱ

**Ենդրեմ խոսիր ինձ կասսիռյի մասին:**

ՕԹ-ԵԼ.Յ

**Թաշկինամկը:**

## ԴԵՋԴԱՍՊՈՆԱ

**Մի մարդ, վոր իր բախտն ամեն ժամանակ**

**Հիմնել և ընդմիշտ քո սիրո վրա,**

**Վոր վտանգներիդ ընկեր և յեղել...**

ՕԹ-ԵԼ.Յ

**Թաշկինամկը:**

## ԴԵՋԴԱՍՊՈՆԱ

**Տշմարիտն տաեմ՝ դու յես մեզավոր:**

ԱՐԵՎԻՆ

## Հեռացիր!

Դուրս և գնում

ԱՄՐԻՒԹ

Խանդոս մի մարդ չէ:

ԴԵՋԴԱՄՈՆԱ

Այսպիս բան տռաջ յես չեյի տեսելի

Ապահովորեն կա մի հրաշալիք թաշկինակի մեջ,

Սաստիկ դժբախտ եմ, վոր կորցը ել եմ:

ԱՄՐԻՒԹ

Մեկ յերկու տարում անկարելի յե մարդկանց ճանաչել.

Այրերն բոլորն ել ստամոքաներ են,

Մենք ել բոլորս ել կերակուրներ ենք.

Ուտում են նրանք մեզ ազահորեն,

Իսկ յերբ կշտանան՝ յետ են փսխում մեջ:

Նալիք, կասսիոն և ամուսինը:

Մանօւմ են Կասսիոն յեվ Յազոն

ԱՐԵՎ

Ուրիշ ճար չկա, տիկինն ե մի այն, վոր կարող ե անել.

Ո՛ յերջանկություն, ահա, մոտեցիր, աղաջիր նրան:

ԴԵՋԴԱՄՈՆԱ

Ի՞նչ ե, կասսիոն, ի՞նչ նոր բան ունես:

ԿԱՍՍԻՈՆ

Հին աղաջանքս ե, տիկին, խնդրում եմ,

Վոր ձեր աղդեցիկ միջնորդությունով

Կարենամ նորից յես կանք ունենաւ.

Վոր կրկին շահեմ այն մարդու սերը,

Վորին իմ սրտի բոլոր զորությամբ մեծարել եմ միջաւ

Ել շեմ սպասի՛ Յեթե իմ սեղքը այնքան մահացու  
տեսակներից ե,  
Վոր վոչ իմ անցյալ ծառայությունը, վոչ ներկա վիշտը,  
Վոչ ել ապագա անձնվիրության մտադրությունը  
Չին կարող այլես յետ գնել կրկին նրա շնորհը՝  
Այդ իմանալն ել զահ և ինձ համար,  
Վորովի իմ բախտին համակերպելով՝  
Այլ ճամբա բռնեմ և շնորհ մուրամ իմ ճակատագրից՝

## ԴՆՁԴԱՄՄՈԽԱ

Ավմդյ յերիցըս ազնիվ Կասսիո,  
Զատադովանքըս աններդաշնակ ե.  
Իմ տերը տերս չե.  
Յեթե գեճքով ել նա այնպես փոխվեր՝ ինչպես բնույ-  
թով՝

Նրան տեսնելիս չեյի ճանաչի,  
Յերանի՛ ինձ ել ամեն սուրբ վողի այնպես թևարկեր,  
Ինչպես քեզ համար յես բոլոր ուժով բարեխոսեցի,  
Յեվ թիրախ դարձա նրա բարկության իմ խիզախ  
խոսքով.  
Մի քիչ համբերիր, ինչ վոր կարող եմ կանեմ քեզ համար,  
Յեվ շատ ավելի քան ինքս բնձ համար կը հանդգնեյի.  
Թող դա քեզ բավել

## ԵԱԳՈ

Տերըս բարկանմա:

## ԵՄԻԼԻԱ

Հիմա դուրս դնաց և անտարակույս խիստ վրդովված եր:  
ԵԱԳՈ  
Կարելի՛ բան ե, վոր նա բարկանա. ինքըս տեսել եմ

Յերբ թնդանոթը ողն եր թոցնում նրա շարքերը,  
Յեղ, գեղի նման, կարծես թե նրա հենց գրկի միջից  
ծրեց սեփական նրա յեղըորը. և նմ բարկանաւ  
Պետք և ուրեմն մի մեծ բան լինի. գնամ նրա մռա.  
Թե բարկացած եւ ուրեմն մի բան կա:

## ԴԵՇԴԵՄՈՆԱ

Քնա, խնդրում եմ, (Յազօն զնում ե)՝  
Պետք և պետական մի սեծ գործ լինի  
Կամ մի վորես լուր Վենետիկից,  
Այստեղ Կիպրոսում յերեան գալով  
Նրա ջինջ միտքը պղտորած լինի.  
Յեզ միշտ ալսպիսի պարագաներում  
Մարդիկ սովոր են մաղձները թափել փոքրերի վրա,  
Թեև մեծները լինեն առարկա.  
Միշտ ել այլպես եւ բավ ե, վոր մի քիչ մեր մատը  
ցավի,  
Յեզ մեր մյուս առողջ անդամներին ել ցավ կը հաղորդե:  
Վճչ, պիտի մտածել մարդիկ աստված չեն,  
Վճչ ել նրանցից այսպիսի հարդանք և սեր սպասենք,  
Վորպես վայել ե նոր հարսնացուին:  
Անարգիր ինձ շատ, Եյիլիա, վոր յես, անպետք ռադա  
միկըս,  
Հոգում մեջ նրան անսիրության մեջ զրադրում եյի  
Այն ինչ տեսնում եմ, վոր յես վկային կաշառել եյի,  
Յեզ իզուր եյի նրան մեղադրում:  
ԽՄԻԼԻԱ.

Աղոթենք Սատծո, վոր լինեն միայն պետական գործեր,  
Ինչպես կարծում եք, վոչ թե մի կարծիք, նախանձի  
մի խաղ  
Զեղ վերաբերող:

ԴԵՇԴՆՍՊՈԱԱ

Ավագ իմ որը, յես յերբեք նրան առիթ չեմ տվեր  
ՆՄԻՒՅԱԱ.

Բայց խանդոտ վողուն անմեղությամբ չեք հան-  
գտացնի.

Առիթից չե, վոր խանդոտ են գառնում,  
Խանդոտ են նրանք, քանզի խանդոտ են,  
Դա մի հրեշ ե, ինքնիրեն սերվում, ինքնիրեն ծնվում։  
ԴԵՇԴՆՍՊՈԱԱ

Տերն հեռաւ պահի այդ հրեշին հոգուց իմ Ոթելլոյի։  
ՆՄԻՒՅԱԱ.

ԱԺԵՆ, տիրուհիս։

ԴԵՇԴՆՍՊՈԱԱ

Գնամ, վնտուեմ նրան։  
— Կասսիս, դու. այստեղ մի քիչ զրունակ,  
Յեթե յես նրան արամադիր զանեմ  
Նորից քո դործը մեջտեղ կը բերեմ,  
Յեզ վերջին ճիզըս դործի կը դնեմ, վոր հաջողացնեմ։  
ԿԱՍՍԻՍ

Ենորհապարտ եմ ձեր աղնվության։  
Դեզդեմոնան յեվ Սմիլիան զնում են,  
Մենում ե Բիանման։  
ԹԱԱՆՔԱ

Աստված քեզ պահե, բարեկամ կառախու։  
ԿԱՍՍԻՍ

Գործդ ի՞նչ ե այստեղի  
Ինչպես ես դու, իմ չքնաղ Բիանքա.  
Ծիշտ վոր, քաղցըս սեր, քեզ եյի գալիս։

---

ԹԱՌԱՎԱՐ

Յես ել գնում եյի քո բնակարանը.

Այս բնչ ե, Կասսիո, մի շաբաթ չըդմը յոթն որ ու  
գիշեց.

Ութը քսան ժամ և ութն ել վրան:

Յեվ սիրականից հեռու ժամերը

Ութը քսան անգամ զանդաղ են, քան թե ժամա-  
ցուցիցի վրա:

Տաղտկալի հաշիվ,

ԿԱՍՏԱՅ

Ներիր, Բիանքա,

Բոլոր ժամանակ կապարե խոհեր չոքել են վրաս,

Բայց հիմա այնքան շարունակ կզամ, վոր տեղը լցնեմ,  
Քաղցրիկ Բիանքա

Տալիս ե նրան Դեզիեմոնայի քաշինակը  
Արտանկարիր բանվածքն ինձ համար:

ԹԱՌԱՎԱՐ

Վորտեղից ե այս, Կասսիո, անպատճառ մի հիշատակ ե  
Ավելի նոր մի բարեկամուհուց.

Ահա զգալի բացակայությանդ պատճառն եմ զգում  
Բանն այնանդ հասագի Լավ, լավ:

ԿԱՍՏԱՅ

Գնա, կին.

Նետիր քո հիմար կասկածանքները բերանն այն դեմի,  
Վորից վերցրել ես, Հիմա խանդմամ ես,

Վոր մի սիրուհուց մի հիշատակ եւ

Վիշ, հավատմ ինձ, չքնաղ Բիանքա:

## ԹԻԱՆՔԱ

**Հապա մւմն ե սաս**

ԿԱՍՏՈՒՈ

Վկոչինչ չը գիտեմ, սեյնակումս զտատ

Սրբա բանվածքը ինձ դուք ե գոլիս.

Նախ քան յետ ուղեն — և հաստատ գիտեմ, վոր կդան  
կուզեն,

Կուղեյի մեկը արտանըկարել, Ա՛ռ ինքըդ արա  
իսկ այժմ հեռացիր:

## ԹԻԱՆՔԱ

**Հոռանմմ, ինչմա**

ԿԱՍՏՈՒՈ

Զորապետին եմ սպասում այտեղ,

Ինձ համար լավ չե, և չիմ կամենում,

Վոր նա ինձ այտեղ կոտղ հետ տեսնեւ:

## ԹԻԱՆՔԱ

Ինչմւ, խնդրում եմ:

ԿԱՍՏՈՒՈ

Վոչ վորովհետեւ Ել չեմ սիրում քեզ:

## ԹԻԱՆՔԱ

Բայց ինձ չես սիրում, խնդրեմ մի քիչ տեղ ընկերաց  
ցիր ինձ:

Ասա, կը տեսնմմ շուտ քեզ գիշերը:

ԿԱՍՏՈՒՈ

Միայն մի քիչ տեղ կը կարողանամ քեզ ընկերանաւ,  
Ծայտեղ եմ սպասում, բայց շուտով կը գամ:

## ԹԻԱՆՔԱ

Շատ բարի, իսկ յես ողետք ե հարմարվեմ հանգամանք  
ներին:

Դնում եմ

ԱՐԱԿԱՆ ԶՈՐՅՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Կիոյրոս, գոյակի ռառչ  
Մանում են Որելլոն յել Յազմ

ՅԱԿՈ

Այդպիս եք կարծում:

ՕԹԵԼԼՈ

Կարծում. Յազ:

ՅԱԿՈ

Համբուրն գաղտնի:

ՕԹԵԼԼՈ

Արգելված համբույր:

ՅԱԿՈ

Կամ մերկ, անկողնում, իր սիրածի հետ,

Մեկ ժամ, կամ ավել, առանց վատ մտքի:

ՕԹԵԼԼՈ

Մերկ, անկողնում, առանց վատ մտքի՝

Կեղծագորություն սատանայի դեմ:

Նրանք, վորոնց միտքն առաքինի յե, բայց այդ անում են,

Սատանան նրանց առաքինությունն ուզում ե փոքձել,

Նրանք՝ յերկնքի:

## ՏԱՐՅՈՒ

Թե վոչինչ չանեն՝ ներելի մեղք ե.

Բայց յերբ կնոջս մի թաշկինակ տամմ...

00-Ե1.3.0

## Հետմա

## ՏԱՐՅՈՒ

Հետո այն, տեր իմ, վոր դա տիկնոջն ե,

Ուրեմն իր ինչքը նա կարող ե տալ հւմ վոր կամենաւ:

00-Ե1.3.0

Յեվ իր պատեղի պաշտպանն ել ինքն ե.

Կարմաղ ե տալ այդ մի ուրիշ մարդու:

## ՏԱՐՅՈՒ

Նըրս պատեղը մի եյություն ե, վոր չի տեսնվում,

Հաճախ թզում ե ունեն, բայց չունեն:

Բայց թաշկինակը...

00-Ե1.3.0

Յերկինքը վկա, յերանի՛ թե յես մռոցած լինեյի.

Դու ասում եյիր — մ, դա գալիս ե իմ մտքի վրա

Խնչուս ազուավը մի վարակված տան կտուրի վրա՝

Իրմէ բոթաբեր ամենքի ճամար

Դու ասում եյիր, վոր թաշկինակը նրա ձեռի՛ն եր...

## ՏԱՐՅՈՒ

Այս, հետո լինչւ

00-Ե1.3.0

Դա շատ լավ բան չեւ

## ՕՐԴՆՈՒԹՅՈՒՆ

**Իսկ ի՞նչ կանելիք,**

Թե ասելի՞ տեսել եմ նրան քեզ դավաճանելիս,  
Լսել եմ նրան, վոր առում եր թե — կան սրբկաներ,  
Վորոնք հենց իրենց հետապնդումով,  
Կամ մի սիրուհու ինքնակամ տենչով,  
Նրանց խարելուց կամ թե գոհացում բաշխելուց հետո՝  
Անկարելի յե, վոր չը պարծեւան:

## ՕՐԵԱԼՈՒԹՅՈՒՆ

**Մի բան ե ասել**

## ՕՐԴՆՈՒԹՅՈՒՆ

Այս, ասել ե, բայց վստահ յեղեք,

Ինչ վոր ասել ե, կերպվի, վոր սուտ եւ

## ՕՐԵԱԼՈՒԹՅՈՒՆ

**Յեկ ի՞նչ ե ասել**

## ՕՐԴՆՈՒԹՅՈՒՆ

Թե նա արել ե — չը զիտեմ թե ի՞նչ:

## ՕՐԵԱԼՈՒԹՅՈՒՆ

**Ի՞նչ, ի՞նչ**

## ՕՐԴՆՈՒԹՅՈՒՆ

**Պառկել ե...**

## ՕՐԵԱԼՈՒԹՅՈՒՆ

**Նրմ հետ**

## ՕՐԴՆՈՒԹՅՈՒՆ

**Հետը կամ վրան, ինչպես վոր կուզեք:**

## ՕՐԵԱԼՈՒԹՅՈՒՆ

**Պառկել նրա հետ, պառկել նրա վրամ... գարշելի՛ յե,**  
Թաշկինմակը... խոստովանության, թաշկինմակ...  
Թող խոստովանի և կախվի իր տված նեղության  
համար. նախ կախաղան, հետո խոստովանել. Դո-

դում եմ յիս դրանից։ Բնությունը չեր պահի  
իրեն այսպիսի մոայլ կրքով առանց վորեւ  
հրահանգի, Բատերը չեն, վոր ինձ այսպես  
ցնցում են, վահ, քիթ, ականջ, շրթունք, կարելի՞  
բան ե. խոստովանություն, թաշկինակ... ուստ  
առնաւ (Ընկնում ե զղաձգուրյան մեջ)։

ՅԱԴ

**Ներդործիք**

Ներդործիք, իմ գեղ, այսպես են բանում զյուրախար-  
ներին.

Յել շատ պատվական և մաքոք կանայք հենց այս  
ձևով ե,  
վոր թեհ անմեղ՝ խայտառակվում են։  
Հեյ, եհեյ, տեր իմ, եհեյ, ասում եմ, Ոթելո, տեր  
իմ։

ՄՅԱՅԻ և Կասպիոն

Ի՞նչ կա, Կասպիու

ԿԱՍՊԻՈ

Ի՞նչ և պատահել

ՅԱԴ

Տերը ընկել ե լուսնոտության մեջ,

Յերկրորդ անգամն ե, իսկ առաջինը յերեկ պատահեց։

ԿԱՍՊԻՈ

Քունքերը շփիր։

ՅԱԴ

Վեչ, զգույթ յեղիք։

Գետք ե տագնապը հանգիստ անց կենա,

Թե վոչ բերանը կը փրփրոտի և հետզհետե

Ալնկնի վայրենի կատաղության մեջ։

Ահա, շարժվում ե. գնա մի բռպե և հեռու կեցիր.

Այժմ ուղիքի կդա. յերբ նա դուրս գնա՝

Մի մեծ բանի վրա կը խոսեմ քեզ հետ:

Կասովոն գնօւմ ե

Ի՞նչպես եք, տեր իմ, չըլինի՛ գլուխ վիրավորվել եք:  
ՈՒՆԿԱԾՈ

Մաղրմւմ ես դու ինձ:

ՅԱԴՅՈ

Ես ձեղ ծաղրեմ. վհչ, յերկի՞նը վկա:

Տեր անբախտության տղամարդու պես պետք ե դիւ-  
մանաբ:

ՈՒՆԿԱԾՈ

Կոտորով մարդը հրեշ ե և գաղան:

ՅԱԴՅՈ

Ուրեմն բազմամարդ մի մեծ քաղաքում շատ գաղան-  
ներ կան,

Են շատ կիրթ հրեշներ:

ՈՒՆԿԱԾՈ

Են խոստովանեց:

ՅԱԴՅՈ

Իմ բարի տերըս, յեղեք տղամարդ:

Խորհեցեք՝ ամեն մորուավոր մարդ, վոր լծի տակ ե,

Կարող ե քաշել նրւյն լուծը քեզ հետ:

Միլիոն մարդիկ կան այժմ կենդանի,

Վոր ամեն դիշեր պառկում են իրենց պիղծ անկող-  
նի մեջ:

Յեզ յերդում կանեն, վոր զա իրենց և միայն սեփառ  
կան:

Իսկ ձեր պարագան ավելի լավ է,  
Ո՞ դժոխային շարախնդություն,  
Ո՞ չար սատանի զերագույն հեղնանք,  
Մի պորնիկ գդիել անհոգ անկողնում,  
Յեզ առաքինի համարել նրան,  
Վահ, թող գիտենամ, և գիտենալով իմ ինչ լինելը  
Կիմանամ թե նա ինչ պետք և լինի

ԱՊ-ԱՅ.Յ.Յ

Ո՞, դու խելսք ես, տարակույս չկա:

ՅԱԿՈ

Դուք հեռու գնացեք մի քանի ըռպեր,  
Յեզ համբերությամբ փակեցեք դուք ձեղ ականջ դը-  
նելով:  
Յերբ վոր քիչ առաջ դուք այստեղ վշտից վայր ընկել  
եյիք—

Մի կիրք ամենից անվայելը այսպիսի մարդու—  
Կասսիոն ներս յեկավ, յես նրան հեռացրի.  
Յեզ ձեր ուշաթափ լինելու մասին մի ըան հնարեցի,  
Հետո խնդրեցի, վոր շուտով յետ զա ինձ հետ խոսե-  
լու,  
Նա ել խոստացավ: Դուք մի տեղ մաեք և մտիկ աը-  
վեք  
ինչ ծաղր, ինչ ծանակ և ինչ ակնհայտ արհամար-  
հանք կա

Նրա յերեսի ամեն մի կետում:

Յես պատմել կտամ պատմությունը նոր—  
Ոքելլո—10

Թե հեր և բնչպես, քանի որ տռաջ և վծրքան հաճախ  
Նա ձեր կնոջ հետ պառկել և արդեն և պառկելու յեւ,  
Ասում եմ՝ տեսեք նրա ձևերը, Ո՛ւ. համբերություն.  
Ենթե վոչ կասեմ՝ դուք ամբողջովին մաղձ եք և վոչ  
մարդ

## ՈԹԵԱՀՅ

Լսմում ես, Յազո. համբերության մեջ խորամանկ կլին-  
նեմ,  
Բայց, լսմում ես ինձ, ամենից արնուա-

## ՅԱԴԱ

Սակայն ամեն բան իր ժամանակին. կը քաշվեք մի  
կողմէ:  
Որելիսն հոգվում ե

Հիմա կասսիոյին Բիանքայի մասին կը հարցուփոր-  
ձեմ.

Մի տանտիրուհի, վոր վաճառեռով իր տենչանքները:  
Գնում ե իրեն հաց ու հազուատներ, մի խեղճ արա-  
բած,

Վոր խենթանում ե կասսիոյի վրա:

Պոռնիկի բախտն ե զատերին խորժել և խարվել մեկից.  
Կասսիոն լսում ե յերբ նրա մասին

Զի կարսղ զապել իր գել ծիծաղ :

Ահա զալիս ե,

Յերբ վոր սա ժպտա, Մամբը իր սժվի,

Նրա անհաջիվ խանդուությունը

Գետք և կասսիոյի քմծիծաղներին, բեթե ձեւերին

Թյուր մեկնություն տաւ:

Վերամանում և Կասսիօն

Տեղակալ

Հիմա ի՞նչողո՞ս եք:

ԿԱՍՍԻՕՆ

Եւ ավելի վատ, յերբ ինձ կանչում ես հենց այն տիտո  
դոսով,

Դորից զրկվելը մահ և ինձ համար:

ՕԱԳՈ

Ուժեղ խնդրեցեք Դեղդեմոնային

Յեզ վստահ յեղեք ձեր գործի մասին:

Ցածր խոօսլով

ՅԵԹԵ Բիանքայից կախված լինեք դա՝

Ի՞նչ շուտ ձեր գործը կարդի կը դրվնը:

ԿԱՍՍԻՕՆ

ԽԵՂԾ վողորմելի:

ՕԹԵԼՈ

(Մեկուսի) Տես ի՞նչպես և նա արդեն ծիծաղում:

ՕԱԳՈ

Մի կին չեմ աեսել վոր մարդու վրա այնքան խիստ  
թենա:

ԿԱՍՍԻՕՆ

ԽԵՂԾը, կարծեմ թե սիրում և նա ինձ:

ՕԹԵԼՈ

(Մեկուսի) Հաղիվ և հերքում և ծիծաղում եւ:

ՅԱԳՅՈ

**ՂԱՌԱՄ ԵՐ, ԿԱՍԱԽՈՒ**

ՅԹԵՎԵԼՅՈ

(ՄԵԼՈՒՍԻ) Հիմա ստիպում ե, վոր նորեն պատմե՞ւ այդ-  
պես լավ, չառ լավ:

ՅԱԳՅՈ

Լուր ե տարածում, վոր դուք նրա հետ պիտի պսակ-  
վեք-

**ՆՊԱՏԱԿ ՌԵՆԲՔԻ**

ԿԱԾՍԻՈ

**ՀԱՅ, ՀԱՄ, ՀԱՅՏ**

ՅԹԵՎԵԼՅՈ

(ՄԵԼՈՒՍԻ) Հաղթանակմամբ ես, հռովմայեցի, հաղթանա-  
կմամբ ես:

ԿԱԾՍԻՈ

Ես նրա հետ ամուսնանամ, ի՞նչ, մի հասարակ կին, ի  
սիր Աստուծո, դեպի իմ խելքը մի քիչ գթություն ունե-  
ցիր. մի կարծիք ինձ մտքով անառողջ. հմ, հմ հմ:

ՅԹԵՎԵԼՅՈ

(ՄԵԼՈՒՍԻ) Այդպես, այդպես, այդպես, այդպես, նրանք  
կծիծաղեն, վորոնք շահում են:

ՅԱԳՅՈ

**ՀԱՎՈՅՈՒՄ, ԼՈՒՐ Ե ՏԱՐԱԾՎԱԾ, ՎՈՐ ԴՈՒՔ ՆՐԱ ՀԱՄ Մ-  
ՄՈՒՄՆԱՆՈՒՄ ԵՔ:**

ԿԱԾՍԻՈ

**ԾԻԶԱՆ ԹԱՄ, ԽՆՋՄԵՄ:**

## ԱՐԴՅՈՒՆ

Անաղնիվ մարդ եմ, յիթե սուստ ասեմ:

ԱԲ-ԱՅ.Յ.Յ

(Մեկուսի) Փայտանշնչը եք ինձ. լավ ե, շատ լավ:

ԿԱԼՍՍԻՑ

Դա այդ կապիկի տարածածը կը լինի. Նա համոզած ե, վոր յես նրա հետ ամուսնանալու յեմ՝ իր սեփական սիրուց և ինքնահավատությունից և վոչ իր խոսութից:

ԱԲ-ԱՅ.Յ.Յ

(Մեկուսի) Յազո՞ն ինձ նշան ե անում հիմա կըսկսի պատմությունը:

ԿԱԼՍՍԻՑ

Հենց հիմա տյատեզ եր, նա ինձ հետապնդում ե առմինտեղ. Անցյալ որ ծովեղերքին մի քանի վենետիկց յիների հետ եյի խոսում, ահա զավսե այս խաղավիքը և այսպես ընկնում ե իմ վղին:

ԱԲ-ԱՅ.Յ.Յ

(Մեկուսի) Ճշալով ոմ իմ սիրելի կասսիու, լարժումն ոյդ ե ցույց տալիս:

ԿԱԼՍՍԻՑ

Այսպես կախ ընկալ, որորվեց և լաց յեղավ, այսպես քաշ և տավս և հրում ե ինձ. համ, համ, համ,

ԱԲ-ԱՅ.Յ.Յ

(Մեկուսի) Հիմա պատմում ե թե ինչպես քաջ տվեց գեղիլի իմ ննջարանը. ո, ահանում եմ քս քիթը,

բայց վոչ այն շանը, վորի առաջը պետք և քեզ նե-  
տեմ,

## ԿԱՍՏԱԾ

**Յես պետք և թողնեմ նլա ընկերակցությունը:**  
ՏԱՐՅԱ

**Ահա գալիս եւ**

## ԿԱՍՏԱԾ

Խսկ վոր ժանտակուդ, բայց անուշահոտ,

Մտնում է Բիանիան

**Ի՞նչ ես ուզում ասել՝ ինձ հալածելով:**

## ՌԴԱՆՇԱ

Սատանան և իր կինը թող քեզ հալածեն, ի՞նչ եյիր  
ուզում ասել՝ տալով ինձ այն թաշկինակը, Յես  
մի սիրուն հիմար եմ, վոր վերցրի, Արտանկա-  
րեմ նրա բանվածքը, Սարքել ես, վոր իբր թե  
սենյակումդ ես զտել և չգիտես թե ով և այնտեղ  
թողել Դա մի լիտի աղջկա ընծան կըլինի և  
յիս պետք և արտանկարեմ, Վերցրմա, տուր քո  
հաճոյակատարին, վորտեղից ել վերցրած լինես,  
յիս չեմ արտանկարի

## ԿԱՍՏԱԾ

**Ի՞նչ եւ, իմ քաղցըը Բիանքա, ի՞նչ կա:**

## ԱԹԵԱԼՅԱ

## ՄԵԼԿՈՒԾԻ

Յերկինքը վկա, դա իմ թաշկինակը պետք և զոր լի-  
նի:

---

ԹԱՎԱՐԱՐԱ

Յեթի այս գիշեր կրդաս ընթրիքի, յեկ, յեթե չես ուղում՝ յեկ, յերբ արամազիք լինես:

Գնում ե

ԱԱԴՈ

Յետեից, յետեից:

ԿԱՍՏԻՌ

Այս, պետք ե, յեթի վոչ փաղոցում կը խայտառակի ինձ,

ԱԱԴՈ

Պիտի ընթրեք այնաեղ:

ԿՅԱՋԻՌ

Այս, նպառակ ունիմ:

ԱԱԴՈ

Լավ, թերես պատեհություն ունենամ քեզ տեսնելու, վորովհետեւ կարենոր գործ ունիմ քեզ հետ խոսելու,

ԿԱՍՏԻՌ

Յեկեք, խնդրում եմ. կըդմք:

ԱԱԴՈ

Գնացնք, ել մի՛ խոսեք:

Կասսիոն գնում ե

ԱԹԵԱՌՈ

(Առաջ զալով) Ի՞նչ ձեռի սպանեմ նրան, Յագու:

ՅԱԿՈ

**Տեսմք ինչպես եր ծիծաղում իր լրբության վրա:**

ԱԹԵՆԱ

**Ո՛, Յագո:**

ՅԱԿՈ

**Տեսմք և թաշկինակը:**

ԱԹԵՆԱ

**Ի՞ննե եր:**

ՅԱԿՈ

Ձերն եր, ձեռքս վկա. և տեսնել թե ինչպես ե գնահատում ձեր այդ հիմար տիկնոջը, ինքն և տվել կասսիոյին և նա ել տվել ե իր պոռնիկին:

ԱԹԵՆԱ

**Յես կուզենայի ինը տարի շարունակ սպանել նրան՝ կասսիոյին — Մի գեղեցիկ կին. մի չքնաղ կին: մի քաղցր կին:**

ՅԱԿՈ

**Լավ, դուք այդ պիտի մոռանաք:**

ԱԹԵՆԱ

**Այս, թող փտի ու փչանա, դժոխք պետք ե գնա այս գիշեր, վորովհետև նա չպիտի ապրի. վոչ, սիրոս կտրել ե քար. խփում եմ սրտիս, ձեռքս ցավում եւ**

**Ո՛, աշխարհը չունի ավելի քաղցր մի արարած. նա կարող եր պառկել մի կայսրի կողքին և ղեկավարել նրա գործերը:**

## ՏԵՂԻ

Վահակ, դա ձեր ճանոսպահը չեւ  
ԱԹԵՆԱ, ՅԱ

Կախել նրան. յիս առում՝ եմ այն՝ ինչ վոր նա եւ,  
— այնքան նըրին իր ասեղի հետ, — հըաշալի յերա-  
ժիշտու Ո՛, նա կարող է յերգով արջից դուրս բերել  
վայրենությունը — Ո՛ ինչ բարձր և առցուն իմացա  
կանությունն և հնարադիտությունն,

ԱԱԴԱ

Հենց գրանցով ավելի վատ ե նա:

ԱԹԵՆԱ, ՅԱ

Ո՛, հաղար, հաղար անդամ, և միաժամանակ ինչ աղ-  
նիվ հասկաւթյունն Այս, չափազանց աղնիվ,

ԱԹԵՆԱ, ՅԱ

Դա ստույգ ե, — բայց ափսոսանքը դրա, Յաղո,  
ափսոսում եմ, Յաղո, ափսոսում եմ:

ԱԱԴԱ

Ցեթե դուք այնքան սքանչացած եք նրա անդգա-  
մության վրա՝ իրավունք տվեք նրան մեզանչելու.  
յեթե դա քեզ չի մնասում, վոչ վոքի ել չի մնասում:

ԱԹԵՆԱ, ՅԱ

Կը ջարդեմ նրան փոքր բեկորների. — խայտառակթէ  
ինձ:

ԱԱԴԱ

Ո՛, գարշելի յե նրա կողմից:

ԹՐԵՎԱՅՐ

**Իմ սպամայի հետո**

ՏԱԿՈ

**Դա ավելին գարշելին յեւ**

ԹՐԵՎԱՅՐ

**Ինձ համար մի քիչ թույն դաիր, Յագո. այս գիշեր.** —**Են չեմ ուղում բացատրվել նրա հետ, յեթե վոչ  
նրա մարմինը և գեղեցկությունը կը դինաթափեն  
իմ հոգին, այս գիշեր, Յագո.**

ՏԱԿՈ

**Թույնով մի անեք. Խեղդեցեք նրանիր անկողնու մեջ,  
հենց այն անկողնում, վորը պղծել և նա:**

ԹՐԵՎԱՅՐ

**Լավ, լավ. դրա արդարությունն ինձ գուք ե գոլիս.  
Շատ լավ!**

ՏԱԿՈ

**Իսկ կասսիոյի վերաբերմամբ — թույլ տվեք ինձ լինեա-  
լու նրա զերեզմանափորը, զուք ավելին կը լսեք  
կհս գիշերին:**

ԹՐԵՎԱՅՐ

**Հրաշալի՛ (փողերի ձայն դրսից). Բնչ փողահարություն եւ:**

ՏԱԿՈ

**Ապահօվաբար մի լուր զենետկից, Լողովիկոն ե, դքսի  
կողմից լեկած. տեսեք, ձեր կինն ել հետն եւ****Մանում են Լողովիկօն, Դևզդեմոնան յել****Ապահօվավորներ**

Հ.Յ.Պ.Պ.

**Աստված պահե ձեղ, հարգու զորապետ,**

ԱԹԵՆԻԱՆ

իմ ըուլոր սբառով,

1,07-09.

Դուքսը և բոլոր սենատորները  
 Վենետիկի քաղաքի՝ վոդչունում են ձեզ:  
 Տալիս և մի ծրագ  
 ԱԹԵՆԻԱՆ

Յիս համբուրում եմ նրանց շնորհի այս հաղորդիչը,  
 Բաց և անում ծրաբը յեվ կարգում  
 ՊԵՏՐՈՍԻԱՆ

Խոչ նոր լուր ունիք, բարի աղջական իմ կոդովիկու-  
 թայո  
 Շատ ուրախ եմ, վոր ձեղ տեսա, սինյոր,  
 Բարի յեկաք դուք մեր կիպրոս կղզին  
 1,07-08.

Շնորհակալ եմ. ինչողնո և դգում տեղակալ Կասսիոն-  
 թայո

Ապրում ե, տեր իմ,  
 ՊԵՏՐՈՍԻԱՆ

Աղջակմն, նրա և ամուսնուս մեջ մի գժառություն կա-  
 բալց դուք բոլորը կարդի կը դնեք:  
 ԱԹԵՆԻԱՆ

Դրան վաստան եա  
 ՊԵՏՐՈՍԻԱՆ

Տեր իմ,  
 ԱԹԵՆԻԱՆ

(Կարգում ե) «Այս բանն անելու չըձախողեք...»  
 1,07-08.

Նա ձեղ չկանչեց. նա թուղթն և կարդումէ  
 Մեր դորապետի և Կասսիոյի միջև մի գժառություն կա-

## ԴԵՁԴՆԵՄՈՒԱ.

Չափաղանց անբախտ մի պատահար եւ դա,

Եատ բան կանեյի, վոր հաշտեցնեյի՝

Այն սիրո համար, վոր տածում եմ յես գեղի կասսիռն:

ՈԹԵԼԵՐ

Կը լակ ու ծծմբմբ

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ

ՏԵՐ իմ:

ՈԹԵԼԵՐ

Խելքդ պլմւիսդ եւ

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ

Ի՞նչ, բարկացմծ եւ

ՀԱՇԴՈՎ,

Գուցե նամակը նրան վրդովեց,

Կարծեմ թե նրան հրահանդ եւ տրված վենետիկ դառն  
Նալ՝

Տալով կասօիսյին իշխանությունը:

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ

Հավատացեք ինձ, յես շատ ուրախ եմ:

ՈԹԵԼԵՐ

Իրմիզ:

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ

ՏԵՐ իմ:

ՈԹԵԼԵՐ

Ուրախ եմ, վոր քեզ դժված եմ տեսնում:

ԴԵՁԴՆԵՄՈՒԱ

Յեղ ինչու համար, քաղցըր Ոթելու:

ՈԹԵԼԵՐ

Դեղ:

Խփում եւ Դեղդեմօնային

## ԴԵՇԴԱՆՄՈՒԽԱ

Այսպիսի բանի արժանի չելի:

Ա, ԱՐԱՐԱԿ,

Տեր իմ, Վենետիկում զհչ վաք չըպիտի հավատար սրան,  
Թեկուղ յերդվելի, վոր ինքս ևմ տեսնէ դա չափից  
դուքս եւ

Գետք եւ գարմանել, նա լաց եւ լինում:

ԱԲ-ԱՅ. Ա. Ա

Ո՞ դեղ, ո՞ դեղ, դեղ:

Յերկրի արգանդը յեթե հղանար կնոջ արցունքից՝  
Ամնն կաթիլից մի կոկորդիլու կը ծնվեր: Կոքից,  
Աչքիս չերեսաւ:

## ԴԵՇԴԱՆՄՈՒԽԱ

Չեմ մնա, յերը դա անախորժ եւ քեզ:

Աւզում եւ զնալ

Ա, ԱՐԱՐԱԿ,

Մի հնագանդ կին:

Այսաշում եմ յես ձերդ հարդության:

Յետ կանչել նըան:

ԱԲ-ԱՅ. Ա. Ա

Տիկին:

## ԴԵՇԴԱՆՄՈՒԽԱ

Տեր իմ:

ԱԲ-ԱՅ. Ա. Ա

Ի՞նչ եք կամենում նըանից, տեր իմ:

Ա, ԱՐԱՐԱԿ,

Ո՞վ, յմս, զորապես:

## ԱՐԵՎԻՆԸ

Այս, ուղեցիք նրան յետ կանչեմ  
 Նա լավ կարող ե դառնալ, յետ դառնալ և նորեն գնալ  
 Յեվ նորեն դառնալ, և կսրողելալ, աեղ իմ, այս, լալ,  
 Յեվ շատ հնազանդ ե՝ ինչպիս ասում եք, հնազանդ,  
 շատ հնադանդ  
 —Շարունակիր լար — Գալով այս խնդրին, սրբելի  
 տեր, իմ  
 —Ի՞նչ լավ նկարված վշտահարություն —  
 Ինձ յետ են կանչել — Դնա, քիչ հետո քեզ կ սնչել  
 կտամի  
 —Տեր իմ, հնազանդ եմ այս հրամանադրին,  
 Յեվ շուտ վենետիկ կը վերադառնամ — Դնա, հեռացնիր,  
 "Նեղեմօնան գիում ե  
 Կասսիոն կը մնա իւ պատոնի մեջ,  
 Յեվ շնորհ արեք, տեր իմ, ալս գիշեր միասին ընթ-  
 բիւլու:  
 Բարով եք յեկել եիսլրոս, աղնիվ տեր:  
 —Այծեր, կապիկներ...  
 "Խուր ե զնում

## ՀԱՅՈԱ

Սմ յե ուրեմն այն աղնիվ Մավրը,  
 Վարին վողջ Սեսատն ամենալարող մարդն ե Համա-  
 րում.  
 Սմ յե այն հոգին, վորին մհչ մի կերք չի կարող ցնցել,  
 Վորի ամրակուռ առաքինությունը  
 Դիպվածի նետից կամ բախտի սլքից  
 Վհչ խաղխղվել ե և վոչ թափանցվել,

## ԱՅՆՈ

**Սաստիկ փոխվել եւ**

1,073.04.

**Խելքը գլխիմն եւ, թեթևութիկ չեւ,**

ԱԱՀԱ

**Այն եւ, ինչ վոր եւ, թերեւս չասեմ իմ դաղափարը:**  
**Ինչ պետք եւ լիներ — յեթե նա այն չեւ, վոր պետք եւ**  
**լիներ —**

**Տա՛ Սատված՝ լիներ**

1,073.04.

**Ի՞նչ, ինձիք խփել,**

ԱԱՀԱ

**Ճիշտ եւ, լավ բան չեր, սակայն յերանի՛ հաստատ լինելի,**  
**վոր այդ խփելը ամենից վասն երս**

1,073.04.

**Սովորությանն եւ**

**Թե այս նամակը այդպիս ներզործեց նրա արյան վրա,**  
**Ցեվ նոր սակածեց այս թերությունը:**

ԱԱՀԱ

**Ավագ, մ, ավագ!**

**Պարկեշտություն չեւ իմ կողմից ասել թե ինչեր դիւնեմ,**

**Ինչեր եմ տեսելու ինքներդ նրան շուտով կը տեսնեք,  
 Ցեվ նրա վարքը նրան այնպես լավ կը ներկայացնե,  
 Վոր լավ եւ խնայեմ իմ ասելիքը: Ցեսեից գնացեք,  
 Ցեվ տեսեք ինչպես կը շարունակեն**

1,073.04.

**Եաւ ցավալի յեւ, վոր նրա մասին հուսախար յեղա,  
 Գուրա են զնում**

ՏԵՍԱՐԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ

*Մի սենյակ դղյակում  
Մանում եց Որելլո յևկ Նմիլիա*

ԱԹԵԱԼՈ

*Վառչինչ չես լսել ուրեմըն:*

ԱՄԻՒՆԱ

*Վառչինչ,*

*Յեվ վոչ ել լսել, վոչ ել կասկածել:*

ԱԹԵԱԼՈ

*Տեսել ես նրան և կասոլոն միաօխն:*

ԱՄԻՒՆԱ

*Բայց յես դրա մեջ վատ բան չեմ տեսել,*

*Յեվ ամեն մի վանկ, վոր շունչը նրանց մեջ փոխանցել է  
Յես ել լսել հմ:*

ԱԹԵԱԼՈ

*Յեվ նրանք յերբեք չեն փսփսացել:*

ԱՄԻՒՆԱ

*Յերբեք:*

ԱԹԵԱԼՈ

*Յեվ իրենց մոտից քեզ չեն հեռացըել*

ԱՄԻՒՆԱ

*Յերբեք:*

## ԱԹԵԼԵԱ

Բերելու համար իր հովհարը, կամ իր ձեռնոցները, կամ  
իր դիմակը..

## ԱՄԻԼԻԱ

Յերբեք, տեր իմ:

## ԱԹԵԼԵԱ

Տարորինանկ եւ

## ԱՄԻԼԻԱ

Պատրաստ եմ յերդվել, տեր իմ, վոր ձեր կինն առա-  
ջինի յի,

Դրեք իմ հոգին խարույկի վրա.

Յեթե դուք ուրիշ բան եք մտածում

Հիասցրեք ձեզնից.—դա պղտորում ե ձեր մաքուր սիրաը.

Յեթե մի սրիկա այդպիսի կարծիք ձեր գլուխն ե զբել՝

Թող վոր յերկինքը փոխարինի դրան ոճի անենքով.

Յեթե նա անկեղծ, և հավատարիմ և մաքուր կին չե,

Ուրեմն աշխարհում վճէ մի յերջանիկ ամսւախն չկա,

Յեզ նրանց կանանց ամենեն սուրբը

Կեղաստ ե՝ ինչպես զրալարտությունը:

## ԱԹԵԼԵԱ

Գնա այստեղ բեր:

Սմբիան գնում ե

Բամբական ասաց.

Սակայն սա ել մի ողարդ կավատ ե, վոր

Չի կարող սրանից ազելին տաել.

Եսրամանկ մի բող,

Փակված ու կողպած մի պահարան և գարշ գաղտնիք-  
ներին.

Յեզ այնուհանդերձ նա ծունկ կը չօքե և աղոթք կանե.

Յես տեսել եմ այդ:

Ա. ԵՐԱՄԵՆՈՒՄ Են Դեղդեմոնան յել Սմբիկան  
ԴԵՇԻՆԵՄՈՒԱ.

Ի՞նչ եք կամենում, տեր իմ:

ՈԹԵՎԼՈ

ՅԵԿ այստեղ, վառյակ:

ԴԵՇԻՆԵՄՈՒԱ.

Ի՞նչ ե քո կամքը:

ՈԹԵՎԼՈ

ԱՀՔԵՐԸ տեսնեմ. նայիր յերեսիս:

ԴԵՇԻՆԵՄՈՒԱ.

Ի՞նչ սարստիելի ֆանտազիա յե դա:

ՈԹԵՎԼՈ

(Սմբիկային)

Պաշտօնից, տիկին:

Թող զուգվողները թան առանձին և զուռը փակիր:

Թե մարդ գա՝ հազար, կամ թե հըմ արա.

Գաղանի արհեստիդ, գաղանի արհեստիդ, շնւռ, աճապարիր:

Սմբիկան գնում ե դուրս

ԴԵՇԻՆԵՄՈՒԱ.

Ահա ծնկաչոք աղաչում եմ քեզ,

Թո այդ խոսքերը լինչ իմաստ ունեն.

Յես հասկանում եմ բառերիդ միջի կատաղությունը,

Բայց վոչ բառերը:

ՈԹԵՎԼՈ

Ի՞նչու, լինչ ես դու:

ԴԵՇԻՆԵՄՈՒԱ.

Թո կինը, տեր իմ, քո հավատարիմ և անկեղծ կինը:

ՈԹԵՎԼՈ

ՅԵԿ, յերդում արա, անիժված քեզի.

Թե վոչ լինելով մեկը յերկնքից,

Դեերն անգամ քեզ կը վախնան բռնել  
Ուրեմն յերկպատիկ մեղապարտ դարձիր,  
Յերդինը թե դու առաքինի ես:

ԴԵՐԴԱՆՄՈՒԱ

Յերկինքը դիտե ճշմարիտորեն:

ՈԹ-ԵԼ, Յ. Յ.

Յերկինքը դիտե ճշմարիտորեն,  
Վոր այնքան կեղծ ես, վորքան դժոխքը:

ԴԵՐԴԱՆՄՈՒԱ

Դեոլի մամ, տեր իմ, մամ հետ, բնչպես կեղծ:

ՈԹ-ԵԼ, Յ. Յ.

ԱՌ, Դեղդեմոնա, դնա, դնա, դնա:  
ԴԵՐԴԱՆՄՈՒԱ

Ավագ սև որիս. ինչժե ես լավիս.

Յնս եմ պատճառը այս արցունքների, սիրելի աերըս:  
Յեթե պատահմամբ կասկածում եմ դու.  
Թե հորըս գործն ե քո հետ կանչվելըդ,  
Ինձ մի մեղազրի. յեթե դու նրան հավետ կորցրել ես,  
Յես ել եմ կորցրել

ՈԹ-ԵԼ, Յ. Յ.

Յեթե յերկինքը ուզեր փորձել ինձ պատուհասներով,  
Ամեն տեսակ ցավ և անարդություն տեղար մերկ գըլ-  
խիս,  
Խորասուզեմ ինձ մինչև, շրթներըս աղքատության  
մեջ,  
Դերտթյան տար ինձ և զերջին հույսըս պատրանք  
դարձնեմ,

Դարձյալ իմ հոգու մի խորշիկի մեջ  
Յես համբերության մի փոքրիկ կաթիլ դատած էլինե-  
յի.

Բայց, ավմդ, դարձնել ինձ ժամանակի մի անշարժ ար-  
ձան,

Վոր անազգանքի ամբողջ աշխարհը՝  
Իր դանդաղարժ մատովը ցույց տա,  
Լավ, յես դրան ել կը հանդուրժեյի. այդ ել լավ, շատ  
լավ.

Բայց այնտեղ, ուր սիրտս աղանդ եմ դրես  
Ուր պետք ե ապրեմ, կամ ընավ չապրեմ,  
Այն իսկ աղբյուրը, վորից ըղխում ե կյանքիս հո-  
սանքը,

Թե վոչ կը ցամքի, այնտեղից վանել...  
Կամ թե պահել այն վորպես ջրամբար զաղիք գորտե-  
րի,

Վոր այնտեղ զուզվեն և սերնդագործեն.  
Գունատվիր այստեղ, ոք համբերություն,  
Ո՞վ դու վարդաշուրթ մատղաշ քերովքե,  
Այդտեղ մռայլիր, ինչպես դժոխքը.

### ՆԵՐՆԵՄՈՒԱ

Հույս ունիմ, վոր ինձ իմ աղնիս տերը պարկեցա  
կարծում:

### ՈԹՆԱՅԱ

Ո՛, այս, ինչպես ամառվա ճանճերն սպանդանոցում,  
Վոր ձվից չելած դուգավորվում են,  
Ո՞վ դու վայրի խոտ, վոր այնպես սիրուն, նա և չքնաղ  
եմ.

Այդպես քաղցրաբույր, զգայալանքը ցավում և քեզ-  
ժուլ.

Յերանի՛ յերբեք ծնոված չվիճելիլու

ԴԵՐԴԱՄՈՒԱ.

Ավանդ, թշնչ տպեատ հանցանք եմ գործել

ԱԹ-ԿԱԼ, Ո

Այս մաքուր թուղթը, այս շքեղ գիրքը

Միթե շինված եր վըրան «բող» գրեն.

Ի՞նչ մեղք ես գործել, դործել, այ պոռնիկ, հառարա-  
կաց, ըմզ.

Թե տաեմ միայն քո արածները՝

Ամեն մի թուղթս հնոց կը դառնա,

Յեզ մոխիր կանե համեստությունը:

Ի՞նչ մեղք ես գործել. յերկինքը հոտից իր քիթն և  
խցում,

կուսինն ամոթից իր աչքն և գոցում,

Յեզ լկտի քամին, վոր հանդիտողին համբույր և տա-  
լիս,

Փախչում և յերկրի քարայրների մեջ, վոր չըսի այդ  
Ի՞նչ մեղք ես գործեմ անամփ պոռնիկ:

ԴԵՐԴԱՄՈՒԱ.

Յերկինքը վկա, դրալարտում ես ինձ:

ԱԹ-ԿԱԼ, Ո

Դու բող չեմ:

ԴԵՐԴԱՄՈՒԱ.

Յերբեք, թե քըիստոնյա եմ:

Յերե այս անոթն ամեն ապոքեն և պիղծ հողումից  
Անարատ պահեմ իւ տիբոջ համար՝  
Դո բող լինել չե, ուրեմբն բող չեմ:

ԹԹ-ԵՎՀԱ

Ի՞նչ, դու պոռնիկ չես:

ԴԱԶԴԱԵՄՈՒԱ

Վոչ. չը ՓՐԿՎԵմ:

ԹԹ-ԵՎՀԱ

Կարելի բան եւ,  
ԴԱԶԴԱԵՄՈՒԱ

Ցերկեմք, ների մեզ:

ԹԹ-ԵՎՀԱ

Ուրեմբն քեզնից ներում եմ խնդրում,  
Ցես քեզ դրել եմ այն վեճեատիկցի ճարպիկ ըսղի տեղ,  
Վոր պստկվել ե Ոթելոյի հետ—Իսկ դու, այ կնիկ,  
Վոր պաշտօն ունես հենց Սուրբ Գետրոսի ճիշտ հա-  
կառակը՝

Ցեզ պահպանում ես դժոխքի դուռը.

Վերամտնում ե Նմիլիան

Դհւ. դմւ, վերջացրինք մեր անելիքը.  
Աս փող քո քաշած նեղության համար.

Տանալին շուռ տուր և մեր գաղտնիքը լավ ծածուկ  
ողաճիր:

Դուրս ե գնում

ՆՄԻԼԻԱ

Ավագ, այս մարդը ինչեք ե կարծում:

Ինչպես եք, աիկին, միս, դուք ինչպես եք, իմ բարի  
աիկին:

ԴԱՇՆԵՄՈՒՆ.

Հավատամ կես քուն:

ԱՄԻԼԻԱ:

Սիրելի աիկին, ինչ և պատահել աիրոջը:

ԴԱՇՆԵՄՈՒՆ.

Ո՞ւմը:

ԱՄԻԼԻԱ:

Տիրոջը, աիկին:

ԴԱՇՆԵՄՈՒՆ.

Ո՞վ և քո տերը:

ԱՄԻԼԻԱ:

Նա, վոր և ձերն ե, իմ քաղցը աիկին:

ԴԱՇՆԵՄՈՒՆ.

Վաչ, յես տեր չունեմ. մի խռոխր ինձ հնոտ, Եմիլիա:  
Վոչ կարող եմ լավ վոչ ել վորնե պատասխան ունեմ,  
Քան արցունք թափել Խնդրեմ, Եմիլիա, վոր հարսա-  
նիքիս  
Եմ սավանները քաշես այս գիշեր անկողնիս վրա,  
Հիշիք. և կանչիր ամուսնուդ այստեղ,

ԱՄԻԼԻԱ:

Ի՞նչ փոփոխություն:

Դուքս ե զնում

ԴԱՇՆԵՄՈՒՆ.

Տեղն ե, վոր ինձ հետ այսպես են վարվում, այս, շատ  
տեղն ե.

Ի՞նչպես եմ պահել ինձ առհասարակ,  
Վոր ամուսինըս կարողացել ե  
Ամենափոքրիկ կտսկածը մեխել  
Ամենանվազ իմ սխալանջիս:

Վերամտնում են Նմիլիան յել Յագան  
ՏԱՐԱ

Ի՞նչ ե քո կամքը, տիկին, Ի՞նչպես եք,  
ԴԵՋԴԵՄՈՒԱ.

Չեմ կարող ասել.

Նրանք, վոր Փոքրիկ յերեխաներին ուղում են կրթել  
Այդ բանն անում են մեղմ միջոցներով՝ դյուքին դա-  
սերով.

Յեղ նա կարող եր ինձ այդպես չախել.

Համատացնում եմ յես մի մանուկ եմ, յերբ ինձ  
Հախում են:

ՏԱՐԱ

Ի՞նչ ե պատահել աղնիի տիրուհի:

ՏՄԻՒԱ

Ավաղ, Յագո, տերս նըրան բող կանչեց,

Յեղ գլխին այնպիս անարդանքներ և լուսանք թա-  
փեց,

Վոր անմեղ սիրաը յերբեք չի տանի:

ԴԵՋԴԵՄՈՒԱ

Արժանիթ եմ յես այդ անվան, Յագու

ՏԱՐԱ

Ի՞նչ անուն, տիկին:

ԴԵՋԴԵՄՈՒԱ

Այս, վոր կինդ տաց, վոր տերս ինձ տվեց:

## ԵՐԻՎԱՐԱ

Բող կանչեց նրան. մի գուեհիկ դինով  
Այդպիսի անուն չեր տա իր քածին:

ՏԱՂԻ

Յեզ բնչմւ համար:

## ԴԵՋՆԵՄՈՒԱ

Չը դիտեմ, միայն յես այնքան դիտեմ, վոք այդպիսին  
չեմ:

ՏԱՂԻ

Մի լաք, աիրուհիս, ավազ և անըախտ:

## ԵՐԻՎԱՐԱ

Մերժեց նա քանի՛ աղնավականներ,  
Թողեց հայր, յերկիր և բարեկամներ,  
Վոր պոռնի՛կ կոչվեց ինչպես լաց չլինի:

## ԴԵՋՆԵՄՈՒԱ

Ի՞նչ չար բախտն և ոտ:

ՏԱՂԻ

Շատ ամոթ նրան,  
Ինչպես նա մզվեց այս չար սխալին:

## ԴԵՋՆԵՄՈՒԱ

Յերկի՛նքը դիտե:

ԵՐԻՎԱՐԱ

Թող կախվեմ յեթե մի պիղծ սրիկա,  
Քսու, բանսարկու մի թշվառական,  
Մի յերեսատագտ, քծնող անզգամ,  
Վորեն պաշտոն շահելու համար՝  
Այս զբութանքը շահած չլինի. կտիսվեմ, թե այլ եւ-

## ՅԱԴՐ

ՖԻ, այդպիսի մարդ չըկա աշխարհում. կարելի ըան  
չեւ  
ԴԵՐԵ ՄԻՆԻ եւ թող Աստված ներին

## ՆԵՐԵՒԹՈՒԱ

Չըվանը ների, դժոխքը կրծե նրա վոսկորը,  
